

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝  
ԳՈՐԾԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Խմբագրակազմ  
Խմբագիր՝  
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՍՅԱՆ  
Լրագրող՝  
ՌՈՒԶԱՆ ՍԱՐԱԿՅԱՆ  
Լուսանկարիչ՝  
ՌԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
  
Լրատվական  
գործունեություն  
իրականացնող՝  
«Հայաստանի պետական  
տնտեսագիտական  
համալսարան»  
պետական ոչ առևտրային  
կազմակերպություն:  
  
Վկայական N 03Ա054452:  
Տրված է 06.06.2002թ.:  
  
Խմբագրության հասցեն՝  
375025, Երևան,  
Նալբանդյան փողոց 128,  
կենտրոնական  
մասնաշենք, 4-րդ հարկ:  
Հեռախոս՝ 58 93 65, 2 60  
  
Համակարգչային  
ձևավորումը՝  
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ  
Շապիկի ձևավորումը՝  
ԷԴՈՒԱՐԴ ՔԱՆՔԱՆՅԱՆԻ  
  
Գրանցման վկայական՝ 269:  
Պատվեր՝ 10:  
Տպաքանակ՝ 700:  
Ծավալը՝ 3 տպ. մամուլ:  
  
Խմբագրությանը  
տրամադրված հեղինակների  
նյութերում տեղ  
գտած փաստական  
անձնությունների  
համար խմբագրությունը  
պատասխանատվություն  
չի կրում:  
Անսագրի նյութերն  
օգտագործելիս հղումը  
պարտադիր է:  
  
Ստորագրված է  
տպագրության՝  
01. 02. 2012թ.:  
  
Տպագրված է  
«Ուկան Երևանցի»  
տպագրատանը:  
Հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորքի  
1-ին զ., Սաֆարյան 11/1-ա  
  
Հրատարակիչ՝ ՀՊՏՀ:  
Տարածվում է անվճար:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԽՈՍՔԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐՆ.....	4
ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՀՊՏՀ ՈԵԿՏՈՐ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆԻ ՀԵՏ.....	5
<b>Մեր սիրելի մայրաքաղաք՝ նոր կարգախոսում.</b>	
«Զգա՞ ջերմությունը...».....	8
ՀՊՏՀ-Ն նոր կայք ունի.aseue.am.....	10
ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ «ԱՆՏԱՐԵՍ ՀՈԼԴԻՆԳԻ» ՏՆՈՐԵՆ ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ.....	12
<b>ՀԱՄԱՇԽԱՐՁՄԻՆ ԲՐԵՆԴ.....</b> 14	
ԼՈՒՍԱԿԱՐԱՅԻՆ ԼՐԱՇԱՐՔ.....	16
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ը ՈՒՍԱՌՈՂՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ Է.....	21
<b>ՎԱԼԵՐԻ ՄԻՐՋՈՅԱՆ</b>	
ՀԱՅԵՐԵՆԸ՝ ՎՏԱՆԳՎԱԾ.....	24
<b>ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ</b>	
ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ.....	26
<b>ՄՊԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	
ԲԻՍՄԱՐԿԻ «ԳԱՂՄԻՔԸ».....	28
<b>ՍԱՍԿԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ</b>	
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԵԱՆԿԱՐ.....	30
ԳՈՐԾԱՐԱՐ ԽՐԱՏԱՆԻ.....	32
ՄԻՋԱՆԿԵՐ ՔԱՆԱՇՐՋԱՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ.....	33
ՄԵՐ ՇՆՈՐՀԱԼԻՆԵՐԸ.....	34
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՐԱՅՈՒ.....	36
ՄԵԺԵՐԸ՝ ՓՈՂԻ, ԻՐԱՍՏՈՒԹՅԱՆ և ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ մասին.....	37
ՀԵՏԱՔՐԵՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ.....	40
ԱՄԱՆՈՐ. ՍԻՐՎԱԾ ՈՒ ՍՊԱՍՎԱԾ ՏՈՆ.....	41
2012-Ը՝ ՄԵՎ ՎԻՇԱՊԻ ՏԱՐԻ.....	44



## Միրելի՛ ընթերցող,

**Զ**եզ ենք ներկայացնում «Տնտեսագետ» ամսագրի նոր համարը՝ նոր դիզայնով, հետաքրքրաշարժ նյութերով, ուշագրավ հարցազրույցներով, բազմազան հրապարակումներով, լուսա- նկարային շարքերով։ Ամսագրի բովանդակային, ինչպես նաև ոճային փոփոխությունը պետք է դիտարկել համահամալսարանական վե- րափոխման համատեքստում։

Ցանկանում են տեղեկացնել, որ համալսարանում ստեղծվել է լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, որը զբաղվում է բուհի պաշտոնական կայքի, «Facebook» սոցիալական ցանցում մեր համալսարանի պաշտոնական էջի սպասարկմանք, «Տնտեսագետ» ամսագրի լույսընծայմանք, ինչպես նաև համա- կարգում է լրատվամիջոցների հետ աշխատանքն ու հանրային կապերը։ Մեր բաժինը ստեղծվել է վերը թվարկված շատ կարևոր աշխատանքներն իրականացնելու համար՝ առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից աշխարհը։ Մեր գործում մենք ակնկալում ենք Ձեր աջակցությունն ու սրտացավ վերաբերնունքը, կոչ անում ակտիվ համագործակցության։

Ինչ վերաբերում է «Տնտեսագետ» ամսագրին, ապա այն շարու- նակելու է ծառայել որպես հայաբարբառ գրավոր խոսքի (գիտա- կան ու հանրամատչելի) ամբիոն ու շտեմարան, լրատու, ուղեցույց, աջակից ու նաև ժամանցի ընկեր։ Ամսագրի նյութերն իրենց բազմազանությամբ ու բովանդակային հարստությամբ թույլ չեն տա ձանձրանալ։ Այդ նպատակին հասնելու համար գործի է դրվել խմբագրակազմի լրագրողական ներուժը, ինչպես միշտ մեր կողքին են մշտական թրակիցները՝ դասախոսներ, ուսանողներ, աշ- խատակիցներ։

Բուհական պարբերականն ունի յուրօրինակ առաքելություն։ Ուղղված լինելով երիտասարդ սերնդին (և ոչ միայն)՝ այն կոչված է ուսուցանել, դրվատել, խորհուրդ տալ։ Թեմատիկ ընդգրկումը՝ տնտեսագիտական, հայագիտական ու պատմագիտական, գրա- կան ու գեղարվեստական, շարունակաբար թարմացվելու է, լուսա- բանվելու է ներքուհական կյանքը, արժանավոր դեմքերը դառնալու են հարցազրույցների հերոսներ, ամսագրի յուրաքանչյուր համարն ունենալու է գլխավոր հերոս և թեմա։ Լրատվական շարքերը և խոսուն լուսանկարները մշտապես կտեղեկացնեն Ձեզ կարևոր իրադարձությունների նաևն։ Մեկ համգումանք ևս՝ ամսագրում ներառվելու են ամսվա միայն ամենաառանցքային նորությունները, որոնք կարծ լուրերով ներկայացվելու են լուսանկարային շարքով, սակայն սա չի նշանակում, որ որևէ կարևոր անցուդարձ անար- ծագանք է մնալու։ Բուհական բոլոր իրադարձությունների լուսա- բանումները ներկայացվելու են բուհի կայքում, ինչպես նաև «Face- book» սոցիալական ցանցի պաշտոնական էջում։

Ձերծ մնալով հայիշխառն իրապարակումներից, սկանդալային ակնարկներից՝ «Տնտեսագետը» փորձելու է լինել առողջ քննադատ, բուհական և ուսանողական խնդիրների թարգման՝ անմիջական ու անկեղծ։

Ուստի ակնկալում ենք հետադարձ անխօնի կապ, արձագանք ու առաջարկություններ։

Գլխավոր խմբագիր՝  
ԳՈՐԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## «ԱՊԱԳԱՅՈՒՄ ԿՈՒՆԵՍԱՆՔ ԱՅՆ ՊԻՍԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ, ԻՆՉՊԻՍԻՆ ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ԱՅՆՈՐ ՄԵՐ ՄՏՔԻ ՈՒ ՀՈԳՈՒ ՄԵԶ»

**Հարցազրույց ՀՊՏԴ ռեկտոր,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆԻ հետ**



-Պարոն Արյան, բուհական համակարգի բարեփոխումները շարունակական են: Մեր համալսարանում բոլորս ականատեսն ենք փոփոխությունների, աշխատանքային նոր սկզբունքների և որակապես նոր գործելառոց: Ի՞նչ հիմնական ուղղություններով են ընթանում համալսարանի բարեփոխումները, բուհի նոր կերպարի ձևավորումն ի՞նչ պահանջներ է առաջադրում:

-Իրոք, բուհական համակարգի բարեփոխումը մշտական գործընթաց է և շարունակվում է Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումից ի վեր: Իմ՝ ռեկտոր ընտրվելուց հետո համալսարանում որոշակի փոփոխություններ կատարվել են: Բարեփոխումներն ընթանում են բնականոն ձևով՝ ընդգրկելով կրթական գործընթացը, գիտահետազոտական, արտաքին կապերի ոլորտները, միաժամանակ՝ փորձում ենք ամրապնդել միջբուհական կապերը: Խնդիրը հրամայական է. խօսված է կապը գործատուի և բուհի միջև: Այսօր փորձում ենք ուսանողներին հաղորդվող գիտելիքները, փորձառությունն ու հնտությունները համապատասխանեցնել գործատուի պահանջներին: Բացի դրանից, Բոլոնիայի գործընթացում մեր նպատակն է, որ տնտեսագիտականի կողմից տրվող ավարտական վկայականը ընդունելի լինի նաև եվրոպական կրթահամակարգին ինտեգրված երկրներում: Կրթական բարեփոխումները հաջողությամբ իրականացնելու համար քայլեր ենք ձեռնարկում վերանայելու ողջ կրթական գործընթացը: Դա կապված է լինելու և մասնագիտացումների ու առարկայական ծրագրերի հստակեցման, և քննությունների գործընթացի ու մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության, և այլ հարցերի հետ: Սա ոչ միայն բուհի, այլ նաև ՀՀ Կառավարության քաղաքականությունն է: Այնպես որ, բարեփոխումները պետք է շարունակական բնույթ կրեն, քանի որ այսօր աշխարհում փոփոխությունները շատ արագ են տեղի ունենում, և մշտապես դրանց համընթաց քայլեր ձեռնարկելու

անհրաժեշտություն է առաջանում: Այս առումնվ պետք է հաշվի առնենք ՀՀ Նախագահի և ՀՀ Կառավարության առաջ քաշած այն առաջնահերթությունները, որոնք արտացոլված են նաև ՀՀ Կառավարության ծրագրում:

Ինչ վերաբերում է բուհի նոր կերպարի ձևավորման գործընթացին, ապա տնտեսագիտական համալսարանը հանրապետությունում եղել է ճանաչված և հեղինակավոր բուհերից մեկը, և մենք պարտավոր ենք պահպանել այդ բարձր վարկանիշը՝ ժամանակի ոգուն համահունչ քայլեր անելով նաև այդ ուղղությամբ: Բուհի նոր կերպարի ձևավորումը կապված է նաև արտաքին բաղադրիչների փոփոխության հետ, որոնց նույնական փորձում ենք նոր շունչ հաղորդել: Արդեն ունենք ամբողջովին վերափոխված պաշտոնական կայքեր, որը մեր ժամանակներում շատ անհրաժեշտ գործիք է: Զգուրում ենք ուժեղացնել նաև ուսանող-դասախոս կազը և գնում ենք դեպի ուսանողակենտրոն հարաբերություններ՝ աշխատելով պարբերական հանդիպումների և շփումների միջոցով առավել մոտ կանցնել ուսանողին, լսել նրան հուզող խնդիրները և գտնել համապատասխան լուծումներ:

**-Համալսարանում եղան նաև կառուցվածքային փոփոխություններ, ի՞նչ նպատակ էին դրանք հետապնդում:**

-Վերջերս բուհում կատարվեցին որոշակի կառուցվածքային փոփոխություններ, սակայն պետք չէ այդ հարցի վրա այդքան սկեռվել: Այդ փոփոխությունները պարտադրված էին ժամանակի և նոր պահանջների հրամայականով: Մեր խնդիրը բուհի կառուցվածքն արդիականացնելն է, ժամանակի պահանջներին և բուհի գործառույթներին համապատասխանեցնելը: Այդ նպատակով ուսումնասիրել ենք այլ երկրների, այդ թվում՝ ԱՊՀ որոշ բուհերի կառուցվածքը: Այստեղ որևէ արտաքոց բան չկա, ընդամենը բուհի կառուցվածքը հարմարեցվել է իր գործառույթներին, իսկ կադրային փոփոխություններն եւ, ըստ եռթյան, նոր շունչ

Են հաղորդել բուիի գործունեությանը: Կադրային փոփոխությունները ևս անհրաժեշտություն են, որոնց բացակայությունն անխուսափելիորեն հանգեցնում է լճացման և ճահճացման:

-Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում բուի հասարակության և հասարակայնության հետ կապերի բաժինը, որը համակարգում է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում բուի պաշտոնական էջի, կայքի, «Տնտեսագետ» ամսագրի լույսընթայման աշխատանքները, ինչպես նաև զբաղվում է հասարակայնության և լրատվամիջոցների հետ աշխատանքով: Ի՞նչ սպասելիքներ ունեք բաժնի աշխատանքներից և ի՞նչ նորություններ են սպասվում թվարկված ուղղություններից:

-Ես մեծապես կարևորում եմ լրատվության և հասարակայնության հետ կապերը: Նախ՝ մենք պետք է շատ արագ զգանք բուի լրատվություն կատարվող ցանկացած փոփոխության նկատմամբ եղած արձագանքը, ընդ որում՝ թե՛ ուսանողների, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմի, թե՛ հասարակության և թե՛ լրատվամիջոցների արձագանքը: Այդ իսկ պատճառով այս բաժնի ստեղծումը, որը նաև իր վրա է վերցրել «Տնտեսագետ» ամսագրի լույսընթայումը, կայքի սպասարկումը, իհարկե, շատ եմ կարևորում: Այսօր ուսանողության հետ, ուսանող-դասախոս, ռեկտորատ-ուսանող, հասարակությունը կապերն առանց ժամանակակից այս միջոցների ուղղակի հնարավոր չէ պատկերացնել, և մենք փորձում ենք, այն հարցադրումներին, խնդիրներին, որոնք բարձրացվում են, արագ արձագանքել: Ամսագրի առումով. այն, ինչ արվում էր, չենք գրոյացնում, բայց այստեղ նույնպես բովանդակային փոփոխությունների անհրաժեշտություն է զգացվում: Ամսական պարբերականությանը լույս էինք ընթայում ամսագրի, որում ընդգրկված էին նորություններ, մինչեւ այսօրվա նորությունն անգամ վաղը հին է համարվում: Այսպես որ, ամսագրի պետք է բովանդակային առումով փոփոխվի: Առհասարակ, այս դաշտում մեծ փոփոխություն է կատարվել, և կարծում եմ՝ այն, ինչն արվում է, արդեն իսկ մեծ արձագանք է գտել, և այսօր միայն «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում ավելի քան 1000 օգտատեր հետևում է մեր էջի ամենօրյա հրապարակումներին:

-Բարեփոխումների շղթայից դուրս չի դիտարկվում նաև ուսումնական գործընթացը. ի՞նչ է արվել և ի՞նչ է նախատեսվում ամել այդ ուղղությամբ:

-Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը մեր բուիի հիմնական գործառույթն է: Այն, ինչ արվում է, այդ գործընթացի հետ պետք է կապել ու լրացնել: Բոլոր քայլերը միտված են ուսումնական գործընթացի կարգավորմանը և բարելավմանը, որովհետև ուսումնական գործընթացի արդյունքում է, որ մենք բարձրագույն կրությամբ ուսանողներ ենք պատրաստում, հետևաբար առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել ուսումնական գործընթացի բարեփոխումներին: Այս ուղղությամբ էլ որոշակի քայլեր արվել են,

բայց կարծում են, որ ուսումնական գործընթացի բարեփոխումները շարունակական բնույթ պետք է կրեն: Այստեղ կան ընդիհանուր խնդիրներ՝ ողջ բուհական համակարգի նույնականացման առումով, որոնք նույնպես մեր ուշադրության կենտրոնում են:

-Ուսանող-դասախոս հարաբերությունը մշտարթունքն է ու կրթական համակարգում կարևոր իիմ-նախնդիր: Ըստ Զեզ՝ ի՞նչ կարևոր հատկանիշներով պետք է օժտված լինի մեր օրերում լսարան մտնող գիտնական մամկավարժը, ի՞նչ պահանջմեր պետք է առաջարդի ուսումնառող երիտասարդին:

-Իրոք, ուսանող-դասախոս հարաբերությունը մշտական քննարկման թեմա է եղել թե՛ խորհրդային տարիներին, թե՛ մեր օրերում, և ես նույնառ դա համարում եմ կարևոր խնդիր: Այդ իսկ պատճառով մենք փորձում ենք նոր հարթության վրա դնել ուսանող-դասախոս հարաբերությունները, դասախոսության գործընթացը բովանդակային առումով փոփոխության ենթարկել, որ լսարանում դասախոսություն միայն դասախոսություն կարդա, ուսանողը՝ գրի, այլ ինտերակտիվ, հետաքրքիր քննարկումներ լինեն, որոնցով, կարծում եմ, կիրարվի նաև իրոշ ուսանողների անտարբեր մոտեցումը:

-Ճեր պաշտոնավարելուց ի վեր համալսարանում կադրային փոփոխություններ են կատարվել: Ի՞նչ սկզբունքներով եք առաջնորդվում կադրերի ընտրության, կադրային քաղաքականության հարցում:

-Հն պաշտոնավարելու օրվանից տեղի են ունեցել և՝ պրոռեկտորների, և՝ դեկանների փոփոխություններ: Որոշակի փոփոխություններ են եղել նաև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում: Այս առումով ցանկանում են նշել, որ թեև կադրերի ընտրության որոշումը են ընդունում, այնուհանդերձ, մինչ այդ բավական քննարկումներ են լինում: Այսպես, ֆակուլտետի դեկան առաջադրելուց կամ ընտրություններից առաջ քննարկումներ են կատարում տվյալ ֆակուլտետի դասախոսների հետ, լսում ուսանողների և առհասարակ շատերի կարծիքները: Այսինքն՝ ոչ միայն իմ անձնական ցանկությամբ, այսպես ասած՝ իմ հարմար մարդու են նշանակում, այլ ուղղակի փորձում են ընտրել այնպիսի կադրերի, որոնք ընդունելի կլինեն բոլոր առումներով՝ և որպես գիտնական մանկավարժ, և որպես վարչական աշխատող, և որպես նարդ: Սկզբունքը սա է, և փորձում են, օրինակ, վարչական աշխատողների դեպքում ընտրել ժամանակակից գիտելիքներով, ստեղծագործական միտք ունեցող, խնդիրների ոչ ստանդարտ լուծումներ գտնելու ընդունակ և իրենց գործին արհեստավարժորեն տիրապետող կադրերի: Ասել, որ իմ կադրային քաղաքականությունը միտված էր բոլորին պետք է բավարարի և ընդունելի լինի, դժվար է, և ընդիհանական այդպես հնարավոր չէ: Ոչ միանշանակ ընկալվող ինչոր կադրային նշանակումներ կարող են լինել, բայց իմնական սկզբունքը, եթե փորձեն կարծ սահմանել՝ հնարավոր առավելագույն արդարության սկզբունքն է:

-Քազմիցս բարձրածայնվել է այն մասին, որ ՀՊԾՀ-ն ընթանում է գիտահետազոտական համալսարան դառնալու ծանապարհով: Արդյո՞ք բավարար եք համարում ամբիոններում կատարվող գիտական, հետազոտական աշխատանքները, և արդյո՞ք դրանք համահունչ են ժամանակակից տնտեսագիտության պահանջներին:

-**Տ**նտեսագիտական համալսարանը գիտահետազոտական կենտրոն դարձնելու գաղափարը նոր չէ, և աշխարհի բոլոր առաջադեմ համալսարաններն ունեն զարգացած հետազոտական կենտրոններ: Ես կարծում եմ, որ առանց այդ ուղղությամբ քայլեր անելու հնարավոր չէ XXI դարում պատկերացնել որևիցե բուհի բնականոն զարգացումը: Խնդիրը մի քանի տեսանկյունից են դիտարկում, նախ՝ հետազոտական աշխատանքները կարող են արտահայտվել տարբեր ձևերով՝ գիտական հոդվածներ գրելով, գիտաժողովների, սեմինարների մասնակցելով և այլն, ինչի արդյունքում մենք կկարողանանք ծանոթանալ տնտեսագիտության ոլորտում աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին, նորույթներին, փոխանակել մեր փորձն ու գիտելիքները: Մենք, գիտակցելով խնդրի բարդությունն ու կարևորությունը, մեր առջև նպատակ ենք դրել, որ համալսարանը ընթանա նաև գիտահետազոտական համալսարան դառնալու ուղղությամբ: Այսօր համապետական նշանակության բազմաթիվ տնտեսական խնդիրներ են քննարկվում, ինչից մեր բուհը պետք է աննամա չնաև և ունենա բավարար գիտական ներուժ իր փորձագիտական կարծիքն արտահայտելու այդ հարցերի վերաբերյալ: Ներկայում մենք դասախոսին վարձատրում ենք միայն կրթական, ուսումնական աշխատանքի համար, բայց եթե հնարավորություն ունենանք այդ ծանրաբեռնվածության մեջ նտցնել նաև գիտահետազոտական աշխատանքը, կարծում եմ՝ և մեկ արդյունավետ քայլ կլինի այդ նպատակին հասնելու համար:

-**Դ**արգելի ռեկտոր, «Տնտեսագետ» ամսագրի այս համարում ուսանողներից մի քանին անկեղծացել ու պատմել են իրենց երազանքների համալսարանի մասին: Արդյո՞ք կա Զեր մտապատկերում կայացած բարձրագույն ուսումնական հաստատության տեսականը: Եթե կարելի է, մի քանի խոսքով:

-**Ե**ս էլ անկեղծանամ ու ասեմ, թե ինչպիսին կցանկանայի տեսնել համալսարանը: Ինչպես ասում էր սպարապետ Գարեգին Նժդեհը, «Վաղը կունենանք այնպիսի հայրենիք, ինչպիսին, որ այսօր կառուցում ենք մեր հոգու ու սրտի մեջ»: Երկրորդելով անզուգական մտածողի խոսքերը՝ ասեմ, որ ապագայում կունենանք այնպիսի համալսարան, ինչպիսին կառուցում ենք այսօր մեր մտքի ու հոգու մեջ: Այս համատեքստում նշեմ, որ կցանկանայի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ապագայում տեսնել և ծնով, և բովանդակությամբ որպես XXI դարին համահունչ բարձրագույն ուսումնական հաստատություն, որը

կրավարարեր աշխարհի առաջադեմ երկրների բուհերին ներկայացվող պահանջները: Ցանկանում եմ, որ մեր կողմից տրված գիտելիքը՝ մրցունակ, իսկ դրա մասին փաստող վկայականը՝ ճանաչելի լինեն արտերկրում, որպեսզի մեր գործատուները առավել բավարարված լինեն մեր ուսանողների մասնագիտական պատրաստվածությամբ, գիտելիքներով և թիմային աշխատանք կատարելու ունակությամբ: Կցանկանայի նաև, որ ունենայինք արդիական շենքային պայմաններ, հարուստ նյութատեխնիկական բազա, ժամանակակից տնտեսագիտական գրականությամբ հագեցած գրադարան, որովհետև արագ փոփոխվող աշխարհում գիտելիքի դերն ու արժեքը եապես մեծացել են: Դա էլ երազանք է, որ լավ շենքային պայմաններ ունենանք՝ իր բոլոր ենթակառուցվածքներով, որտեղ ուսանողը, կարծում եմ, ավելի շատ տրամադրված կլինի բարձրորոշակ կրթություն ստանալ: Անկեղծանալն ու երազելը լավ է, բայց պետք է նաև փորձել գնալ այդ ուղղությամբ, քանի որ կրթական ոլորտում մրցակցությունն այնքան է մեծացել, որ ժամանակի պահանջներին համընթաց չքարեփոխվելու դեպքում մենք ուղղակի կարող ենք չղիմանալ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար պետք է վերափոխվենք, պետք է կարողանանք բոլոր ուղղություններով և բարեփոխվել, և համալսարանի զարգացմանը միտված արդյունավետ քայլեր կատարել:

-Պարոն Արյան, վերջում, քանի որ տոռնական շրջանում ենք, կիսնդրեի նաև պատմեիք, թե ինչպե՞ս եք սովորաբար դիմավորում Անանորը:

-**Ո**չ միայն մեր, այլև, ընդիանրապես, հայկական ընտանիքներում ընդունված է Անանորը ընտանիքի բուլոր անդամներով դիմավորելը: Յուրաքանչյուր հայ, կարծում են, դրանում տեսմուն է մեծ խորհուրդ, որն արտացոլում է ընտանեկան ավանդույթների պահպաննան, ապագային միասնորեն ու լավատեսությամբ նայելու, միմյանց աջակցելու ու սատարելու ձգուում: Ընտանիքս տարիների հետ մեծացել է. երկու որդիներիցս մեկն ամուսնացած է, և երկու քունիկ ունեմ: Նրանք նոր շունչ ու տրամադրություն են հաղորդել մեր կյանքին ընդիանրապես և Անանորի տոնին՝ մասնավորապես:

Ապագային միտված լրսավոր ծրագրերով ու միասնական աշխատանքի բերկրանքը համատեղ վայելելու հաստատականությամբ կսկսենք նոր 2012 թվականը նաև մեր մեծ ընտանիքում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, որի ամեն անդամնին՝ ուսանող, դասախոս, աշխատակից ու վարչական աշխատող, ցանկանում են առողջություն, յուրաքանչյուր մարդու թիկունքն ամուր պահող ընտանեկան բարօրություն, սեր ու համերաշխություն, անձնական հաջողություն և աշխատանքային առաջընթաց ու վերելքներ:

**Հարցազրոյցը վարեց ԳՈՐԾ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**

# ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԱԳԱՔԸ՝ ՆՈՐ ԿԱՐԳԱԽՈՍՈՒՄ.

## «Զգու՝ ցերամոքում...»

Երկրների ճանաչելի ուրվագծերը և գույները, ինչպես, օրինակ, Եյֆելյան աշտարակը, անզույց իտալական կողիկը կամ էլ ևյու Յորդի «Մեծ խնձորը» դարձել են յուրօրինակ ընկալման օբյեկտներ, որոնք բարձրացնում են տվյալ երկրի և քաղաքի բրենդի արժեքը:

Բացի թվարկածներից, կան նաև բոլորի կողմից ընդունված՝ պետությունների և քաղաքների խորհրդանշաններ, պատկերանշաններ (լոգոտիպեր), կարգախոսներ, որոնք ճանաչելի են շատերին: Օրինակ՝ «Ես սիրում եմ ևյու Յորը» («I LOVE NY») կարգախոսը կարող եք հանդիպել անգամ գլխարկների, շապիկների և մեքենաների վրա: Դրանք գործնականում շրջանառում են գրոսաշրջային բիզնեսում, օգտագործվում են գովազդային պաստառներում և նպատակ ունեն տեղեկատվության միջոցով հավանական գրոսաշրջիկների ուշադրությունը հրավիրել տվյալ երկրի հնարավորությունների վրա:

Պետությունը գովազդելու համար ծախսվում են մեծ գումարներ, որոնք ստվարաբ բաշխվում են գովազդային գործակալությունների, խորհրդատվական ընկերությունների և հասարակայնության հետ կապերի մասնագետների միջև: Օրինակ՝ Մինգապուրն այդ նպատակի համար տարեկան ծախսում է 60 մլն ԱՄՆ դոլար, Մալայզիան՝ 150 մլն, իսկ Լոնդոնը 2003-2004 թթ. ծախսել է 40 մլն ԱՄՆ դոլար:

Կիպրոսը, Թուրքիան, Բուլղարիան, Իսպանիան, Հունաստանը և մի շարք այլ երկրներ՝ որպես գրոսաշրջության կենտրոններ, գովազդի միջոցով ստեղծում են իրենց երկրի դրական կերպարը: Սակայն պետք է հիշել, որ այն ստեղծվում է բացառապես նարդկանց գիտակցության մեջ: Այսօր երկրների միջև արդեն ոչ թե մատուցած ծառայությունների բարձր որակի, այլ ընկալման մրցապայքար է, այսինքն՝ կարևոր է, թե տվյալ երկիրն ինչ գործորումներ է առաջացնում միջազգային սպառողների գիտակցության մեջ: Ահա այն հար-

ցադրումը, որի պատասխանը փորձում են տալ քաղաքակիրք աշխարհի երկրները:

Խոշոր, տնտեսապես զարգացած երկրներն այս խնդրով զբաղվում են վաղուց, իսկ մի շարք երկրներ դեռ նոր-նոր են փորձում ձևավորել իրենց կերպարը: Օրինակ՝ Մոլդովայի խորհրդանշերն են արևան ու խաղողը, Չեխիայինը՝ ծաղրանկարային պղպջակները, Տալինինը՝ իհն քաղաքի ուրվագիծը՝ ձայնային ալիքի տեսքով: Իսկ Ռուսաստանի փորձը, ստեղծելու երկիրը բնութագրող խորհրդանշից, տարիներ շարունակ այդպես էլ չի հաջողվում: Ռուսաստանը չի կողմնորոշվում, թեև ունի այս առումով երկիրը դիրքավորելու բազմաթիվ հնարավորություններ: Իսկ ի՞նչ ենք առաջնորդ մտաբերում Ռուսաստան ասելիս: Յետազոտությունների արդյունքներից պարզվում է, որ Ռուսաստանը մարդկանց մտապատկերում կարծրացած է որպես թթու վարունգ, ողի և ռազմական տեխնիկա:

Երկրի խորհրդանշերը և տարբերանշանները ստեղծելիս մասնագետները մեծ ուշադրություն են դարձնում գույների վրա, քանի որ դրանք մարդու տրամադրությունը փոխելու և հստակ տեղեկատվություն հաղորդելու ունակությամբ են օժտված: Այս ամենը գիտակցելով՝ Բելառուսը՝ որպես իր ֆիրմային գույն, ընտրեց վառ կապույտը: Խնդիր էր դրված ստեղծելու գյուղատնտեսական, բարի, ծաղկող դաշտերով, փոքրիկ տնակներով երկրի կերպար՝ առանց արագընթաց մայրուղիների, ժամանակակից հյուրանոցների: Թե որքանով է հաջողվել դիրքավորել այս գաղափարը մարդկանց գիտակցության մեջ, ցույց կտա ժամանակը: Նման միջոցառումների արդյունքները ստվորաբար երևում են տարիներ ու տասնամյակներ անց, եթե ձևավորվում են որոշակի կարծրատիպեր:

Հայաստանի պարագայում դեռևս բացակայում է այն ուղղվածությունը, որով պետք է դուրս գալ միջազգային ասպարեզ և ձևավորել պետության միջիցը:

**Yerevan**  
Feel the Warmness



Քաղաքը բազմաբնույթ է, բազմատարր, այն նման է կենդանի օրգանիզմի, որն ունի զարգացման դինամիկա, բնավորություն և տրամադրություն: Յուրաքանչյուր քաղաքի դեմքն իր բնակչությունն է, նրա պատմությունն ու ավանդույթները, հայտնի քաղաքացիները, ճարտարապետական դիմագիծը:

Յուրաքանչյուր քաղաքը, առանց բացառության, եզակի է և անկորություն կարուր է, քանի որ բրենդի գլխավոր հատկանիշը յուրահատկությունն է: Դամայն աշխարհին քաղաքը ներկայացնելու և ուղակի աշխարհագրորեն այն նշանակետ դարձնելու համար անհրաժեշտ է ստեղծել իհշվող և նրա յուրահատկությունը արտացոլող բրենդ:

Այսպիսով, Երևանը, ունենալով դարավոր պատմություն, չուներ տեսողական գուգորդումներ առաջացնող իր պատկերը:

«ԲիԲի Մեդիայի» ընկերությանը հանձնարարված էր Երևանի ֆիրմային գրոսաշրջային ոճի, տարբերանշանի և բրենդութի մշակումը: Նախագծի յուրահատկությունը և դժվարությունը առաջարտանքի խորության և ընդգրկման մեջ էր, քանի որ տարբերանշանը և բրենդութը պետք է արտացոլեին քաղաքի բնավորությունը քաղաքացիների և քաղաքի այցելուների աչքերով, դարավոր պատմությունը և ժամանակակից դեմքը:

Քաղաքի ընդհանուր նկարագիրը և միայն իրեն բնորոշ հատկանիշները բացահայտելու համար «ԲիԲի Մեդիա» ընկերությունը և «Բրենդ» կազմակերպությունը անցկացրեցին խոշոր մարքերին հետազոտություն, որն ուղղված էր երկու խմբի՝ քաղաքացիներին և այցելուներին: Կազմաք էին մի շարք հարցեր, որոնք պետք է օգնեին հարցվողներին ավելի ճանրահասնորեն և պատկերավոր ներկայացնել քաղաքի բնորոշությունը դրանով իսկ սահմանելով աշխատանքային գործընթացի հիմնական ուղղությունները:

Նշված հատկանիշները հիմնականում կապված էին քաղաքի գացական ընկալման հետ, և ամենահաճախ հանդիպողը շերմությունն էր: Թե՛ քաղաքացիները, թե՛ այցելուները նշում էին քաղաքի շերմ մթնոլորտը, բնակիչների շերմ և հյուրասեր վերաբերմունքը: Դաշվի առնելով բոլոր առկա բնութագրերը, այդ բվում նաև նրանք, որոնք բացասական բնույթ էին կրում, սկսվեցին քաղաքի տարբերանշանի դիզայնի աշխատանքները:



«ԲիԲի Մեդիայի» թիմի աշխատանքի արդյունքում ստեղծվեց բրենդի քսան տարբերակ, որոնք ունեին տարաբնույթ գունային լուծումներ և հայեցակարգեր: Քննարկումներից հետո ընտրվեցին մի քանիսը, որոնց հայեցակարգային հիմքերը մեկ ուղղվածություն ունեին: Աշխատանքների կարևորագույն փուլերից մեկը համեմատականների անցկացումն էր այլ քաղաքների հաջողված բրենդերի հետ, ինչի շնորհիվ ընտրվեց բրենդը գգացական բնութագրի դաշտում ներկայացնելու տարբերակը: Մեր դեպքում այն չպետք է կապվեր «սեր» հասկացության հետ, քանի որ արդեն կային մի շարք այդպիսի բրենդեր (Թիֆլիսի, Խոյ Յորդի):

Արդյունքում պարզ դարձավ, որ Երևանի գլխավոր բնութագիրը շերմությունն է՝ «warmness»: Այդ բնութագիրը օգտագործվեց քաղաքի դիրքավորման և կարգախոսի մեջ՝ «Զգա՞ շերմությունը» («Feel the Warmness»), ինչպես նաև Երևան («Yerevan») բառի գրելաձի մեջ, որտեղ անգլերեն «V» տառը ներկայացված է վեր բարձրացրած ողջունող ձեռքերով: Երևանի գովազդային արշավի ընթացքում նախատեսված է, որ «Yerevan» բառի մեջ, «V» տառը կլրացնեն Երևանցիները, որոնք կլինեն տարբեր սոցիալական և տարիքային խմբերի ներկայացուցիչներ: Դրանով ավելի վառ կերպով կարտահայտվի քաղաքի հյուրընկալության ու շերմության միտքը:

Որպես քաղաքի բրենդավորման բաղկացուցիչ՝ հիմք դրվեց «Yerevan City Tour» նախագծին, որի շրջանակներում կազմակերպվում են ավտորուսով պտույտներ Երևանի տեսարժան վայրերով, ընդուրում՝ ավտորուսների արտաքին ծևավորումն անբողջությամբ նույն ոճի մեջ է՝ սկսած գունային լուծումներից մինչև ավտորուսին փակցված կարգախոս՝ «Զգա՞ շերմությունը»:

Այսպիսով, ստեղծվեց Երևանի բրենդը, որը դարձավ քաղաքի բնավորության գլխավոր հատկանիշի՝ շերմության արտացոլումը, ինչի շնորհիվ այն, հավատացած ենք, կանորագրվի քաղաքացիների և այցելուների գիտակցության մեջ, կառաջացնի համապատասխան գգացողություններ:

**ԿԱՐԵՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**  
մարքերին գիտակցության մասին

ԲԱՐԱԿԱՐԱՍԻԱՆ 1	
50գր.	Rossio + 15գր. Bacardi Superior
60գր.	Սարմանի հյութ
30գր.	Galliano + 70գր. Բանանի հյութ
50գր.	Blue Curacao + 10գր. Blue Curacao Syrup
ԲԱՐԱԿԱՐԱՍԻԱՆ 2	
50գր.	Rossio + 15գր. Bacardi Superior
60գր.	Սարմանի հյութ
50գր.	De Kuyper + 10գր. Vodka
50գր.	Malon
50գր.	Blue Curacao + 10գր. Blue Curacao Syrup



## ՀՊՏՀ-ՆՈՐ ԿԱՅՔ ՈՒՆԻ.

# asue . am

Ամիսների հավաքական ջանադիր աշխատանքը տվեց սպասված արդյունքը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հանդիսությունների սրահում դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ համալսարանի պաշտոնական կայքի ([asue.am](http://asue.am)) բացումը, որին ներկա էին ՀՊՏՀ խորհրդի նախագահ Ռուփիկ Աբրահամյանը, ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը, պրոռեկտորները, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմն ու ուսանողությունը:

Բուհի նոր կայքը պատրաստել է «Բրեհինդ» ընկերությունը, որի տնօրին, մարդեթինգի ամբիոնի դասախոս Կարեն Բաբաջանյանը հյուրերին ներկայացրեց կայքի բովանդակությունը՝ նշելով, որ այսուհետ այն իր այցելուին կներկայանա բոլորովին նոր դիզայնով, տեխնիկական և ծրագրային հետաքրքիր լուծումներով, նոր էջերով և ուշագրավ խորագրերով:

ՀՊՏՀ նոր կայքը հագեցած է համալսարանին վերաբերող բազմաթիվ տեղեկություններով, ներկայացնում է անցուղարձը, առօրյան ու իրադարձությունները: Կայքում ընդգրկված են հետևյալ խորագրերը՝ «ՀՊՏՀ-ի մասին», «Ընդունելություն», «Ֆակուլտետներ», «Մեդիա», «Կյանքը ՀՊՏՀ-ում», «Հետադարձ կապ»:

Ռեկտոր Կորյուն Աթոյանն իր խոսքում նշեց, որ համալսարանի այցեքարտը հանդիսացող ու կերպարը ձևավորող նորաստեղծ կայքը արտացոլելու է բուհի իրական դեմքը և օժանդակելու է ուսանողներին ուսումնական գործընթացում: Ռեկտորը շնորհավորեց համալսարանականներին՝ նշելով. «Եկե՛ք միասին արձանագրենք մեր համատեղ ձեռքբերումների փաստը և կանգ չառնենք ճանապարհի ամենաթեժ խաչմերուկում: Վստահեցնում եմ, որ «Մենք փոխվում ենք» կարգախոսին հավատարիմ՝ մեր նախաձեռնած փոփոխությունները շարունակական բնույթ են կրելու»:

«Ես գտնում եմ, որ կայքի ստեղծման գործում տիտանական աշխատանք է կատարվել, և ես համոզված եմ, որ այդ աշխատողները պրոֆեսիոնալ են եղել: Ես գոհ եմ և շնորհակալ եմ», - լրագրողների հետ ճեպագրույցում հայտարարեց համալսարանի խորհրդի նախագահ Ռուփիկ Աբրահամյանը՝ ավելացնելով, որ այս արագ փոփոխվող աշխարհում կայքի բացումը շատ կարևոր քայլ է:

Ուսանողական խորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը ներկայացրեց համալսարանի բարեփոխումների համատեքստում ուսանողական խորհրդի կատարած աշխատանքը, ձեռքբերումները:

ՀՊՏՀ խորհրդի նախագահն այս կարևոր իրադարձության առիթով համալսարանականներին շնորհավորեց ճենասրահում բացված տոնական սեղանների շուրջ և Անանորին ու Սուլբ Ծննդյան սոնին ընդառաջ՝ մաղթեց աշխատանքային ու անձնական նորանոր հաջողություններ:



«Դամալսարանում սկիզբ առած բարեփոխումներն ընդգրկելու են բուհի զարգացման բոլոր ուղղությունները՝ ուսումնական գործընթաց, գիտահետազոտական աշխատանքներ, արտաքին կապեր, ուսանող-դասախոս հարաբերություններ, ուսանողների և աշխատակազմի հանգստի ու ժամանցի պայմանների ստեղծում և, ըստ եւրյան, այդ գործընթացում չկա որևէ երկրորդական հիմնախնդիր», - դեկտեմբերի 7-ին ուսանողության հետ առաջին մեծ հանդիպման ընթացքում հայտարարեց ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Արոյանը: Սա ուսանողների հետ երկխոսելու մշակույթի ձևավորմանն ուղղված ռեկտորի առաջին քայլն էր, որի նպատակը ուսանողների խնդիրներին ծանոթանալն էր՝ այդպիսով կարևորելով նրանց կարծիքը:

## ՈԵԿՏՈՐ- ՈՒԽԱՌՈՂ ԵՐԿԱՌՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԱԿՈՒՅԹԸԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՑՄԱՆ ՈՒ ԼՈՒԺՄԱՆ ԽԱՍՊԱՐ

Նա ներկայացրեց մեկնարկած աշխատանքների ընթացքը, արդեն կատարվածը և հետագա գործունեության միտումները: «Այսօր պարտավոր ենք մեր բուհի կրթական մակարդակը հավասարեցնել գոյն Հայաստանի աշխատաշուկայի, գործատուի պահանջներին», - ասաց Կորյուն Արոյանը՝ հավելելով, որ պետք է դրւում միել կարծրացած այն մտածողությունը, թե դասախոսն ուզում է լավ կրթություն տալ, սակայն ուսանողն ընդդիմանում է:

«Մենք հակառակորդներ չենք, մենք ընդհանուր գործ ենք անում և միակամ պետք է լինենք այս ճանապարհին, իսկ միակամության նախապայմանը փոխվաստակությունն է, միմյանց հոգսերին տեղեկացված լինելը, միմյանց հավատալը», - շարունակեց բուհի դեկավարն ու հորդորեց ուսանողներին համարձակ ու անկաշկանդ շարադրել իրենց մտքերը: Ծավալվեց անմիջական ու բաց երկխոսություն, որը տրամադրեց ուսանողներին խոսելու իրենց հոլովու խնդիրներից, տեղ-տեղ դժգոհելով, արտահայտվելու շատ ու շատ հարցերի շուրջ, որոնց մասին մինչ այդ լրել էին:

Համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպումը այն հանգուցակետն էր, որի շուրջ ուսանողները համեմատաբար շատ մտահոգություններ ունեին. Ժամանակատար ու անարդյունավետ անհատական աշխատանքներ, որոնք վերածվել են մեխանիկական copy-pastե-ի, գրավոր, թեստային, համակարգչային քննություններ, օբյեկտիվ գնահատման խնդիր, թելադրության վերածված դասախոսություններ, բողոքարկման գործընթացի անկատարություն, փոխատեղման դժվարին մրցապայքար:

«Կարևոր, սիրելի՝ ուսանողներ, գիտելիք ծեռք բերելն է: Թե ինչ ենք, ինչ եղանակով է ծևավորվում դրա գնահատականը, հավատացե՞ք, փոքր-ինչ երկրորդական է», - ասաց ռեկտորը՝ այնուհետև նշելով, որ բարձրացված հարցերն արժանի են քննարկման ու վերանայման, արդյունավետ ուղղների որոնման:

Մագիստրոսական նոր կրթական ծրագրերի ներդրումը և դրանց ածանցվող հարցերը հոլովում էին ներկաներից շատերին: Ուեկտորը հանգամանորեն պարզաբանեց՝ հատկանշելով. «Մագիստրոսական նոր կրթական ծրագրի համար ընդունելության նոր կարգ է գործելու. կազմակերպվելու են ընդունելության քննություններ մասնագիտական առարկայից, օտար լեզվից և ինֆորմատիկայից: Ուսումնառության երկու

տարվա արդյունքում բարձր առաջադիմությամբ ուսանողները մրցութային կարգով աշխատանքի կանցնեն համակարգում»: Նույն համատեքստում ռեկտորը խոսեց նաև բուհական ամբողջ համակարգում կրթական գործընթացների, տվյալ դեպքում՝ մագիստրոսական կրթական չափորոշչների նույնականացման մասին՝ ընդգծելով, որ դա կարևոր նախապայման է, որը պետք է ապահովի ուսանողների շարժունակությունը:

Փորձառության կազմակերպումը համարելով ուսումնական գործընթացի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը և հուսադրելով երկխոսությանը ներկա ուսանողներին՝ Կորյուն Արոյանը ընդգծեց, որ բովանդակային առումով այն ամբողջությամբ պետք է վերանայվի: Նա շեշտադրեց, որ ուսանողը փորձառության վայրում պետք է մասնագիտական փորձ և



## ՈԵԿՏՈՐ ՀԱՎԱՍՏԻԱՅՈՒՄՆԵՐԸ ՀՈՒՍԱԳՐԵՑԻՆ ՈՒԽԱՌՈՂՆԵՐԻՆ

հմտություններ ծեռք բերի:

«Լիահույս եմ, որ խնդիրի կարգավորումն արդեն իսկ նախանշվում է համալսարանի և մի քանի պետական կառույցների փոխգործակցության ծրագրերի իրականացմանը», - ասաց ռեկտորը՝ հավելելով, որ համանման նոր ծրագրերով այս կնճռուս հարցը դրական լուծման կմղվի: Նա ուսանողներին հայտնեց նաև, որ բուհի պաշտոնական կայքի աշխատանքն առաջիկայում հրատապ լրատվությամբ ու ծանուցումներով կապահովի տեղեկատվական հոսք ու կտա շատ հարցերի պատասխաններ, կգործի նաև էլեկտրոնային գրադարանը:

Երեք ժամ և ավելի տևած երկխոսությունը փարատեց ուսանողների շատ ու շատ մտահոգություններ: Կորյուն Արոյանը սիրով ունկնդրեց անգամ անձնական բնույթի հարցադրումները, խորհուրդները տվեց, հուսադրեց: Նա անդրադապ նաև ուսանողների բարձրացրած տնտեսական խնդիրներին՝ տեղեկացնելով, որ դրանց քաջատեյակ է ու հանձնարարականներ է տվել համապատասխան ստորաբաժանումներին: Վերջում ռեկտորը հավաստիացրեց ներկաներին, որ բուհի դեկավարությունը շարունակելու է խորհրդակցական կարգով, գործի նմելով բարեփոխումների ողջ գինանցը՝ բուհը դարձնել կրթական ծառայություններ մատուցող լիարժեք համակարգ և իր պատրաստակամությունը հայտնեց այրուինտ էլ ունկնդիր լինելու ուսանողների ձայնին, հանդիպելու ու գրուցելու նրանց հետ առաջարկված ցանկացած ձևաչափությունը:

**ՄՐՄԻՆԵ ԿԱՐՈԱՆՅԱ**

**«ՀԱՏ ԽԵԼԱՑԻՆԵՐԸ  
ԳՆՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ...»,  
ԻՍԿ ՈՎՔԵՐ ԵՆ ԶԲԱՂՎՈՒ  
ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ...**

**Դարցագրույց «Անտարես Դոլիճնգի» տնօրեն  
Արմեն Սարտիրոսյանի հետ**



-Պարոն Սարտիրոսյան, խնդրում եմ, մերկայացրեք,  
թե ինչպէս սկսեցիք Ձեր բիզնես գործունեությունը:

-Չորս ընկերուվ, 4-րդ կուրսում, մեր դասախոսների հանձնարարությունն էնք կատարում: Պետք է պատրաստենք մաթեմատիկայի խնդիրների շտեմարանը բուհ ընդունվողների համար: Մինչ կկազմենք շտեմարան՝ պատվեր եկավ այն ժամանակ ԳՄՀ ընկերությունից և ֆիլմադարանից՝ հայերեն և ռուսերեն պատրաստելու «Ազնավուրը կինոյում» գիրքը, որը դարձավ մեր առաջին աշխատանքն այս ոլորտում: Մինչև այսօր, երկի, 2000 անուն գիրք ենք հրատարակել:

Դայաստանում, ցավոք, հնարավոր չէ հրատարակել միայն, օրինակ, բժշկագիտական կամ հաշվապահական ոլորտի գրքեր, քանի որ մեր շուկան փոքր է: Շուկայի փոքրությունը բերում է աբսոլութի, այսինքն՝ եթե ես բժշկագիտական գրականություն հրատարակեմ, դա կիետաքըքի 14 հոգու: Ասենք՝ ուռողլոգիայի մասին գիրքը կիետաքըքի 14-15 մարդու: Իսկ 15 օրինակից մեկ օրինակի համար ոչ ոք չի տա 500 դոլար: Դայաստանում չեն սիրում կարդալ, բայց չեն կարծում, թե սա միայն պետության, հանրության խնդիրն է: Սա նաև հրատարակչի խնդիրն է: Մենք պետք է կարողանանք գիրքը սարքել այնպես, որ քայլ ընդառաջ անենք ընթերցողին: Դարցնենք՝ ընթերցո՞ղ, ի՞նչ ես ուզում: Օրինակ, մենք փորձում ենք երեխաներին բերել մեկ այլ դաշտ: Ցույց ենք տալիս, որ գիտե՞ս բալիկ, կա թիլ Գեյքս անունով մի քերի, որն իր ուղեղով, իր մտքի, տաղանդի շնորհիվ կարողացել է ամենամեծ հաջողությանը հասնել աշխարհում: Կա մեկ այլ քերի, որի անունը Գարի Գասպարով է, որն իր ուղեղի շնորհիվ հասել է այսպիսի բարձունքների: Իսկ կար մեկն էլ, Տիգրան Պետրոսյան էր անունը, նա տես՝ ինչ բարձունքների է հասել ժամանակին: Իսկ կար մեկ ուղեղը, որի անունը Արմեն Բաբաջանյան էր. նրա անունով երդվում էր ողջ Խորհրդային Միությունը: Իսկ կար մի վեհ Արամ Խաչատրյան, որը սիմֆոնիայի աշխարհի վարպետներից մեկն էր: Ցավոք, այսօր դպրոցականը, ով գիրք է տանում դպրոց, ամաչելով է դա անում, մնացածը ծիծաղում են այդ դպրոցականի վրա: Կարծում եմ՝ մեր քայլերով կկոտրենք այս միտումը:

-Իսկ ո՞րն է պատճառը, որ մենք լավ ընթերցողներ չենք:

- Ենոքոսի խնդիրն է, ժամանակակից հերոսի խնդիրը: Այսինքն, երբ մարդը տեսնում է, որ իրենից ցածր ունակություններով մեկն ավելի հաջողակ է, ավելի լավ է ապրում, նա սկսում է այլ կերպ մտածել, այլ կերպ վերաբերվել կրթությանը, ընթերցանությանը:

- Իսկ դժվա՞ր է մեզ մոտ գործարարությամբ գրաղվելը:

-Գիտե՞ք, ԱԱՆ-ի պետդեպարտամենտի հրավերով 2008-ին այնտեղ էի մեկ ամսի և ուսումնասիրում էի բիզնես-լորենզգը: Շատ տարբեր կազմակերպությունների ղեկավարների հետ էնք հանդիպում: Միացյալ Խահանգներում, Եվրոպայում, Չինաստանում, Հնդկաստանում բիզնեսը միջակ կարողությունների տեր մարդկանց ոլորտ է: Գործարարությամբ գրաղվելու համար պետք չէ լինել շատ հնուտ, որովհետև շատ խելացիները գնում են դեպի գիտություն, այդ նույն բիզնեսների մոտ մեծ ընկերություններում մենեցերների դիրք են գրավում, դառնում ղեկավարներ: Բայց բիզնեսի ռիսկային մասը միջակ մարդկանց համար է, որոնք չեն գնահատում ռիսկը, մեկ էլ գնում, հաջողակ են դառնում: Խելոքը պետք է տասն անգամ չափի, նոր քայլ անի:

- Ձեր կարծիքով՝ ի՞նչ հատկանիշներ պետք է ունենագործարարը:

- Տգիտություն, համառություն, նաև վսեմ, խիզախ, հոգևոր հարուստ, կարդացած, գիտակ: Նաև այդպիսին պետք է լինի: Հիմա ես ճանաչում եմ և՝ այսպիսիներին, և՝ այնպիսիներին:

- Որպես «Ropok» գովազդային փառատոնի հիմնադիր՝ ի՞նչ կարծիք ունեք Դայաստանում արտադրող գովազդի մասին:

- Այս փառատոնի հիմնադիրը ես եմ ու իմ գործընկերները: Նախ, մինչ այդ փառատոնը կազմակերպելը, մենք ձևակորեցինք Դայաստանի գովազդային խորհուրդը: Այդ կառույցը ստեղծվել է, որ քայլ առ քայլ առաջ մոդի այն նշանողը, որով կարելի է չափել հայաստանյան գովազդի որակը: Առաջին քայլը, որ արեցինք, Սլավոնական համալսարանում նինա իւմինիշնա Գևորգովայի և Արմեն Դարբինյանի շանթերով ստեղծեցինք տուրիզմի և գովազդի ֆակուլտետ, որտեղ առանձին կա գովազդ մասնագիտություն: Եվ այսօր ունենք 5-րդ կուրսեցիներ, հաջորդ տարի կունենանք առաջին մասնագետները: Նրանք արդեն աշխատում են գովազդային ընկերություններում: Այսինքն՝ նախ փորձեցինք լուծել կրթության խնդիրը: Դաջորդ քայլը կրթության բնագավառում պետք է լինի երկրորդ բարձրագույն՝ մագիստրոսական կրթություն մասուցելը: Պետք էր ստեղծել նաև մրցույթ, մի իրավիճակ, որտեղ հայաստանյան գովազդ պատրաստողը կարողանար մրցել արտասահմանցի գովազդ պատրաստողի հետ: Նման մրցույթները կոչվում են «փառատոններ»: Փառատոնին աշխարհի տարբեր ծայրերից ուղարկվում են գործեր, և դրանք մրցում են Դայաստանի գործերի հետ: Փառատոնի շրջանակներում մի քայլ էլ կատա-

րեցինք՝ վարպետության դասերը: Աշխարհի գովազդի լավագույն մասնագետները գալիս էին Յայատան, վարում իրենց վարպետության դասերը: Սա շատ ուսանելի և շատ կարևոր գործ է. ովքեր եղել են վարպետության դասերին, նրանք ինձ հետ համամիտ են: Յաջորդ կարևոր կետն այն է, որ կա գովազդ պատրաստողների տոն, և այդ օրը գոնե, գովազդ պատրաստողներն իրենց լավ են գօնու: Խորիրդի առջև մի կարևոր խնդիր էլ կար. օրենսդրական դաշտի բարելավումն էր և ամենակարևորը, ես կարծում եմ, բարոյական նշանող սահմանելը: Եվ մենք ընդունեցինք պատվի կողեքս գովազդային դաշտում, որը սահմանում է թե ինչն է կարելի և ինչը չի կարելի անել: Նրանք, ովքեր կստորագրեն այդ պատվի կողեքսը, նշանակում է անցել են այդ գործելածին: Կամ շատ խնդիրներ, որոնց լուծվելու հետո կլինի որակական աճ:

Ինչո՞ւ է հայկական գովազդում երկու, երեք ձայն: Որովհետև հայկական գովազդի գինը թույլ չի տալիս դիմել թանկ դերասանների. էժանությունը բերում է որպես անկանան: Ինչո՞ւ լավագույն նկարիչներին ու դիզայներներին չի վստահվում այդ գովազդը կամ ինչո՞ւ գովազդից առաջ չի կատարվում մարդեթինգային հետազոտություն: Ինչո՞ւ են ոեժիսորն ու օպերատորը նույն մարդը: Յայաստանում չկա սոցիալական գովազդ և պետք չէ շփոթել պետական օրգանների գովազդը սոցիալական գովազդի հետ: Սոցիալական գովազդի պատվիրատուն, որպես կանոն, պետք է լինի պետությունը: Եվ սոցիալական գովազդը, համոզված են, պետք է լինի վճարովի, որպեսզի չտուժի, որպեսզի լինի: Հայկական գովազդի՝ դեպի վաստ որակական տարբերության պատճառներն օբյեկտիվ են: Բայց մյուս կողմից՝ ես տեսնում եմ աճը դեպի լավը:

**-Կարո՞ղ եք հայաստանյան գովազդներից մատնանշել մի քանի հաջողվածները:**

-Յայաստանյա՞ն գովազդներից: Եկեք բրենդերից ասեմ՝ «Ամառե»-ն և իր գովազդային հոլովակները ինձ շատ են դուր գալիս: Վիճելի հարց է «Մարիանայի» «Քիֆիդոյի» գովազդը, որում երեք աղջիկները քայլում են: Շատերը վիճում են այս գովազդի շուրջ, բայց ես կարծում եմ՝ վաճառող գովազդն է շատ կարևոր: Դու կարող ես գեղարվեստական ֆիլմ նկարել, բայց դա գովազդ չէ: Գովազդը պիտի վաճառի, գովազդը պիտի կանոններին, իր սահմաննանը համապատասխանի, լինի միջնորդավորված:

**-Ինչպիսի՞ն կլինի հայաստանյան գովազդի ապագան տարիներ անց:**

-Ե՛վ գրահրատարակչության, և՝ գովազդի ապագան կախված է նրանից, թե մենք ինչպես կիալթահարենք մեր դժվարությունները:

**-Մի քանի անձնական բնույթի հարց.**

**ի՞նչ ոճի երաժշտություն եք նախընտրում:**

**-Նախընտրում եմ դասական, մաժորային:**

**-Ինչո՞ւ ընտրեցիք BNW մակնիշի ավտոմեքենա:**

-Զգիտեմ, հանկարծ ստացվեց: Յամենայն դեպս, 1996, թե 1998 թվականին պետք գնեի մեքենա, ընկերներից մեկն էր ընտրում, նա խորհուրդ տվեց: Գնեցի, հետո սիրահարվեցի: Կարծում եմ, որ «Առլին», «Սերսեղեսը» շատ լավ մեքենաներ են, բայց... մեկ-երկու տարի է լավ թվում, հետո ուզում ես թողնել բոլոր մեքենաները, բոլոր ինքնաթիռները և գնալ լեռներ, լճերի ափին նստել, չգիտեմ: Ասեմ, որ կոնֆորտի սիրա-

հար չեմ: Էրգոնոմիկան հարգում եմ, սիրում եմ, բայց լրացուցիչ կոնֆորտը ինձ համար չէ: Դա մի մարդու համար է, ով բանուգործ չունի: Եթե մարդն ունի մտածունք, խնդիրներ ունի լուծելու, նրա առջև մարտահրավերներ կամ, դրանով է զբաղված, մոռանում է փափուկ նստարանները կամ չգիտեմ ինչը:

Երբ ինձ հարցում են, թե ինչու եմ այս ճանապարհն ընտրել, ես ասում եմ՝ որովհետև կմասառկները և այս ճանապարհի բերած հաջողությունները համընկնում են: Ես ուզում եմ՝ Յայաստանը լինի հզոր, լուրջ կրթություն ունեցող, լուրջ քաղաքացիներ ունեցող, իրենց հրավունքներն ինացող քաղաքացիների, բանիմաց մարդկանց պետություն: Այդ ժամանակ հրատարակչությունը կծաղկի, գրքերը կգնվեն, և մենք շատ լուրջ հաջողություններ կունենանք:

**-Ո՞րն է գործարարության մեջ Ձեր հաջողության գաղտնիքը:**

-Բայց ո՞վ ասաց, որ ես հաջողակ եմ (ծիծաղում է -հեղ.):

Այսօր մի լավ բան կա. Եթե մարդը խելացի է և իր գործի վարպետ, գոնե մեր ընկերությունում գործ կճարի: Ունենք շատ բացեր՝ չունենք գլխավոր տնօրեն, մարքեթորզներ: Ունենք մոտ 200 բարգմանչի կարիք Յայաստանում, մինչդեռ ունենք 60 բարգմանիչ՝ բոլոր լեզուները իրար հետ: Խողումները նաև նաև ծեռք բերեն բարգմանչական հնտություններ, որովհետև լեզու ուսումնասիրել, դեռ չի նշանակում լինել թարգմանիչ: Գործը կա, արարե՞ք: Մշակույթի նախարարն ասել է՝ ցանկացած գործ բարգմաներ հայերեն կամ հայերենից օտար լեզվի, ինքը կաջակցի:

**-Ի՞նչ հատկանիշներով եք ընտրում աշխատավիճներին:**

-Ես պատասխանատվություն եմ կրում այդ ոլորտի համար: Դժվար եմ ճանաչում մարդուն և իմ աշխատավիճներին ասում եմ՝ այդ կիսալը մի արեք, սկզբում կասկածեք մարդուն, ուա Արամ Սմիթի, թե Դավիդ Ուկարոդոյի միտքն է՝ սկզբում կասկածեք, հետո կիայտնաբերեք նրա մեջ մարդուն՝ ուրախացեք: Եսկ հակառակ դեպքում՝ սիրահարվում ես մարդուն և հայտնաբերում, որ նա սրիկա է ու սկսում ես հիասթափվել: Ընդամենը մոտեցման խնդիր է: Ես հատկություն ունեմ սիրահարվելու. տեսնում եմ, առաջին հայացքից սիրահարվում, հետո հիասթափվում: Աշխատավիճների ընտրությունն անցնում է մի քանի փուլ. տարբեր տնօրեններ են անցկացնում հարցագրույցները, հետո՝ ես: Ըստ իս՝ ամենակարևոր հատկանիշներիցմեկը ազգանուններու պրոֆեսիոնալիզմը: Կարծում եմ՝ ազնվությունը կազմում է պրոֆեսիոնալիզմի մաս: Ես սիրում եմ կրկնել այս միտքը՝ աշխարհի ամենականը պետությունների դեկավարները, ամենականը կորպորացիաների դեկավարները ամենաշատը գնահատում են ծշմարտությունը, պատիվը, պատվախնդրությունը, գիտելիքը: Եվ ամենադեֆիցիտ արանքն այսօր աշխարհում ճիշտ խոսքն է: Այդ դեֆիցիտը ամենագնահատելին է: ճիշտ՝ չի նշանակում միայն ազնիվը: Օրինակ՝ դիլետանտը չի կարող ճիշտ խոսք ասել ֆիզիկայի բնագավառում: Պրոֆեսիոնալիզմը, պրոֆեսիոնալիզմ, մեր բնագավառի համար՝ գաղափարներ, գաղափարներ, գաղափարներ:

**Յարցագրույցը վարեց ԳՈՅԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**



**Սիրելի՝ ընթերցող, այսուհետ «Տնտեսագետի» պարբերաշարքերին կավելանա ևս մեկը՝ «Համաշխարհային բրենդ» խորագիրը: Հուսով ենք՝ ինչպես ստորև ներկայացվողը, այնպես էլ հետագա նյութերը ձեզ համար կլինեն ոչ միայն ծանաչողական, այլև կիսթանեն ձեր միտքը, գործնականությունը, կոգնորեն ու... Գուցե, եեռու չէ այն օրը, երբ ձեր շարքերում նույնպես բացառիկ տաղանդով ու աշխատասիրությամբ կկայանան համաշխարհային հրչակ վայելող բրենդի հայ ներկայացուցիչները և կյանքի կկոչեն «հայկական տնտեսական իրաշըր»:**

## ԲՐԻՆՉ ԵՓԵԼՈՒ ՍԱՐՔԵՐ ԱՐՏԱՌՈՂԻՑ

### ՄԻՆՉԵԿ ԱՇԽԱՐԴԱՐՈՂԱԿ SONY

ճապոնական գերիսկա «Matsushita»-ն 70-ականներին լիցենզավորեց տեսաձայնագրման «VHS» ստանդարտը: Միևնույն ժամանակ «Sony»-ն մշակել էր անհամեմատ ավելի բարձր որակով «Betamax» ստանդարտը, սակայն չկարողացավ լիցենզավորել այն: Այժմ «VHS»-ը համարվում է համաշխարհային ստանդարտ, իսկ «Betamax»-ն անցավ պատմության գիրկը: Թերևս, սա «Sony» ընկերության միակ բացրողումն էր իր՝ համաշխարհային բիզնեսի համար շրջադարձային պատմության մեջ:

Հետպատերազմյան ճապոնիան երկիրն ամբողջովին ավերակների մեջ էր: Մարդիկ, վերադառնալով ռազմաճակատից, փորձում էին վերականգնել իրենց բնականոն կյանքը և մի կերպ ապրուստի միջոց հայթայթել՝ զբաղվելով ճապոնական ավանդական արհեստներով, որոնք ժառանգվում էին սերնդից սերնդուն: ճապոնիայի ռազմաճովային ուժերի սպա Ակինոն նրանցից մեկն էր: Լինելով, ինչպես ինքն էր ասում, «ճապոնիայում սակե պատրաստող լավագույն և հնագույն ընտանիքներից մեկի տասնինգներորդ սերնդի առաջին և միակ ժառանգը», նա մտածում էր, թե կարող է շարունակել ընտանեկան բիզնեսը: Սակայն ավանդական խմիչքի սիրահարները մեծ կորուստ ունեցան, քանի որ ճասանգիտությամբ ֆիզիկոս Ակինոն այլ կոչում ուներ. նա պետք է հիմնադրեր աշխարհի տեխնիկայի ամենահզոր կայսրություններից մեկը: Մինչ ամենահզոր կայսրություններից մեկը՝ Սինչ ամենահզոր կայսրություններից մեկը դառնալը՝ «Sony»-ն կիսաքանդ մի տարածքում Ակինոն Մորիտայի և նրա ընկերոջ՝ Մասարու Իբուկայի կողմից հիմնված «Tokio Tsushin Kogyo KK» անունով կազմակերպությունն էր, որը զբաղվում էր ռադիոներունիշների ճասանիկներ և բրինձ եփելու սարքեր արտադրությամբ:

Եթևու, որոնք, ինչպես և ճապոնական արտադրության մնացած ապրանքները, որակական բարձր հատկանիշներով չեն փայլում: Ավելին, «Made in Japan» արտահայտությունը զուգորդվում էր ցածրորակ և էժան ապրանքների հետ: Մորիտան և իրուկան որոշեցին կուրտել այդ կարծրասիրը: Այս դժվարագույն խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր համար առաջինը դառնալ նախ սեփական երկրում, այնուհետև նաև ամբողջ աշխարհում:

Այսպես սկսվեց «Tokio Tsushin Kogyo»-ի հաղարշավը, որը 1958 թվականին վերանվանվեց «Sony» (sonus լատ.-ձայն): Ընկերությունը 1949 թվականից պարբերաբ հանդես է գալիս նորանություններով: Առաջին մագնիսային երիզով առաջին ձայնագրիչները, առաջին մագնիստոֆոնները՝ ձայնագրելու հնարավորությամբ, առաջին գրանային ռադիոներունիշները, տրամագիստորներով աշխատող առաջին հեռուստացույցները կրում էին հենց «Sony» անվանումը:

Եվ ընկերությունը մտավ միջազգային շուկա՝ զարկ տալով ճապոնիայի արդյունաբերական վերածննդին:

«Մենք ապրում ենք ազատ երկրում, - ասում էր Մորիտան, - և կարող ենք նշանակալի գործեր անել: Մենք ապացուցեցինք դա՝ փոխելով «Made in Japan» արտահայտության վատ համբավը: Այսուհետ այն համարվում է հուսալիության երաշխիք»:

Թերևս, վստահորեն կարելի է արձանագրել, որ «Sony» ընկերության հաջողության գրավականը գրագետ կառավարման մեջ էր, որը արտահայտվում էր երկու պարզ, բայց միևնույն ժամանակ հանճարեղ սկզբունքի մեջ՝ մեծագույն հարգանք յուրաքանչյուր աշխատողի հանդեպ և յուրաքանչյուրի լավագույն հատկանիշների բացահայտում: Նկարագրելով այն, ինչն ինքն անվանում էր «առաջատարի ոգի»՝ Մորիտան, փաստորեն, ծևակերպում էր իր Փիրմայի համաշխարհային հաղթարշավի փիլիսոփայությունը.

««Sony»-ն առաջատար է և երբեք չի ձգտել հետևել մյուսներին: «Sony»-ն ցանկանում է իր զարգացումը ծառայեցնել ամբողջ աշխարհին: Այն մշտապես կլի-

SONY®

Նի նորը և միայն նորը փնտրողը...»:

«Sony»-ի կողքին կային շատ ֆիրմաներ, որոնք ընդհամենը ոգեշնչված հետևողներ էին, մինչեւ «Sony»-ն թելադրում էր կատաղի արագություն՝ թողարկելով նորանոր արտադրանքներ, մեկը մյուսի հետևից նորամուծություններ նետելով շուկա: Այսպես, «Sony»-ն աշխարհին տվեց առաջին տեսախցիկը, առաջին տնային տեսամագնիստոֆոնը և դիսկետը: Սակայն նրա ամենամեծ հաջողությունը Մորիտայի փայլուն մտքի թրչքի արգասիքն է՝ «Walkman»-ը: Այս հօչակավոր արտադրանքի ստեղծման պատմությունն ընկերության լեզենդներից մեկն է: Մորիտան պարզապես նկատել էր, որ երիտասարդները սիրում են ամենուրեք երաժշտություն լսել: Մնացածն արդեն շատ պարզ էր. Մորիտան որոշեց արտադրել առաջին փլեյերը, թեև ընկերությունում ոչ ոք չէր հավատում դրա հաջողությանը: Առաջին փլեյերն, այդուամենայնիվ, արտադրվեց և անվանվեց “Walkman”:

Բրիտանական հասարակությունը գնահատել է Ակին Մորիտայի ավանդն անգլերենի զարգացման մեջ (խոսքը sony և walkman բառերի մասին է): Այնուամենայնիվ, Մորիտան չի հորինել walkman բառը: Բանն այն է, որ փլեյերն արտադրելուց հետո, եթե արդեն պետք էր գովազդային գործակալություններին հայտնել դրա անվանումը, Մորիտան գրասենյակում չէր: Նրա ենթականերից մեկը, որն անգլերեն, ամենայն հավանականությամբ, լավ չգիտեր, առաջարկեց walkman բառը, որն անգլերենից բառացի թարգմանությամբ նշանակում է «քայլել-մարդ»: Մորիտան, վերադառնալով, իրահանգեց փոխել անվանումը, սակայն ուշ էր. գովազդն արդեն հեռարձակվում էր բոլոր հեռուստաալիքներով: Սակայն ամերիկյան հասարակությունն այս տարօրինակ բառն այնպես սիրեց և ընդունեց, որ եթե «Sony»-ն թողարկեց փլեյերներ նոր, շատ ավելի գրագետ անվանումով՝ «Roundabout», ամերիկացի և անգլիացի գնորդները չէին ցանկանում դրանք գնել և պահանջում էին «Walkman»:

«Ես չեմ հավատում, որ մարտեթինգային նույնիսկ լավագույն հետազոտությունը կարող էր ցույց տալ, որ այն կունենար այդպիսի հսկայական հաջողություն», - հետազոյում խոստովանեց Մորիտան և այդ պահին էլ հայտնեց մի արտասովոր միտք, որը հզորագույն արտադրողների համար դարձավ թևակիր խոսք և աստվածաշնչան ճշմարտություն. «Մարդիկ չգիտեն ինչն է հնարավոր, ինչը՝ ոչ. դա գիտենք մենք»:

ճապոնիայում Մորիտան համարվում էր դարերով ձևավորված ավանդությունների խախտող: Բայց, այդուամենայնիվ, Մորիտան համարվում էր հենց արևելյան գործարար մարդու վառ օրինակ: «Sony»-ն դեկավարելու տարիների ընթացքում Մորիտան մշակել էր հաջողության յուրահատուկ փիլիսոփայություն, որն իր արտահայտությունն է գտնել նրա բազմաթիվ արսիումներում:

«Ծովայում մասնաբաժնը շատ ավելի կարևոր է, քան շահույթը»:

«Եթե Դուք ապրում եք՝ համոզված լինելով, որ Ձեր ընտրած ուղիները միշտ լավագույնն են, ինացած եղեք, որ բոլոր նոր մտահղացումները կշրջանցեն Ձեզ»:

«Մերենաների հետ աշխատելով՝ Դուք կարող եք լինել ամբողջովին ռացիոնալ: Բայց եթե աշխատում եք մարդկանց հետ, տրամաբանությունը երբեմն պետք է իր տեղը զիջ ինսուլիցիային»:

«Երբեք մի՝ խոչընդունեք մյուսների գործունեությանը. յուրաքանչյուր աշխատանք ունի արժանապատվության ի՞ր բաժինը»:

Որոշ մարդկանց մասին ընդունված է ասել, որ նրանց մահով ավարտվում է մի ամբողջ դարաշրջան: Ակին Մորիտան, անկասկած, արժանի է այսպիսի գնահատականի: 1993 թվականին ծանր հիվանդությունից հետո նա թողեց աշխարհի ամենահայտնի ընկերություններից մեկի գործերի կառավարումը, և 1994 թվականից «Sony Corp.»-ը գործում է ինքնուրույն: Ակին Մորիտան «Sony»-ն բրինձ եփելու սարքեր արտադրողից դարձեց աշխարհի ամենահայտնի կազմակերպություններից մեկը և միայն նոր սերնդի ինժեներներից է կախված, թե թողարկված հերթական նորությը կարժանանա բրինձ եփող սարքի՝, թե՝ «Walkman»-ի ճակատագրին:

ԱՍԴԻԿ ԱՐՐԱՋԱՍՅԱՆ



## ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԼՐԱՇԱՐՔ



Նոյեմբերի 25-ին բուհի կենտրոնական մասնաշենքի դիմանակատիմ՝ նոր ցուցանակների կողքին, փողփողաց ՀՊՏՀ նոր դրոշը: «Փոփոխությունները շարունակվում են, և դրոշի տեղադրումը հերթական քայլերից մեկն է: Այս կծնավորի բուհի նոր կերպարը և մասնակիցները տեղեկատվություն կիաղորդի:»,- մեզ հետ գրուցում ասաց դրոշների հեղինակ, «Բրեհինդ» ընկերության գործադիր տնօրեն, մարդերին ամբիոնի դասախոս Կարեն Բաբաջանյանը:



Նոյեմբերի 29-ին մեծ հանդիսավոր տեղի ունեցավ տնտեսագիտության դոկտոր, ՀՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, բիզնեսի կազմակերպման ամբիոնի պրոֆեսոր, նախկին ռեկտոր Լևոն Վարդանյանի ծննդյան 85-ամյա հոբելյանին նվիրված մեծարման հանդիսավոր արարողությունը:




Նոյեմբերի 3-ին կայացավ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի նիստը, որին նաև նկացում էին ՀՊՏՀ խորհրդի նախագահ Շովիկ Աբրահամյանը, ՀՀ կորության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աբրյանը, ՀՊՏՀ 2011 թվականի բյուջեում և ՀՊՏՀ կազմակերպական կառուցվածքում փոփոխությունները կատարելու մասին: Քերարկությունից հետո երկու հարցերն էլ ընդունվեցին միաձայն:

Օրակարգում ընդգրկված էր երկու հարց՝ ՀՊՏՀ 2011 թվականի բյուջեում և ՀՊՏՀ կազմակերպական կառուցվածքում փոփոխությունները կատարելու մասին: Քերարկությունից հետո երկու հարցերն էլ ընդունվեցին միաձայն:

Նոյեմբերի 21-ին մեկնարկեցին ՀՊՏՀ ուսանողական խորհրդի «Էկոնոմ թիզ» ամսագրի 10-րդ տարեղարձին նվիրված հոբելյանական միջոցառումները: Կենտրոնական նուտքում հավաքվածները հնչեցին շնորհավորանքի ու գնահատանքի խոսքեր, ապա բացվեց ամսագրի՝ տարբեր տարիների շապիկների ցուցահանդեսը: Հոբելյանական սորոթը կտրեցին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աբրյանն ու ուսանողական խորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը:



Նոյեմբերի 25-ին մեծ հանդիսարակություն կազմակերպվեց Արցախյան ազատամարտի հերոս, առաջին աստիճանի ՀՀ մարտական խաչ շքանշանի ասսետ, գեներալ մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը: Նա պատմեց իր անցած մարտական ուղղու մասին և պատասխանեց ուսանողներին հուզող հարցերին:



Լուս է տեսել կառավարման ամբիոնի դրենու Վալերի Միրզոյանի «Առաջնորդման մեթոդանությունը՝ ըստ Գագիկի Նժդեհի» վերտառությամբ գիրքը, որտեղ հեղինակը հակիրծ շարադրում և մեկնարանում է հայ երևելի քաղաքական, ռազմական, պետական գործիչ, ազգայնականության կարկառուն տեսարանի հայեցակարգը առաջնորդման էլեւրան, առաջնորդի բնութագրերի, իրավունքների և պարտականությունների, առաջնորդման մեթոդների մասին: Գիրքը նվիրվում է Գագիկի Նժդեհի ծննդյան 125-ամյակին:



Լուս է ընծայվել գիտության և արտաքին կապերի գծով պրոռենտոր, տնտեսագիտության դոկտոր Գագիկ Վարդանյանի «Գինը մարդերին գային համալիրում» ուսումնական ձեռնարկը: Այն առաջին հրատարակված գիրքն է, որի տիտղոսաթերթին պատկերված է համալսարանի նոր պատկերանշանը (լոգո):

Գրքում ներկայացված են գնի դերն ու նշանակությունը մարդերին գային համալիրի շրջանակներում, գնագոյացման դրոշումների վրա ազդող գործոնները, գնագոյացման մեթոդներն ու ռազմականությունները:

Նոյեմբերի 29-ին կառավարման ֆակուլտետում սկսվեց հեռակա ուսուցման կառավարում մասնագիտության վեց մասնագիտացումներով (գործարար կառավարում, պետական և մունիցիպալ կառավարում, սոցիալական մեծեջմենք, նախագծերի կառավարում, բանկային մեծեջմենք, ֆինանսական մեծեջմենք) մագիստրանտների ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունը: Դեկտեմբերի 20-21-ին մագիստրանտները հանձնեցին պետական քննությունները:



«Անցումային տնտեսություններում մրցակցային քաղաքականության մշակումը» թեմայով դասախոսությամբ նոյեմբերի 4-ին համալսարանում հանդես եկավ Զորջ Վաշինգտոն համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսոր Վիլյամ Կովաչիչը: Հանդիպման սկզբում ռեկտոր Կորյուն Աթոյանը ներկայացրեց Վիլյամ Կովաչիչի անցած ճանապարհն ու գործունեությունը:

Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Չարյանը իր խոսքում նշեց, որ Կովաչիչի հետ իրենց համագործակցությունը սկսվել է անցած տարվանից, երբ պրոֆեսորը եկել է Հայաստան և ուսումնասիրություններ կատարել մրցակցային միջավայրի գնահատման ուղղությամբ, ինչի արդյունքում կազմվել է Հայաստանի մրցակցային իրավիճակի նախն ՍԱԿ-ի գեկույցը:

Պրոֆեսոր Վիլյամ Կովաչիչը դասախոսության ընթացքում անդրադարձավ մրցակցության պաշտպանության հարցին, շեշտադրեց դրա կարևորությունը, ինչպես նաև դիտարկեց այս ուղղությամբ Հայաստանում կատարվող քայլերը՝ նշելով, որ մեր երկիրն իր համակարգով ճիշտ ուղղու վրա է: Պրոֆեսորը Հայաստանի մրցակցային համակարգի մասին խոսելիս նշեց, որ մեր երկրում առկա է համակարգն ավելի արդյունավետ դարձնելու և բարեփոխվելու կամք:

Հանդիպման ավարտին ռեկտոր Կորյուն Աթոյանը համալսարանի անունից հուշանվեր հանձնեց պրոֆեսոր Կովաչիչին:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը նոյեմբերի 3-ին հանդիպեց ամբիոնների վարչների հետ: Վերջիններս հանդես եկան 2011 թ. ընթացքում կատարված գիտահետազոտական աշխատանքների մասին հաղորդումներով: Պրոռեկտորը հորդորեց մասնակիցներին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, գիտնականների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին ապահովելու ուղղությամբ:



Նոյեմբերի 29-ին ՀՊՏՀ-ում մեկնարկեց Հայաստանի ազգային ուսանողական ասոցիացիայի, ՀՊՏՀ-ի և ԵՊՀ-ի ուսանողական խորհուրդների կազմակերպած հնգօրյա գագաթնաժողովը (YES)՝ նվիրված Համաշխարհային ֆինանսանտեսական ճգնաժամից հետո գործարարության ոլորտի երիկական խնդիրներին: «Երիկան և բիզնեսը 21-րդ դարում» խորագործ գագաթնաժողովին մասնակցեցին աշխարհի 15 երկրներից եկած ուսանողներ:

Նոյեմբերի 30-ին վարչապետ Տիգրան Սարգսյանը կառավարությունում ընդունեց ՀՊՏՀ-ում մեկնարկած «Երիկան և բիզնեսը 21-րդ դարում» (Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը և հետևանքները) խորագիրը կրող YES (Երիտասարդ տնտեսագետ ուսանողների) միջազգային հմգորյա գագաթնաժողովի մասնակիցներին: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Ավագյանը, ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի նախագահ Արմեն Ալեքսանյանը:



ՀՊՏՀ ուսանողական խորհրդի ուսումնագիտական հանձնաժողովը «Բաց դասի» շրջանակներում նոյեմբերի 15-ին հյուրներկալել էր «Լույս» հիմնադրամի կրթական ծրագրերի գործադիր տնօրեն Ժաքլին Կարաալանյանին, հասարակայնության հետ կապերի պատասխանատու Անահիտ Էվոյանին և տեղեկատվական համակարգերի կառավարման դեկանավար Հարություն Արքահամայնին: «Մեր նպատակը աշխարհի տարբեր ծագերում ապրող 18-40 տարեկան հայերին աշխարհի լավագույն ուսումնական կենտրոններում սովորելու հնարավորություն տալու է», - հանդիպմանը հայտարարեց Ժաքլին Կարաալանյանը:

Նոյեմբերի 24-27-ը ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի գլխավորած պատվիրակության կազմում պաշտոնական այցի շրջանակներում գտնվում էր Լիբանանում:

Հայաստանյան պատվիրակությունը պաշտոնական հանդիպում է ունեցել Լիբանանի հանրակրթության և բարձրագույն կրթության նախարար Հասսան Տիապի հետ: Քննարկվել են երկու երկրների կրթական համակարգերի զարգացման, մշակված կրթական նոր ծրագրերի և երկկողմ համագործակցության հեռանկարներին վերաբերող հարցեր: Ուեկտոր Կորյուն Աթոյանը հանդիպել է երեք համալսարանների ղեկավարների հետ:



ՀՊԾՀ տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մելքոնյանի 80-ամյա հոբելյանի առթիվ, ռեկտորատի նախաձեռնությամբ, մեծ հանդիսասրահում նոյեմբերի 10-ին կազմակերպվել էր մեծարման ցերեկոյթ, որի ժամանակ հնչեցին բազմաթիվ գնահատանքի խոսքեր, շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ:

Անվանի գիտնական, հասարակական ակտիվ գործիչ, վաստակաշատ դասախոս, բարի խորհրդատու, հրաշալի մարդ, ծնող ու պապիկ. այսպես ընութագրեց իր ավագ գործընկերոջը ռեկտոր Կորյուն Արյոյանը և բուհի կուլտուրի անունից Սերգեյ Մելքոնյանին հուշանվեր հանձնեց:

ՀՀ-ում ԼՂՀ նշտական ներկայացուցիչ Կառլեն Ավետիսյանը հրապարակեց ԼՂՀ նախագահի հրամանագիրը, որով Սերգեյ Մելքոնյանն արժանացավ պետական պարզվակ՝ «Երախտագիտություն մերակի»:

Գիտության և մանկավարժության երախտավորին ու մշակն հոբելյանի առթիվ շնորհավորական ուղարձ նոյեմբերի նախագահ Աշոտ Ղուլյանը: Ընթերցվեցին նաև ՀԱՕԿ նախագահ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի, Արցախի համալսարանի ռեկտոր Ստեփան Դադյանի, ճարտար գյուղի համայնքապետերի՝ բարեմաղթանքներով լի ուղերձներն ու հեռագրերը, հանձնվեցին հուշանվերներ:

Նոյեմբերի 21-ին նիստերի սրահում տեղի ունեցավ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի լույս ընծայած «Միկրոէկոնոմիկա» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը, որին նաև նախակցում էին ռեկտոր Կորյուն Արյոյանը, պրոռեկտորներ Գագիկ Վարդանյանը, Պարույր Քալանթարյանը, ՀՀ Աժ պատգամավորներ Արծվիկ Մինասյանը, Վահե Ջակոբյանը, Արա Նուանյանը, Վահե Էնֆիաջյանը, ինչպես նաև ամբիոնի վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, մագիստրանտներ, ուսանողներ:

Նեղինակային խմբի ղեկավար, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Միքայել Մելքոնյանը նշեց, որ ձեռնարկն արժարում է ձեռնարկությունների կառավարման, ձեռնարկատիրության կազմակերպման, շուկայական առաջարկի և այսպահանջարկի գնահատման և շուկայական մոդելների վերլուծության խմբիրները:



Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արմեն Ցուլուրյանի խմբագրությանը լույս է տեսել «Հաշվապահի գործադրան» խորագրով մատենաշարը: Ընդհանուր տեղի ունեցավ նոյեմբերի 26-ին «Էդիբ Պրիմո» հրատարակչության գրախանութում, որտեղ նախաձեռնող խմբին իրենց երախտագիտության խոսքն ուղղեցին ՀՊԾՀ կառավարչական հաշվառման և առողիտի ամբիոնի վարիչ, դոցենտ Լիանա Գրիգորյանը, ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ Արմեն Ջակոբյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը:



Դեկտեմբերի 5-ին աշխատանքներն սկսեց ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԲ) 33-րդ նստաշրջանի եղուակակիչ փուլը: Արդյունքների ամփոփումից հետո նրանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ բակալավրիատում առաջինից երրորդ տեղերը գրադեցրեցին Համականային Սալնագարյանը, Սահիա Ավանեսովը, Սարենիկ Կարապետյանը, իսկ մագիստրատուրայում առաջին մրցանակին արժանացավ Աստղիկ Ավետիսյանը, Երկրորդին՝ Գայանե Մեսրոպյանը, Երրորդին՝ Էդուարդ Ջակոբյանը:

Մարքեթինգի ամբիոնի դասախոս Կարեն Բարաջանյանը մարքեթինգ մասնագիտության 2-րդ կուրսում նոյեմբերի 25-ին անցկացրեց գործնական գիտելիքների հաղորդման դաս, որի ընթացքում էղուարտ Քանքանյանը ներկայացրեց Երևանի՝ որպես զբոսաշորջության կենտրոնի բրենդի ստեղծման պատմությունը:



2011 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՊԾՀ-ի և հեռակետային ավագ դպրոցների միջև կմքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում ռեկտորի հանձնարարականով ֆակուլտետների դեկանները կազմակերպեցին այցելություններ դպրոցներ, անցկացրեցին հանդիպումներ ու գրուցներ բարձր դասարանների հետ՝ «Իմ ապագա մասնագիտությունը» խորագրով:





Դեկտեմբերի 13-ին համալսարանում դասախոսությամբ հանդես եկավ հայկական դրամի գրանշանի հեղինակ Կարեն Կոմենդարյանը՝ լուսարաններով դրամի, դրամի, եւրոյի խորհրդապատկերների պատմությունը, բացահայտելով այս և այլ օտար արժույթների ընդհանրությունները, ներկայացնելով հետաքրքրական դրամագիտական փաստեր:

Դեկտեմբերի 12-ին կառավարման ֆակուլտետի աշխատանքի տնտեսագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողությի, «Հայաստանը եւ են» խորագործ շարադրությունների մրցույթի հաղթող Ուզա Աբրահամյանը ՀՀ նախագահի պաշտոնական պատվիրական կազմում մեկնեց Խոտակա և Վենետիկ:



Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Միհրդատ Ջարությունյանը դեկտեմբերի 1-ից նշանակվել է բուհի ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր:

Նորանշանակ պրոռեկտորի գործունեության առանցքային խնդիրներն ու ծրագրային անշերջները կներկայացնենք առաջիկություն:

Դեկտեմբերի 15-ին ՀՊԾՀ մեծ հանդիսարահում տեղի ունեցավ «Պարույր Հայկազն» երիտասարդ ճարտասանների մրցույթը, որին մասնակցում էին կառավարման ֆակուլտետի ինն ուսանողներ: Անփոփելով արդյունքները՝ մրցայանը մրցանակային տեղերը բաշխեց այսպես. 1-ին մրցանակ՝ Արմեն Արգորումցյան՝ կառավարում մասնագիտության 3-րդ կուրս, 2-րդ մրցանակ՝ Արկադի Սահակյան՝ պետական և մոլուխիպայլ կառավարում մասնագիտացման 4-րդ կուրս, 3-րդ մրցանակ՝ Լուիզա Աբրահամյան՝ հակածնաժամային կառավարում մասնագիտացման 3-րդ կուրս:



Դեկտեմբերի 15-ին, ՀՊԾՀ N 315 լսարանում թևածում էր ամանորյա տոնական տրամադրություն: Արձագանքելով կառավարման ֆակուլտետի դեկան Էդգար Ղազարյանի կոչին և ծեր բերելով Զեր պատիկի գլխարկներ՝ ուսանողությունը հավաքվել էր լուսանկարվելու: Նրանց խանդակառությանը միացան ուսկոտր Կորյուն Աքրոյանը, կառավարման ամբիոնի ղոցենտ Վալերի Միհրանյանը, կառավարման ֆակուլտետի փոխդեկան Սերի Բադայանը: Լուսանկարները կդառնան Ամանորի յուրօրինակ բացիկներ, որոնցով ուսանողները կշնորհավորեն ու կրարենադրեն մեկմեկու:



Դեկտեմբերի 19-ին ընթերցողներն ստացան ՀՊԾՀ ուսանողական խորհրդի «Էկոնոմ պյուս» ամսագրի նոյեմբերյան տոնական թողարկումը՝ նվիրված ամսագրի 10-ամյակին:

Այն ամբողջովին գունավոր է, ակնահաճոն և բազմաբռվանդակ:

Ֆինանսական հաշտարարի գրասենյակի «Սպառողների ֆինանսական կրթության իրազեկվածության բարձրացման ծրագրի» շրջանակներում հայտարարված «Լավագույն ուսանողական աշխատանք» մրցույթի հաղթողներ են դարձել ֆինանսական ֆակուլտետի արժեթղթերի շուկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողությի Յասմիկ Սալեազարյանը և հաշվապահական հաշվառման և առողջության փակուլտետի հաշվապահական հաշվառումն ըստ ճյուղերի մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Վիգեն Թարխանյանը:

Դեկտեմբերի 13-ին ՀՊԾՀ Գյումրու մասնաճյուղում մեկնարկեց հանրապետական գիտաժողով՝ «Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի Հանրապետության մարտահրավերները» խորագրով՝ նվիրված ՀՀ և ԼՂՀ անկախության 20-ամյա հոբեյաններին: Երօրյա գիտաժողովն ընթացավ երեք բաժանմունքում:

Գիտաժողովին մասնակցեց ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը:

Համալսարան սկսում է օտար լեզվի դասընթացներ դասախոսների համար: Դեկտեմբերի 15-ին անցկացվեց անգերենի մեկնարկային թեստավորում, որի արդյունքներով, ըստ լեզվիմացության, կդասակարգվեն ուսումնական խմբեր և կմեկնարկեն դասընթացները: Դասավանդման պատշաճ մակարդակի ապահովման համար կներգրավվեն մեր համալսարանի լավագույն դասախոսները, ինչպես նաև մասնագետներ այլ հաստատություններից:

Գիտելիքների բարձր և միջին մակարդակների խմբերում ընդգրկվածների համար բուհը կիրառի գեղեցի:

ՀՀ պետեկանութների կոմիտեի հովանավորությամբ համալսարանի ֆինանսական ֆակուլտետում կստեղծվեն երեք նոր ինտերակտիվ լսարաններ: Սկսված շինվերանորոգման աշխատանքներն ընդգրկել են N 210, 211, 212 լսարանները, որոնցից երկուսը հագեցած են լինելու նորագույն տեխնիկական միջոցներով՝ էլեկտրոնային գրատախոսակ, պրոյեկտոր, համակարգիչներ և նախատեսվելու են 30 ուսանողի համար: Իսկ 210 լսարանը, որպես նիստերի սրահ, կլիմա կենտրոնական մասնաշենքի կլոր սրահի նմանակը:

Դեկտեմբերի 20-ին նիստերի սրահում մակրոտնտեսական կարգավորում և կամխատեսում մասնագիտության 1-ին կուրսի մագիստրանտները դոցենտ Ծովինար Կարապետյանի ղեկավարությամբ ներկայացրեցին «Ստեղծարար (Կրեատիվ) միջավայրի ձևավորման մեխանիզմները ՀՊՏՀ-ում» թեմայով գիտահետազոտական խմբային աշխատանք: Ուշագրավ այս միջոցառմանը մասնակցում էին ռեկտոր Կորյուն Արյանը, պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը, մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ Իշխան Տիգրանյանը, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի ղեկան Աստոմ Մարգարյանը: Անդրադառնալով ՀՊՏՀ-ում նորամուծական կրթության անհրաժեշտության՝ ուսանողները նշեցին՝ դրա համար պետք է ստեղծվի համապատասխան միջավայր և ներկայացրեցին առաջարկությունների մի ամբողջ փաթեթ:

Ուսկոր Կորյուն Արյանը գիտահետազոտական խմբային աշխատանքի մասնակիցներին արդյունավետ աշխատանքի համար խրախուսեց դրամական պարգևով:



Դամալսարանում արդիականացվում է համակարգչային թեստային քննությունների համակարգը՝ համաձայն միջազգային նորմերի:

Կիրառվող նորամուծություններն ուսանողներին կօգնեն նախ՝ ճշշտ կողմնորոշվել, ապա խուսափել հիարավոր թյուրիմացություններից:



Դեկտեմբերի 23-ին համալսարանի նիստերի սրահում մակրոէկոնոմիկայի ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Մակրոտնտեսական վերլուծություն և կամխատեսում» (Մակրոտնտեսագիտություն, 3-րդ մակարդակ) նոր ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը: Ձեռնարկը լույս է ընծայվել վերոնշյալ ամբիոնի պրոֆեսորադասահոսական կազմի ուժերով՝ ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Իշխան Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ:



Լոյս է տեսել «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսի 2011 թվականի 2-րդ համարը: Այն ունի նոր շապիկ՝ յուրատիպ ձևավորմանը: Նորացված է նաև հանդեսի խմբագրական խորհուրդը: Խանդեսի գլխավոր խմբագիրն է ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դրույտ, պրոֆեսոր Կորյուն Արյանը:



Դամալսարանի գրադարանը համալույթ է 73 անուն, 94 կտոր մասնագիտական արդիական գրականությամբ: Ուսանողությունները ծեռարկեն ու դասագրեն 2011 թվականի հրատարակություններ են, արտերկրի և ոռու գիտնականների ուսումնասիրություններ: Դրանք ընդգրկում են մակրոտնտեսագիտության, միկրոտնտեսագիտության, վիճակագրության, գործարարության, ֆինանսների, կոմերցիայի, ապահովագրության, կառավարման, ծեռարկատիրության, աշխատանքի տնտեսագիտության, շինարարության տնտեսագիտության և այլ բնագավառներ:

# ՊԱՏԳԱՄՈՒՄ ՈՒ ՎԵՐՋԻՇՈՒՄ ԵՆ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

Նոյեմբերի 17-ը ուսանողության միջազգային օրն է, այն երիտասարդի տոնը, ով մուտք է գործել բարձրագույն ուսումնական հաստատություն, սովորում է, մասնագիտանում, մտքով ու հոգով հզորանում:

Չմոռանանք նաև, որ ուսանող լինել նշանակում է ապրել խենք ու խելառ օրեր, սովորել հարաբերություններ կառուցել ընկերների ու դասախոսների հետ ու անխուսափելիորեն ապրել զավեշտալի, անհավանական, զարմանահրաշ պահեր:

Յուրաքանչյուրիս կյանքում ուսանողական տարիները չխամրող հուշ են, որի ամենավառ դրվագները մտաբերում ենք ամենայն նանրամասնությամբ, վերապրում, հուզվում, երիտասարդանում:

Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Գարեգին Մխիթարյանը, միկրոէկոնոմիկայի և ծերոնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ Աշոտ Եղիազարյանը «Տնտեսագետի» խնդրանքով ուսանողությանն են հուման իրենց սրտի խոսքն ու խոհը և վերհուչի անմոռաց պատարիկներ:

## ԴԱՐՁԵ՞Ք ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐՈՌԸ ԳԱՐԵԳԻՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

**Ու**սանողական տարիների արժևորումը, որպես կանոն, վրա է հասնում ավելի ուշ, երբ արդեն ուսանող չենք լինում: Ուստի անհոգ օրերի վայելքն ըմբռշխնող ուսանողին ավելորդ չէ հիշեցնել. ժամանակն անվերադարձ հունով առաջ է ընթանում, շահում է նա, ով հասցնում է սովորել, զարգանալ:

Լայնախոհ, ուսումնատենչ. այսպիսին ենք ուզում տեսնել մեր ուսանողներին: Որպեսզի նրանք գինված լինեն ոչ միայն մասնագիտական գիտելիքներով, այլև հարուստ լինեն մշակութապես: Շատ են մշակութապես զարգանալու ճանապարհները, անգամ ժամանցն ու վայելքները կարելի է, ցանկության դեպքում, ծառայեցնել այդ նպատակին՝ կինո ու թատրոն, ցուցարահներ ու թանգարաններ, համերգներ, արշավներ, ընթերցանություն, ժամանակակից տեխնոլոգիաներ: Ուսանողության քամի՝ տոլկուն է այսօր օգտվում այս հնարավորությունից: Մտահոգ եմ՝ շատ քչերը:

Միրելի՝ ուսանողներ, ծեր հայացքը պետք է ուղղված լինի դեպի գիտություն, ազգային մշակույթ: Իսկ հայ մշակույթն ու գիտությունը պարարտ հող են:

Ուսանողության միջազգային տոնի լիիրավ մասնակիցը լինելու համար դուք պետք է քաջածանոթ լինեք մեր ազգային հարստությանը ու դառնաք դրա կրողը:

Մարդու կյանքում շատ կարևոր է ուսանողական տարիներին հաստատած, այնուիեւս ամրապնդած ընկերությունը: Չե՛ոք բերեք շատ ընկերներ, փոխհարստացրե՛ք ծեր հոգիները միմյանցով ու համարե՛ք դա թանկ ու նվիրական:

1959 թվականն էր: Երևանի պետական համալսարանի մեխմաք ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանող էի: Գիտելիք, որ աշխարհահռչակ մաքենատիկոս Սերգեյ Սերգեյանը մեզ պետք է դասավանդեր «Կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսություն» առարկան: Անհամբերությամբ սպասում էինք: Սերգեյանը մտավ լսարան և ողջունելով՝ ասաց:

-Ուզում եք, որ կարդամ վաստ հայերենո՞վ, թե՞ լավ ռուսերենով:

Բոլորս միաբերան պատասխանեցինք.

-Վաստ հայերենով:

Ընկեր Սերգեյանը վերցրեց կավիճը ու... սկսեց ռուսերենով:

Բողոքի և ըմբռսության ծայն բարձրացավ լսարանում: Սերգեյանն առանց հապաղելու՝ ընդհատված միտքը շարունակեց հայերենով: Նրա հայերենը հարուստ և սահուն էր, միայն ուներ ռուսերենի շեշտված առողանություն: Լսարանը կլանված ունկնդրում էր:

Գուցե, կարիք չկա մեկնարամելու: Այնուհանդերձ, ի՞նչն էր հետարրդրականը. ուսանողները չընկրկեցին անվանի գիտնականի մեծության առջև, իսկ նա չչարաշահեց իր մեծությունն ու ընդառաջեց մեզ:



## ԱՌԱՋՈՐԴՎԵԼ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽՍ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

**Ե**րբեք չի կարելի ասել, որ տվյալ ժամանակաշրջանում երիտասարդությունն ավելի վատն է, քան նախկինում, կամ էլ՝ հակառակը: Միշտ էլ կա շերտավորում. կան և՛ լավերը, և՛ վատերը: Երիտասարդությունը, ինչպես ողջ հասարակությունը, ապրում է սոցիալական, տնտեսական, քաղաքական, հասարակական կյանքով, և նրա վարքագիծն ուղղորդվում է այն ազդակներով, որոնք կան տվյալ հասարակարգում:

Այսօր էլ կա ուսանող երիտասարդության առաջավոր զանգված՝ խելացի, պատրաստված, և կարելի է եզրակացնել, որ կա այն ներուժը, որը կարող է նպաստել և՛ գիտության զարգացմանը, և՛ հասարակության առաջընթացին: Սակայն գոյություն ունի մի հիմնախնդիր. ամեն մի հասարակության առաջընթացի ամենակարևոր, էական գործոնն այն է, թե ինչպես են հասարակության տարբեր շերտերը, այդ թվում՝ ուսանող երիտասարդությունը, պատկերացնում իրենց ապագան: Քննադատական մոտեցումը էական է. այն բույլ է տալիս նոր հարթություններ, նոր ծալքեր բացահայտել, այսինքն՝ մտահորիզոն, աշխարհայացք, որոշակի նպատակներ ձևավորել: Ուսանողությունը պետք է քննադատական մոտեցում ունենա և՛ ուսումնառության, տվյալ դեպքում՝ տնտեսագիտության ուսումնասիրության, և՛ առհասարակ կյանքի բոլոր շերտերի նկատմամբ:

1987 թվականի հոկտեմբերի 17-ին Բարդամյան մետրոյի կայարանին հարակից հրապարակում, կապված Զարդարվողի դեպքերի հետ (հայ-ադրբեջանական վատքարացող հարաբերությունների պատճառով այս-տեղ լարված մքնողորս էր), կազմակերպվել էր ցույց: Ուսանողներով որոշեցինք մասնակցել, մեր ձայնն էլ լսելի դարձնել: Դասախոսներից տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Նորայր Մանասերյանը, ում հետ հաճախակի էինք գրուցում օրախմբիր հարցերի շուրջ, մեզ մենակ չքողեց, կանգնեց մեր կողքին: Ցույցը ցուցին, սակայն մեծ էր բոլորին ոգևորությունը. «Ամերիկայի ձայն» ռադիոկայանն այդ մասին հաղորդել էր ի լուր աշխարհի ...



## ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԿՈՒԶԵՒ ՏԵՍՆԵԼ ԻՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

**Մինչև տնտեսագիտական մայր համալսարան ոտք դնելը՝ յուրաքանչյուր ուսանող այն յուրովի է պատկերացրել: Այնուհետև իրականի ու երևակայականի սահմանագծում սկիզբ է առել ուսանողական կյանքը: Սակայն մտապատկերում միշտ ապրում է ցանկալին, երազայինը:**

Այսօր մեր ուսանողները «Տնտեսագետին» են վստահում իրենց մտքերն ու երազանքները սիրելի բուի ապագայի վերաբերյալ:

### *... ՈՐ ԿՈՐՑՐԱԾ ՂԱՍԱԺԱԾ ՄԵԾ ԿՈՐՈՒՏ ԼԻՆԵՐ*

Երբեմն թվում է՝ հենց իմ երազանքների բուհում եմ սովորում, երբեմն էլ՝ հիասթափության պահեր եմ ապրում: Դամալսարամն ինձ շատ բան է տալիս, սակայն իմ երազանքների բուհը մի փոքր այլ է...

Կուգենայի, որ վերանային թելադրության վերածված դասախոսությունները, լսարաններում չասվեին այնպիսի բաներ, որոնք ինքներս էլ կարող ենք կարդալ տարբեր դասագրքերում: Լիներ այնպես, որ բացահայելու ցանկությունն անհետ կորչեր, քանի որ ամեն կորցրած դասաժամ կլիներ նոր ու արժեքավոր գիտելիքի կորուստ:

Մեր բուհն ապագայում տեսնում եմ որպես գիտահետազոտական խոշոր կենտրոն, որտեղ ոչ միայն մասնագետներ են պատրաստում, այլև կատարվում են հետազոտություններ, հայտնագործություններ:

**ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
պետական և մունիցիպալ կառավարում, 4-րդ կուրս

### *ՔՄՂՅՐ ԵՐԱՋԻ ՊԵՍ*

Տանն եմ, վայելում եմ արձակուրդս: Թերթ, հեռուստացույց, համացանց... Չանձրացել ու հոգնել են մի քազմոցից մյուսը տեղափոխվելուց: Ե՞րբ է այս մի քանի օրն էլ անցնելու... Ընկդմվում են անուրջների ցանկալի աշխարհը...

Ահա կրկին համալսարանում եմ... Իմ համալսարանում: Հեռու քաղաքային աղմուկից, թոհութուից: Գեղեցիկ ու գողտրիկ վայրում տեղավորված հարմարավետ ուսումնակրթական ու գիտական մի համալիր՝ իր հանրակացարաններով, հարուստ գրադարանով, կինո- և համերգային դահլիճներով, մարզարաններով, լողավազանով: Այստեղ ենք անցկաց-

նում օրվա մեջ մասը:

Առավոտ վաղ շտապում են դասի: Պիտի հանդիպեմ «Միկրոէկոնոմիկայի» դասախոսիս: Քննարկելու ենք Ազգային ժողովի ընդունած նոր օրինագիծը, և պարզելու ենք՝ կօգնի՞ այն արդյոք օտարերկոյաներդողներին: Հաջորդ դասը գործնական պարապմունք է. լսելու ենք ընկերներից մեկի պատրաստած զեկուցումը՝ նվիրված աշխարհը պարուրած ճգնաժամին: Տեսնես նոր բան կասի՞: Շուտով երկար դասամիջոցներ: 30 րոպե ժամանակ ունենք քայլելում ենք մեզ համար շատ սիրելի ու հաճելի մի վայր՝ բոլոր սնվում ենք, մի փոքր հանգստանում և շտապում ժամանակակից տեխնոլոգիաներով հարուստ մեր լսարանը՝ գործարար խաղերի միջոցով մեր տեսական գիտելիքները գործնականություն կիրառելու: Հետո

էլ մասնակցելու եմ բուհի ղեկավարման խորհրդի նիստին. այնքան հարցեր կան քննարկելու:

Շուտով դասերը կավարտվեն, և խնբով կգնանք մարզադաշտից, որտեղ բասկետբոլի մեր հավաքականը փորձելու է նվաճել միջբուհական խաղերի շեմպիոնի կոչումը:

Որքան արագ է անցնում ժամանակը, իսկ անելիքներ դեռ շատ կան: Կվիորձեմ դրանք ավարտել տանը՝ հանացանցի միջոցով:

-Վե՞ր կաց, դասից ուշացա՞ր, - ծայն է տալիս մայրիկս: Արթանում եմ: Տրամադրությունս բարձր է: Երազս այնքան լավն էր, այնքան իրական:

**ԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
գրուաշրջության կառավարում,  
հեռակա ուսուցման 3-րդ կուրս

## ՈՉ ՄԻԱՅՆ ԲՈՒԺԸ ՓՈԽՎԵՐ, ԱՅԼԵՎ ՈՒՍԱՆՈՂԸ

Այսօր մեր համալսարանը փորձում է փոխել պահանջական, իին մոտեցումները, քայլել ժամանակին համընթաց:

Ուզում ենք, որ մեր բուհը ոչ միայն հիմնարար գիտելիքներ տա, այլև որպես գիտական մտքի կենտրոն՝ համագործակցության պայմանագրեր կնքի աշխարհի ճանաչված բուհերի հետ: Իսկ մինչ այդ կարելի է արդյունավետորեն աշխատել հանրապետության առաջատար կազմակերպությունների հետ, որպեսզի բուհն ավարտենք ոչ միայն տեսական, այլև փորձնական գիտելիքներով: Կարծում ենք՝ պետք է թողարկվեն նաև ազգետներ, որոնք պատրաստ են աշխատանքի շուկայում իրենց տեղն ունենալ: Դրա համար մեջ ուշադրություն պետք է դարձվի ոչ միայն փորձառության ճիշտ կազմակերպմանը, այլև օտար լեզուների, համակարգչային գիտելիքների ուսուցմանը: Դասաժամը՝ 80 րոպեն, պետք է անցնի

ակնթարթի պես՝ հագեցած քննարկումներով, հարցադրումներով, բանավեճերով:

Շատ կուգենայինք, որ ոչ միայն բուհը փոխվեր, այլև ուսանողի մտածելակերպը: «Մեծ երազանքը» ընդամենը դիպլոմ ձեռք բերելը չիներ: Իհարկե, ապագայի բուհի համար պակաս կարևոր չեն նաև սպասարկման ծառայությունները՝ բոլորով, գրադարանը: Օրինակ, որքան լավ կլիներ, եթե արդյունավետորեն գործեր էլեկտրոնային գրադարանը, և կարողանայինք արագորեն ձեռք բերել անհրաժեշտ գրականություն:

Կարծում ենք՝ մոտ ապագայում մեր ցանկությունները կիրականանան և կունենանք ծաղկազարդ բակով, կանաչապատ, հյուրընկալ գիտակրթական միօցախս:

**ՆՈՆԱ ԵՐԻՅԱՆ  
ՍԱԹԵՆԻԿ ԿԱՐՍՊԵՏՅԱՆ**  
հաշվապահական հաշվառում և առւղիտ, 4-րդ կուրս

## ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆՈՒ ՓՈԽՎՈՒՄ ԵՆՔ

Իմ համալսարանը լավագույնն է բոլոր բուհերի մեջ: Սիրեցի իմ ֆակուլտետը, մասնաշենքը, լսարանը և նույնիսկ այն նստարանը, որտեղ նստել եմ չորս տարիների ընթացքում: Սիրում են իմ դասախոսներին. նրանցից շատերն օրինակ են ինձ համար և մեծ ներդրում ունեն իմ կայացման գործում: Անընդհատ իշշում են նրանց խորհրդարդը. «Եթե ձեր նախընտրած գործը կատարեք սիրով ու նվիրվածությամբ, պարտքի գգացումով, կլինեք գոհ ու երջանիկ: Լավ ստվորեք, գիտելիքներ ձեռք բերեք և դարձնեք 21-րդ դարին արժանի մարդիկ»:

21-րդ դարի իմ համալսարանը կատարյալ չէ, բայց զգուում է կատարելության («Մենք փոխվում ենք»): Կատահ եմ, որ այն ապագայում չի գիշելու աշխարհի լավագույն բուհերին:

Ապագայում իմ համալսարանը ցանկանում եմ տեսնել ամբողջովին վերանորոգված, հագեցած նորագույն տեխնոլոգիաներով, համալրված բարձր որակավորում ունեցող առաջատար մասնագետներով: Լավ կլիներ, որ ուսանողների

ուժերով դասախոսների գնահատման վարկանիշային ցուցակներ ստեղծվեին և ուսանողը կարողանար ընտրել լավագույն դասախոսին: Շատ լինեին այնախիի տարածքները, որտեղ ուսանողը ազատ պահերին ինքնուրույն աշխատել կարողանար, շփվեր ընկերների հետ, կազմակերպեր քննարկումներ: Կցանկանայի, որ ուսումնառության ողջ գործընթացը համապատասխաներ բուհի «Մասնագիտացում, փորձ, հնարավորություն» կարգախոսին, ունենայինք սեփական համագետստը (արդեն ունենք լոգոն):

Մի խենք ցանկություն էլ ունեմ՝ թո՞ղ որ մեր ֆակուլտետի դեկանը միշտ լինի եղագար Ղազարյանը, որովհետև նրա նման, գործին նվիրված մարդիկ պետք են բոլոր ժամանակներում:

Ապագայի իմ բուհը տեսնում են որպես աշխարհի տնտեսագիտական միտքն առաջ մղող կենտրոն:

**ԱՇԽԵՆ ԿԵՍՈՅԱՆ**  
հակածագնաժամային կառավարում, 4-րդ կուրս

## ՀԱՅԵՐԵՍԸ ՎՏԱՍԳՎԱԾ



**Դ**արգելի ընթերցողներ, այս խորագիրը ձեզ ծանոթ է 2003 թվականի հոկտեմբերյան համարից. արդեն 57-րդ անգամ միևնույն հերինակը՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, կառավարման ամբիոնի դոցենտ **Կալերի Միրզոյանը** մեր էջերում քննարկում է հայերենի անաղարտության հարցերը՝ հորդորելով համատեղ ջանքերով պատվել առավել տարածված լեզվասխալներից:

Դոկտորական հատկապես առտնին բառագործածությանը վերաբերող «Մենք գիտենք, որ Դուք գիտեք, բայց...» բառարան-հիշեցումը, ընթերցողների շատ մեծ շրջանակ ունի: Մեր այս հրապարակումների շնորհիվ, դրանց ամփոփմանը լույս տեսավ Վ. Միրզոյանի «Հայերենը՝ անաղարտ» գրքում՝ որպես ուսանողության համար հույժ պիտանի մի ձեռնարկ: Հեղինակը նախանձելի հետևողականությամբ մեզ համոզում է, որ, իրոք, «Հայերենը վտանգված է»: Վտանգված է հենց մեր՝ լեզվակիրներիս անհոգության պատճառով, նաև՝ օտարալեզու մշակութային ներխուժման հետևանքով: Այսօրվա պաշտոնական խոսքը, եթերի լեզուն, դասագրքերի մեջ մասը, հրապարակային գործույնները, գովազդը իսկական սպառնալիք են դարձել հայեցի լեզվանուածողության համար: Եվ ուրեմն՝ հոդվածաշարը շարունակելի է, բայց...

Բայց լեզուն ոչ մենքիս մենաշնորհը չէ, ոչ էլ լեզվահսկողությունն է միայն մենքի կամ մի քանիսի պարտականությունը (Վ. Միրզոյանի դեպքում՝ նաև ճակատագիրը): Առաջին հսկ հոդվածից մենք բոլորին ենք հրավիրել այս խորագիր ներք հանդես գալու, արտահայտվելու, նոտահոգությունները շարադրելու, խորհուրդներ տալու, առաջարկություններ անելու... Հրավիրել և նորովի հրավիրում ենք ոչ թե ի պաշտոնե կամ սոսկ մասնագիտության պարտադրանքով: Բնավ, սա մասնագիտական նկրտումների և ինքնահաստատման ասպարեզ չէ, այստեղ հարկավոր է թե՝ մասնագիտական հմտություն և թե՝ հոգևոր խռովը: Հրավիրում ենք հանդես գալու բոլոր նրանց, ովքեր մտահոգ են հայոց ոսկեթեմիկի վտանգված վիճակով, ովքեր շահագրգիռ են նպատակասլաց ու ազգաշահ պետական լեզվաբաղաքականությամբ, ովքեր ուզում են լսել առինքնող հայերեն, ովքեր իրենց պատասխանատու են գգում պետական լեզվի ներկայի ու ապագայի համար:

ԱՅՍՔԱՆԻ ԻՐԱՐԱՑՈՒՄ  
«ԱԺԻՌԱՋԻ» ԾՐԻՉ

«Երբ աժիՌՈՏԱԺԻ մեջ են լինում ընդունածիր ուժեղը կամ անգամ իշխանության հարակից քաղաքական թևերը, ապա այդ ամենը հասկանալի է նրանք ունեն իշխանության այս կամ այն սցենարին միշտ պատրաստ լինելու և համարժեք պատասխան կամ հակադարձում ունենալու խնդիր: Բայց երբ աժիՌՈՏԱԺԻ մեջ է լինում իշխանությունը կամ հիմնական իշխանությունը ինքնին, այդտեղ արդեն հարց է առաջանում ինչի՞ն է փորձում պատրաստ լինել իշխանությունը: Իսկ իշխանությունը Հայաստանում ներկայում ակնհայտ աժիՌՈՏԱԺԻ մեջ է» («Ժամանակ», 19 հոկտեմբերի 2011 թ., էջ 3, «խմբագիր սյունակ»-ից):

Այսպես անհարկի կրկնվող բառը ներառված է Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում», նշանակում է՝ 1) «բորսայական արժեթղթերի սպեկուլյացիա կապիտալիստական երկրներում», 2) «զանազան սպեկուլյացիաների հետ կապված հոլովում»: Բառարանը լույս է տեսել 1976 թ., անցել է 35 տարի, ամենակարևոր հասարակարգ է փոխվել: Փոխվել է լեզվանուածողությունը. այսօրվա սերնդին շատ դժվար է բացատրել հենց «սպեկուլյացիա» բառի հնաստրը: Մի խոսքով, ժամանակն առաջ է գնացել ... Ի դեպ, մի քանի տարի ավելի ուշ՝ 1984-ին լույս տեսած «Հայ-ռուսերեն բառարանում» հայերեն բառացանկում «աժիՌՈՏԱԺԻ» արդեն չկա:

«Իրարանցում», «Եռուգեռ», նաև (ոճի հարց է) «Խլրտոց» բառերն արդյոք չե՞ն կարող փոխարինել այս եկվորին: Ըստ իս՝ «աժիՌՈՏԱԺ»՝, ինչպես և օտարամուտ շատ այլ բառեր, որքան էլ ախորժելի լինեն ոմանց քիմքին՝ ժամանակն է, որ վերջնականացես հրաժեշտ տան հայոց բառապաշտին: Մի վտանգ են, ավաշի, տեսնում. ֆրանսերենից (agiotage) ռուսերենի (ажиոտаж) միջոցով հայոց լեզու բահանցած այս բառին, կարծեք, հաղթական, շնորհալից կերպով փոխարինում է անգլերենից ներխուժած դրայվը (drive)՝ «մղում», «շարժում», «եռանդ» հնաստով: Զգուշանանք այս «տորոյական ձիերից»:

## ՀԱՅՎԱՐԴ, ԹԵՇԿՐՏՈՒՄ

«Այսպիսով, հարկան երկրների հետ առկա խնդիրների «զրոյական» մակարդակի իշեցնելու Անկարայի դիրքորոշումը կանգնել է սպառնած շեմին: Դրան զուգընթաց իշխեն դարձել Մերձավոր և Սիցին Արևելքում առանցքային դեր խաղալու Թուրքիայի հաշվարկները, որովհետև արաբական երկրներում ծայր առած համաժողովրդական խոռվությունների ընթացքում, բացի Սիրիայից, Թուրքիան անհարկի միջամտություններով հարաբերությունները սրել է նաև Եգիպտոսի և Լիբիայի

հետ» («Ազգ», 25 հունիսի 2011 թ., էջ 5):

«Դիրքորոշման սպառվել» բառակապակցությունը ոճականորեն և տրամաբանորեն անհաջող է. դիրքորոշումը կարող է փոխվել, բայց սպառվում է պաշարը, ժամանակը, համբերությունը և այլն:

Ավելի խոցելի է «հաշվարկների ի չիք դառնալու» ձևակերպումը: Սա ռուսաբանության հետևանք է: Երբ ռուսերեն ասվում է «ռասսչիտված ու պահանջական», դա ոչ մի կապ չունի հաշվարկների հետ. ընդամենը նպատակադրման մասին է վկայում: Այնպես որ՝ ի չիք են դառնում, ձախողվում են նպատակները, հույսերը:

Ի դեպ, Թուրքիան բնավ էլ չի հրաժարվել իր մեծապետական նպատակադրումներից, ավելի հաջող եթե բնորոշենք՝ **Ակրտումներից** (ապացույց՝ էրդողանի շքեղ ընդունելությունը Եգիպտոս կատարած վերջին այցելության ժամանակ):

## **Հակումը՝ վերնագրում**

### **ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՐ ՄԵԿ**

«Յամար առաջին օրինակը հեղինակը նվիրել է համրապետության նախագահին»

(«Հ2» հ/թ, 18 նոյեմբերի 2011 թ., «Լրաբերի» հաղորդավարի խոսքից):

### **ԾԱՌՍ ԶԵՂԱՎ ԱՎԱՐ ԾՆԿԻ ԵԿԱՎ**

«....Ծառս եղավ ծանրության տակ»

(«Հ1» հ/թ, 13 նոյեմբերի 2011 թ., ծանրամարտի աշխարհի՝ հայերիս համար անփառունակ, առաջնության հեռուստամեկնարանի խոսքից):

### **ԿԱՐԴԱՑԻՆՔ ԽՈՒՃԱՊԱՀԱՐ ԵՂԱՎԸՔ**

«Մարդիկ պանիկայի մեջ են»

(«Հրապարակ», 30 սեպտեմբերի 2011 թ., էջ 6, հոդվածի վերնագիր):

### **ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԶՈՂ ԵՆ ԱՆՑԵԼ**

«Խուսափելով ինքնագովությամբ զբաղվելուց, նշեմ, որ երկուսի դասախոսություններն էլ ստացվեցին»

(«Ազգ», 2 ապրիլի 2011 թ., էջ 2):

## **ԱՌՏՏՄԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ - 27**

Մենք գիտենք, որ Դուք գիտեք, բայց...

Աղեկվատ – համարժեք  
ակտուալություն – իրատապություն  
բրիֆինգ – ծեպազրույց  
էպիտետ – նակդիր  
թեզ – դրույթ, խնդրակ  
ժյուրի – մրցատյան  
իյուզիա – պատրամք  
իմիտացիա – նմանակում  
ինտերնետ – համացանց  
լիխարադկա – տենտ  
[ծրայր] – [ծրայր]  
կարինետ – աշխատասենյակ  
կոմենտարիա – մեկնաբանություն  
կոմկրետ – որոշակի  
մոնիթորինգ – մշտադիտարկում

նոնսենս – անմտություն  
շանս – հնարավորություն  
պածերժկա – սատարում, աջակցություն  
պոտենցիալ – ներուժ  
պրիբոր – սարք  
պրովոկացիա – սադրանք  
ռուբին – սուտակ  
սվերլո – գայլիկոն  
ստատուս – կարգավիճակ  
տուժված – տուժած  
տուրնիկետ – դառնակ  
փուզա – վրձին  
[քըթնել] – [գըթնել]  
օպորտունիստ – պատեհապաշտ  
ֆիսկալ – գանձարանային

«Ուսանողի գիտական քայլեր»  
 խորագիրն ամբիոն է տրամադրում  
 բոլոր այն ուսանողներին, ովքեր  
 կատարում են գիտահետազոտական  
 աշխատանքներ, հանդես են  
 գալիս տնտեսագիտության  
 հիմնախնդիրների լուսաբանմամբ,  
 ինքնուրույն վերլուծությամբ և  
 ուշագրավ դիտարկումներով: Այս  
 անգամ սույն խորագրի ներքո  
 տնտեսության կարգավորման  
 և միջազգային տնտեսական  
 հարաբերությունների ֆակուլ-  
 տետի տնտեսագիտության  
 տեսություն մասնագիտության  
 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ  
 Դայրապետյանը քննարկում է ԵՄ - ՀՀ  
 հարաբերությունների հեռանկարները:

ԽՍՀՄ փլուզումից հետո, օգտվելով Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական ժամանակավոր դժվարություններից, Արևմտաքանակական անմիջապես փորձեց ներքաղանձել Անդրկովկասյան հանրապետություններ, որոնք դրսևորեցին պատրաստականություն Եվրոպական և գլոբալ համակարգերին ինտեգրվելու առումով: Եվրոպական ինտեգրման գործընթացներում ներգրավումը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցությունը ՀՀ արտաքին քաղաքականության հիմքում են՝ որպես հեռանկարային նպատակ:

Եվրոպական միուրիունը տնտեսական և քաղաքական միավորում է, որն իր գործունեությունն իրականացնում է անդամ երկների հիմնադրամ կառույցների միջոցով: Այն ընդգրկում է 27 երկիր, ընդհանուր առմամբ, շուրջ 500 մլն բնակչությամբ: Վարչական կենտրոնը Բրյուսելն է:

ԵՄ-ՀՀ համագործակցությունն սկսվել է 1991 թվականին, ԽՍՀՄ փլուզումից հետո՝ TACIS (Technical Assistance to the Commonwealth of Independent States) ծրագրի շրջանակներում: TACIS-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկներին օժանդակող հիմնական գործիքն է՝ միտված շուկայական տնտեսություն կառուցելուն, ժողովրդավարության անրապնդմանը, օրենքի գերակայության ապահովմանը և կառավարման կարողությունները զարգացնելուն:

Անցումային շրջանում ՀՀ ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացման գործընթացներում արձանագրված հաջողությունները կարևոր նշանակություն ունեն ԵՄ-ի համար: Վերջինս շահագրգության է կայուն հարևաններ ու ներնայլու, նրանց հետ փոխշահավետ քաղաքական և տնտեսական հարաբերություններ հաստատելու, առաջընթացին աջակցելու գործում: Հայաստանում իրագործվող տարբեր ծրագրերի միջոցով ԵՄ-ն ապացուցեց, որ, իրավամբ, մեր հանրապետության գործընկերն է և ջանում է օգնել նրա անցմանը դեպի շուկայական տնտեսություն ու կայուն ժողովրդավարություն: Իր հերթին, ՀՀ կառավարությունը համակարգում է նշված համագոր-

## ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ



### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

#### Անդրանիկ Մարտիրոսյան

Ժակուական և զարգացման հեռանկարները ժակուական և զարգացման մի շարք կարևոր խնդիրներ (հնարավորինս նվազեցնել կաշառակերպությունը, աղբատությունը և սոցիալական անհավասարությունը, խթանել տնտեսական աճը՝ միջազգային առևտությունը):

ԵՄ-Ն միակ բազմակողմանի դրոնորն է Հայաստանում. նրա օգնությունը դրսևորվում է մի շարք ծրագրերով (TACIS, Պարենային ապահովում, Բացարիկ ֆինանսական աջակցություն, Մարդասիրական օգնություն և ժողովրդավարություն, Մարդու իրավունքների Եվրոպական նախաձեռնություն և այլն): Այդուհանդերձ, ՀՀ-ԵՄ հարաբերությունների անկյունաքարը Գործընկերության և հանգործակցության համաձայնագրին է, որով ամրագրվում են ժողովրդավարության սկզբունքները, մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարգումը, ինչպես նաև շուկայական տնտեսության ամրապնդումը: Ներկայուն ՀՀ-ԵՄ համագործակցությունն իրականացվում է չորս հիմնական ոլորտներում, որոնք ընդգրկում են ժողովրդավարությունն ու արդյունավետ կառավարումը, տնտեսությունը, մարդասիրական ոլորտը, մարդկային շփումները: Հայաստանն արդյունավետ կերպով ընդգրկված է նշված մակարդակների աշխատանքներում, ինչը ոչ միայն մեր, այլև Եվրոպական գործընկերների գնահատականն է: «Արևելյան ներդրումներ» ծրագիրը մեծ կարևորություն ունի ՀՀ տնտեսական բարեփոխումների ճանապարհին և հետագա առավել սերտ փոխարժակցության հնարավորություններ է բացում: ԵՄ-Ն Հայաստանի հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցություններ է սկսել, որոնք բավական լավ են ընթանում և նախանշում են առավել սերտ քաղաքական և տնտեսական համագործակցություն: Հայկական կողմն օգնություն է ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի դրույթում անհրաժեշտությունը, ինչը տնտեսական և քաղաքական համագործակցության բարձր արդյունավետ քայլեր ծեղնարկելու անհրաժեշտությունը, ինչը տնտեսական և քաղաքական համագործակցության բարձր արդյունավետության երաշխիքը կդառնա:

Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում ազատ առևտորի գոտու ստեղծման ուղղությամբ: Մեր հանրապետության համար այն կարևոր նշանակություն ունի ոչ միայն ազգային տնտեսության զարգացման ու ընդլայնման, այլ նաև համընդհանուր առաջընթացի ու համաշխարհային շուկային ինտեգրվելու առումներով: Թվարկենք այն խնդիրները, որոնք ծառացած են մեր երկրի առջև և որոնք հնարավոր են լուծել ազատ առևտորի գոտու ստեղծելու դեպքում:

Տնտեսական ոլորտում կարձանագրվի ազգային և օտարերկրյա կապիտալի ներգրավում, պատրաստի արտադրանքի արտահանման ծավալների մեծացում, տարածաշրջանային զարգացման խնդիրների լուծման ուղղությամբ բանաձևերի մշակում և կիրառում:

Սոցիալական ոլորտում տեղի կունենա բնակչության զբաղվածության մեծացում, նոր աշ-

խատաժեղերի ստեղծում, գործազրկության կրճատում, բարձրորակ մասնագիտացված աշխատութի ձևավորում՝ համաշխարհային փորձի ուսումնասիրության և ուսուցման միջոցով:

Գիտաժեխնիկական ոլորտում կնկատվեն նորաստեղծական և ներդրման գործընթացների աշխատացում, օտարերկրյա գիտաշխատողների ներգրավում, արտադրական հզորությունների օգտագործման արյունավետության բարձրացում: Եվրամիություն-Հայաստանի Հանրապետություն հարաբերություններում առկա է առավել խոր գործակցային կապեր հաստատելու երկողմանականություն: Անշուշտ, այստեղ չեն շրջանցվում մեր երկրի առաջընթացին նպաստող բարեփոխումների իրականացումը, ինչպես նաև Հարավային Կովկասում կայունության և վստահության մթնոլորտի ձևավորումը:

## ԿԱՏԱԿԱՍԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

«Կատակասերի անկյունը» ընթերցողին է ներկայացնում իրական ծիծաղաշարժ դրվագներ, որոնք այս անգամ գրի առել և «Տնտեսագետին» է ներկայացրել ֆիզդաստիարակության ամբիոնի վարչի, պորֆեսոր Լևոն Սամվելյանը:

## ԽՆԴՐԻԿՆԵՐ ԼԵՎՈՆ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ՆՈՐԱՅԵՐԻՑ

Երկու ուսանող ֆիզկուլտուրայի դասին վիճում են, թե ում գլուխն է ավելի մեծ: Միջամտում է դասախոսը.

-Մի՛ վիճաբանեք, ավելի լավ է մոտեցե՞ք կշեռքին:

Տղաները, լուրջ դեմք ընդունելով, պառկում են հատակին և գլուխները դնում կշեռքին:

Մրցանակատի նախորդ օրը, երեկոյան, ստուգելով ընթիշների քաշը, մարզիչը վստահ էր, որ բոլորն ել առավոտյան հանդես կգան իրենց քաշային կարգերում: Բարի գիշեր ու բարի երազներ մաղթելով մարզիկներին՝ նա գնում է քնելու:

Առավոտյան ստուգումների ժամանակ հայտնաբերվում է, որ մեկի քաշն ավելացել է 2 կիլոգրամով:

-Ինչպե՞ս պատահեց, - խուճապահը ու բարկացած բղավում է մարզիչը:

-Երազում գարեջուր եմ խմել, - դեմքի անմեղ արտահայտությամբ պատասխանում է մարզիկը:

Դասավանդ ժամանակ ֆիզդաստիարակության դասախոս X. X.-ը, փորձելով բանիմաց ու գիտակ մասնագետ երևալ, բարդ իրահանգներ է տալիս.

-Ազ դա՞րձ, ետ դա՞րձ, մեկ քայլ հե՞տ, երկու քայլ առա՞ջ, աջ ուսն առա՞ջ, ձեռքերը գոտկատեղին, մա՞րշ, և ... Հասկացա՞ք, ուրեմն, բոլորս միասին...

Չեր հասցրել իրահանգներ, երբ ուսանողներից մեկը տեղից սրամտեց.

-Ծո՛, ըսիդ ֆիզկուլտուրնիկ չէ, ֆոկուսնիկ ե...

«Քաղաքատնտեսություն» առարկայի դասաժամին, փողի թեման բացատրելիս, դասախոսը հետսորական հարց է ուղղում լսարանին.

-Ի՞նչ է փողը:



-Զեռքի կեղտ, - հետևում է ուսանողի անմիջական պատասխանը:

Առաջին կուրսում քիմիայի գործնական պարագաների ժամանակ դասախոսն ուսանողին հարցնում է.

-Կարո՞՞՞ ես գոել ջրի ֆորմուլը:

-Իհարկե, - ինքնավստահ պատասխանում է ուսանողը:

Քիչ անց գրատախտակին գրվում է՝ ջ ու ր:



**Թերթելով պատմության էջերը, ուսումնասիրելով գերտերությունների վերելքներն ու անկումները, հետևելով, թե ինչպես են տիրակալները հաջորդել մեկը մյուսին՝ փորձում ես հասկանալ, թե ո՞րն է տրամաբանությունը, ի՞նչն օգնեց Ալեքսանդր Սակեղոնացուն իր հաղթարշավում, ինչի՞ շնորհիվ Նապոլեոն Բոնապարտը դարձավ Ֆրանսիայի կայսր, ի՞նչը տապալեց նրա կայսրությունը, և, վերջապես, ինչպես Օտտոն ֆոն Բիսմարկը պրուսական պառլամենտի պատգամավորից դարձավ «առողպատյա կանցելը» ... Ո՞րն էր նրա գաղտնիքը... Այս հարցերի պատասխանը փորձեցինք տալ՝ ժանոթանալով Բիսմարկի կերպարին ու ռազմավարությանը՝ ըստ Ոոբերտ Գրինի, Վիթիպեդիա ազատ հանրագիտարանի նյութերի, ինչպես նաև ուսումնասիրելով իշխանավորի մասին Մաքիավելիի դատողությունները: Սույն հոդվածը նաև փորձ է բացահայտելու անվանի բաղաքական գործչի վերընթաց հաջողությունների գաղտնիքը, արժանին մատուցելու նրա հեռատեսությանն ու վճռականությանը:**



## ԲԻՍՄԱՐԿԻ «ԳԱՂՏՆԻՔԸ»

**Իմաստուն իշխանը ցանկացած հանգամանքում հեղ կտանի այն մասին, թե ինչպես իր հապատակներին կախվածության մեջ պահի իշխանությունից և հենց իրենից: Այդ դեպքում միայն նրանց կարելի է վստահել: Նիկոլո Մաքիավելի**

1847 թվականին 32-ամյա Օտտոն ֆոն Բիսմարկը, դառնալով պրուսական պառլամենտի պատգամավոր, այնտեղ չուներ ո՛չ ընկերներ, ո՛չ դաշնակիցներ: Նա կարող էր միանալ լիբերալներին կամ պահպանողականներին կամ էլ, որպես հովանավոր, ընտրել կոնկրետ նախարարի: Բիսմարկը, սակայն, քաջ գիտակցում էր, որ միանալով ուժեղին, պետք է պատրաստ լինի հաշտվել այն մտքի հետ, որ ուժեղն իր կարիքը չի զգա այնչափ, որ հաշվի նատի իր կարծիքի հետ: Այդ ժամանակ պրուսական իշխանության ամենաթույլ օլակը Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Վիլհելմ Զորորոդն էր, որն աչքի չէր ընկնում վճռականությամբ ու կամքի ուժով և շրջապատված էր թշնամիների բանակով: Եվ, Բիսմարկը, վերլուծելով այդ ամենը, գտավ հարցի իդեալական լուծումը. նա պառլամենտում ունեցած իր ելույթներով սկսեց աջակցել թագավորի ընդունած որոշումներին՝ անկախ նրանից՝ համաձայն էր, թե՝ ոչ: Բիսմարկը դեմ էր դուրս գալիս թագավորի բոլոր հակառակողներին՝ ներկայանալով որպես թագավորի աջակից: Վերջապես, 1851 թվականին սկսեց ճաշակել իր ռազմավարության «պտուղները». Օտտոն ֆոն Բիսմարկը թագավորի հրամանով, որպես Պրուսիայի դեսպան, ներկայացավ Ֆրանկֆուրտում մեկնարկող Գերմանական միության ժողովում: Այդ օրվանից սկսած՝ գրեթե չէր հեռանում թագավորի կողքից՝ օգնելով և ժամանակ առ ժամանակ մնելով նրան վճռականության: Նա խորհուրդ էր տալիս ուժեղացնել բանակը, ճնշել լիբերալներին և պահպանողականները: Փոխհարաբերությունները սրվեցին այն աստիճան, որ Վիլհելմը պատրաստ էր նույնիսկ հրաժարվել գահից: Միակ մարդը, ով կանգնեց Վիլհելմի կողքին և դրելով նրան կտրուկ որոշումների՝ պահպանց նրան իր գահին, Բիսմարկն էր: Վիլհելմը կարևորեց Բիսմարկին իր ընկերների շարքում տեսնելու անհրաժեշտությունը և որոշ ժամանակ անց նշանակեց վարչապետ: Համաձայն պրուսական սահմանադրության՝ երկրի վարչապետը ենթարկվում էր միայն թագավորին և ոչ թե պառլամենտին: Վիլհելմը վարչապետի պաշտոնը համարում էր վասալական և կարծում էր, որ վարչապետի որոշումները պետք է ընդունվեն համաձայն թագավորի կամքի: Սակայն իրականում երկրի ներքին և արտաքին բաղաքականությունը

նության բանալին ուրիշներին սեփական կամքը թելադրելու կարողության մեջ է: Եթե տիրակալին հաջողվում է հասնել դրան առանց ուժի կիրառման, ապա նշանակում է նրա իշխանությունը հասել է անհայրահարելի բարձունքի:

1861 թվականին Ֆրիդրիխ Վիլհելմ Զորորոդի մահից հետո գահ բարձրացավ նրա եղբայր Վիլհելմ Առաջինը, որը Բիսմարկի վարած քաղաքականությունը չէր համարում իրատեսական և մտադրություն չուներ պահել նրան իր կողքին: Բիսմարկն իր հուշագրություններում Վիլհելմին բնութագրել է որպես բարեհամբույր, առողջ մտքով, իսկական պրուսական սպայի հատկանիշներով օժտված մարդու, սակայն նաև հնաոճ և կանանց ազդեցությանը ենթարկվող: Որոշ ժամանակ անց Վիլհելմը հայտնվեց նոյն իրավիճակում, որում մի ժամանակ գտնվում էր նրա եղբայրը: Թագավորի իշխանությունն օրեցօր թուլանում էր: Դրանից փորձեցին օգտվել լիբերալներն ու պահպանողականները: Փոխհարաբերությունները սրվեցին այն աստիճան, որ Վիլհելմը պատրաստ էր նույնիսկ հրաժարվել գահից: Միակ մարդը, ով կանգնեց Վիլհելմի կողքին և դրելով նրան կտրուկ որոշումների՝ պահպանց նրան իր գահին, Բիսմարկն էր: Վիլհելմը կարևորեց Բիսմարկին իր ընկերների շարքում տեսնելու անհրաժեշտությունը և որոշ ժամանակ անց նշանակեց վարչապետ: Համաձայն պրուսական սահմանադրության՝ երկրի վարչապետը ենթարկվում էր միայն թագավորին և ոչ թե պառլամենտին: Վիլհելմը վարչապետի պաշտոնը համարում էր վասալական և կարծում էր, որ վարչապետի որոշումները պետք է ընդունվեն համաձայն թագավորի կամքի: Սակայն իրականում երկրի ներքին և արտաքին բաղաքականությունը

ղեկավարում էր հենց Բիսմարկը: Եթե նույնիսկ Վիլհելմը փորձում էր որոշումներ ընդունել Բիսմարկի կամքին հակառակ, վերջինս ուղղակի սպառնում էր հրաժարականով և նույն պահին հասնում իր ուղածին: Զնայած Բիսմարկի և Վիլհելմի միջև եղած տարածայնություններին՝ նրանց քաղաքական դաշինքի շնորհիվ Պրուսիան խոցելի բազավորությունից վերածվեց հզոր ներուժ ունեցող տերության: Բիսմարկի ռազմավարության շնորհիվ բարձրացավ պրուսական բանակի մարտական ոգին, Պրուսիան վերադարձրեց կորցրած հողերը և գրավեց նոր տարածքներ:

Բիսմարկն ուներ նվիրական երազանք. միավորելով գերմանական տերությունները՝ ստեղծել կայսրություն, որտեղ որոշիչ դեր կիսադար Պրուսիան: Նրա երազանքն իրականացավ հյուսիսգերմանական դաշինքի գործերի՝ Նապոլեոն Երրորդի բանակի հանդեպ տարած ջախչախիչ հաղթանակի արդյունքում: 1871 թվականին, Վերսալում Վիլհելմ Առաջինը և Բիսմարկը հայտարարեցին գերմանական կայսրության ստեղծման մասին: Վիլհելմ Առաջինն արժանացավ «Գերմանական կայսր» տիտղոսին, իսկ Բիսմարկը նշանակվեց գերմանական կայսրության կանցելու: Կայսրության ստեղծումից անմիջապես հետո դաշնակիցները Բիսմարկին հորդորում էին պատերազմել հարկան տերությունների դեմ, գրավել նոր տարածքներ: Սակայն Բիսմարկի, որպես կառավարչի և քաղաքական գործչի լավագույն հատկանիշներից մեկը վերջնական նպատակի գիտակցումն էր, որն էր՝ ստեղծել գերմանական կայսրություն՝ Պրուսիայի գերիշխանությամբ: Շատերը համարում էին, որ «պողպատյա կանցլերը» տարիների ընթացքում կորցնում է վաղենի վճռականությունը, սակայն Բիսմարկը հասել էր իր նպատակին և այդ պահին ավելի մտահոգված էր ստեղծած պահպանելով:

Չենց այս հատկանիշի բացակայությունն է կործանել տիրակալներից շատերին, որոնք պարզապես չունենալով վերջնական նպատակ, ձգտելով գրավել նորանոր հողեր՝ կործանել են դժվարությամբ ձեռք բերածը: Տեղին է ևս մեկ անգամ հիշատակել Մաքիավելիի հետևալ միտքը. «Եթե գրաված երկիրը տարբերվում է քր ժառանգած երկրից լեզվով, ավանդությունով ու կարգով, ապա գրավել այդ երկիրն ավելի հեշտ է, քան իշխանության պահպանումն այդ երկրում...»:

### ՍՊԱՐՏԱԿ ԽԱՎԱՏՐՅԱՆ

ապահովագրական գործ մասնագիտության  
հեռակա ուսուցման 1-ին կուրսի  
մագիստրանտ

### 11.11.11.

### Ի՞ՆՉ Է ԽՈՐՃՐԴԱՆՇՈՒ 11-ԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒՄԸ

11.11.11-ը այն տարեթիվն է, երբ առաջին անգամ այս հարյուրամյակում երեք 11 թվանշանները մեկ շարք են կազմում: Շատերի կարծիքով՝ այս համակցությունը լավքանիմասին չի խոսում: Օրինակ՝ միջնադարյան թվագիտները (այն մարդիկ, ովքեր ուսումնասիրում են թվերի առեղջվածային նշանակությունը) բոլոր թվերին դրական և բացասական կողմեր էին վերագրում, բացառությամբ՝ 11-ի: Խև XVI դարի գիտնական Պետրոս Բունգուսը կարծում էր, որ 11-ը ոչ մի առնչություն չունի Աստծու և առեղջվածային հրադարձությունների հետ, որ աստվածային թվանշաններ 10-ի և 12-ի միջև խճճված 11-ը չարիք է, մեղսագործության խորհրդանշ: Այս առիթով նույնիսկ սարսափ ֆիլմ է նկարահանվել՝ «11.11.11», որը ցույց է տալիս մարդկային վախերը՝ կապված 11 թվանշանի հետ:

Իրականում պետք չէ վախենալ ոչ թվանշանից, ոչ էլ, տարի, ամիս, օր նշոյ այս վեցանիշ շարքից ինչ-որ բան ակնկալել: Պրոֆեսոր Ալան Լենգին, ով ուսումնասիրում է աստվածանշյան թվագիտությունը, թվերի նշանակության որոնումները բնական մարդկային միտումներ է համարում: Արտասովոր ոչինչ չկա 11:11 ժամի և 11.11.11 ամսաթվի մեջ, սակայն մարդոց չի կարողանում անտարբեր մնալ կրկնվող թվերի հերթագայության նկատմամբ և կիսուրում է իմաստային ինչ-որ կապեր, փորձում գտնել օրինաչափություններ այնտեղ, որտեղ դրանք չկան:

Նույն կարծիքն են հայտնում նաև հոգեբանները՝ նշելով, որ 11-երի շղթան գերբնական նախազգուշացման նշան չէ, այլ պատահական ու անհմասս թվերի հարաբերում:

Պետք է հաշվի առնել, որ նմանօրինակ միստիկ թվերի հարաբերում էլի է եղել, սակայն Երկիր մոլորակի բնակիչների կյանքում դրանք չեն, որ փոփոխություն ու բեկում են մտցողել:

Որոշ ժամանակակից թվագետներ հաշվարկել էին, որ այդ օրը շատ բարենպաստ կլինի ամուսնությունների գրանցման համար: Եվ դա, իրոք, այդպես է: Երեանում ամուսնության գրանցման համար այդ օրը 59 զույգ էր դիմել, իսկ Սյունիքի մարզկենտրոն Կապանում սպասվում էր ավելի քան 30 հարսանիք: Որոշ զույգեր էլ դիմել էին գրանցվելու, սակայն տեղ չէր եղել: Մարդկության սնահավատ մասն այդ օրվան սպասում էր ոչ միայն ամուսնության, այլև խաղատներ այցելելու և խաղադրույթ կատարելու նպատակով: Ասում են՝ 11-ը խաղամուների, հատկապես Բէթքամբի և Քենոնի Երկրպագուների սիրած թիվն է: Իսկ ժամանցի սիրահարների համար այդ օրն աննախադեպ հնարավորություններ ստեղծված օգտվելու հյուրանոցների և սպասարկման ոլորտի այլ ծառայությունների գեղեցերից:

Ամեն դեպքում գեղեցիկին ու բարուն հավատալ ավելի հաճելի ու ճիշտ է, պետք է լցվել հավատով, լավատեսությամբ և իրականացնել բարի նպատակները:

Եվ վերջում՝ մեկ հետաքրքրական փաստ երեք ցանկացած որ իր ծննդյան տարեթվի վերջին Երկու թվերին գումարի իր տարիքը, որը լրանում է այս տարի, ապա գումարը կստացվի 111: Օրինակ՝ Եթե դուք ծնվել եք 1985 թվականին և այս տարի լրացել է կամ կլրանա ձեր 26 ամյակը, ապա  $85+26=111$ -ի:



Նկարում՝ Շանհայում ստեղծել են աշխարհի ամենամեծ եռաչափ մկարդ՝ ասֆալտի վրա: 1111 քմ (50X 22.22) տարածքով 3D մկարում պատկերված է ծաղրածուի կերպարանքով հսկայական ոռորոտ: Ուկորդների գրքում այն գրանցվել է որպես ամենամեծ 3D մկար:

Պատրաստեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԱՆԿԱՐ

«Տնտեսական խճանկարը»  
«Տնտեսագետի» համեմատաբար  
նոր խորագրերից է, սակայն  
շատ արագ դարձել է սիրված ու  
սպասված: Մշտական հեղինակի՝  
տնտեսագիտության տեսության  
ամբիոնի դոցենտ, կառավարման  
ֆակուլտետի փոխդեկան  
Սամվել Գրիգորյանի ջանքերով  
այն ընթերցողի ուշադրության  
կիզակետում է պահում աշխարհի,  
Հայաստանի տնտեսական կյանքի  
ու տնտեսագիտության կարևոր  
փաստերը, անցուղարձերը,  
Վիճակագրական տվյալներն ու  
դրանց վերլուծությունը:

### ՈՐՈՇՔ ԵՆ ԱՊՀ ԵՐԿՐՄԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Տնտեսական ինտեգրումն իր բնույթով բարդ սոցիալ-տնտեսական գործընթաց է, որն առնչվում է ինտեգրվող երկրների ոչ միայն տնտեսական, այլև ազգային, սոցիալ-տնտեսական անվտանգությանը, անկախությանն ու ինքնավարությանը:

Եվրամիության փորձը ցույց է տալիս, որ երկրների տնտեսական ինտեգրումը երկարատև գործընթաց է և կարող է տեղի ունենալ որոշակի փուլերով:

Այս ինաւորված հետաքրքիր է ինանալ, թե ինչ փուլեր են նախատեսվում ԱՊՀ անդամ երկրների տնտեսական ինտեգրման համար և որքանով է այն ձեռնտու մեր երկրին: Նախատեսվում է ԱՊՀ երկրների տնտեսական ինտեգրումն իրականացնել հետևյալ վեց փուլով:

Առաջին փուլը կամ մակարդակը արտոնյալ առևտորի ռեժիմի սահմանումն է:

Երկրորդ փուլն ազատ առևտորի երկկողմանի համաձայնագրերի հաստատումն է ԱՊՀ երկրների միջև: Ներկայում Համագործակցության 11 երկրներից 8-ը վավերացրել է ազատ առևտորի գոտու ստեղծման մասին համաձայնագրը:

Երրորդ փուլը Մաքսային միության ստեղծումն է, որին անդամակցող երկրների համար նախատեսվում է ազատ առևտորի ռեժիմ, իսկ երրորդ երկրների համար ենթադրում է միասնական մաքսային քաղաքականության իրականացում: Ներկայում Մաքսային միության ստեղծումը նախաձեռնել են Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, անդամակցելու ցանկություն է հայտնել Ղրղզստանը: Վերջերս այդ միությանը մասնակցելու հա-

մաձայնություն է տվել նաև ՀՀ նախագահը՝ ՌԴ պետական այցի շրջանակներում:

Չորրորդ փուլն ընդհանուր շուկայի ստեղծումն է, երբ մաքսային միությանը գրավենաց՝ անդամակից երկրներին բույլատրվում է ոչ միայն ապրանքների ու ծառայությունների, այլև կապիտալի և աշխատումի ազատ տեղաշարժ:

Չինգերորդ փուլը միասնական արժույթի կիրառում է ենթադրում՝ միասնական դրամավարկային և արտաքին առևտորային քաղաքականությամբ:

Վեցերորդ փուլն ամբողջական տնտեսական ինտեգրումն է, երբ անդամ երկրներում միասնական ծնով են իրականացվում բոլոր երեք մակրոտնտեսական քաղաքականությունները՝ արտաքին առևտորային, դրամավարկային և հարկաբյուջետային:

Հարկ ենք համարում նշել, որ Մաքսային միության ձևավորումը առնվազն ենթադրում է անդամ երկրների ընդհանուր սահմանների առկայություն, որն առայժմ Հայաստանի ազգային տնտեսական շահերից չի բխում՝ մեզ հայտնի տնտեսական ու սահմանային շրջափակման պատճառով: Ըստ այդմ՝ Հայաստանը ՌԴ Կալինինգրադի մարզի նման կարելի է դիտարկել որպես հատուկ գոտի, որտեղ կգործեն հատուկ պայմաններ: Ղրանք Մաքսային միության անդամներին հնարավորություն կտան Մերձավոր Արևելքի երկրների հետ արտաքին առևտորային հարաբերությունների ժամանակ Հայաստանի տարածքն օգտագործել որպես հարթակ:

## ԱՐԱԳ ԶԱՐԳԱՑՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Ernst & Young առողջապահական կազմակերպության և Oxford Economics-ի համատեղ վերլուծությունների հիման վրա կանխատեսվում է, որ սպասվելիք ռեցեսիայի դեպքում արագ զարգացող շուկաների դերն էլ ավելի կլարևորվի: Մինչև 2020 թ. այս երկրներին (25 երկիր) բաժին կը նկնի համաշխարհային ՀՆԱ-ի 50%-ը, համաշխարհային սպառողական ծախսերի 38%-ը և հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումների 55%-ը: Այս վերլուծության մեջ բացի BRICS երկրներից (Բրազիլիա, Ռուսաստան, Չինաստան, Չինաստան, Չառավաֆրիկյան Հանրապետություն, որոնց ընդհանուր ՀՆԱ-ն շուրջ 10 տրլն դոլար է), ներառված եննաև Արևելյան եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիա-Խաղաղօվկիանոսյան

տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի երկրներ:

Սակայն, չնայած այդ երկրների տնտեսական արագ աճին (տարեկան 5,8%), այնուհանդերձ, դեռ երկար ժամանակ կշարունակեն մնալ աղքատ երկրներ: Օրինակ՝ Չինաստանում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (ըստ գնողունակության պարիստետի) կազմում է ԱՄՆ-ի նույն ցուցանիշի ընդամենը 16%-ը, Չինաստանինը՝ 7%-ը:

Ըստ գնահատումների՝ վերջին տարիներին ամենաարագ զարգացող տնտեսությունը շարունակում է մնալ Կատարը, որի ՀՆԱ-ն տարեկան աճում է 13%-ով: Այստեղ մեկ շնչին ընկնող ուղղակի ներդրումները կազմում են 1600 դոլար: Արագ զարգացող երկրներում հիմնական ներուժը մարդկային ռեսուրսն է: Այստեղ է բնակվում 4,2 մլրդ մարդ:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԲԱՃԽՎԱԾ ԴԱՄԱՇԽԱՐՁԱՅԻՆ ԴԱՐՍՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային տնտեսության տնտեսագետ վերլուծաբանների հաշվարկներով 2011 թ. աշխարհի ընդհանուր գլոբալ հարստությունը կազմել է 231 տրլն դոլար, և ըստ կանխատեսումների՝ 2016 թ. կիասնի 345 տրլն դոլարի: Այս աճի մեջ ծանրակշիռ դեր կունենան Չինաստանը, ճապոնիան, Չինկաստանը, Բրազիլիան, Ռուսաստանը և այլն: Ներկայում աշխարհում շուրջ 29, 7 մլն մարդ տիրապետում է 1 մլն դոլարը գերազանցող ունեցվածքի:

Ըստ կանխատեսումների՝ 2016 թ. համաշխարհային հարստության մեջ առաջատարի դերը կշարունակի ԱՄՆ-ը՝ 81 տրլն դոլար ընդհանուր ունեցվածքով: Չինաստանը կունենա մակրոտնտեսական 39, ճապոնիան՝ 31, Բրազիլիան՝ 9,2, Չինկաստանը՝ 8,9 տրլն դոլար:

Այսօր աշխարհի ամենահարուստ երկրներն են Շվեյցարիան, Ավստրալիան և Նորվեգիան՝ մեկ շնչին բաժին ընկնող ազգային հարստության ծավալով:

## ԴԱՄԱՇԽԱՐՁԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՒՊԵՐԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ «ՍԱՐԴՈՍՏԱՅՆՈՒՄ»

Շվեյցարիայի գիտնականները աշխարհի 37 մլն ընկերություններից առանձնացնելով ավելի քան 43 հազար վերազգային կորպորացիաներ և բացահայտելով դրանց ընդհանուր ակտիվները՝ կառուցել են տնտեսական ազդեցության մոդել, որի շնորհիվ գնահատել են դրանց դերը համաշխարհային տնտեսության մեջ:

Վերլուծության արդյունքներով առանձնացվել են 1318 ընկերություններ, որոնցից յուրաքանչյուրը

վերահսկողություն է իրականացնում շուրջ 20 այլ ընկերությունների նկատմամբ: Նրանց գնահատումներով՝ գերիզոր կորպորացիաների այս «սարդոստայնում» կենտրոնացված է համաշխարհային եկամտի 60%-ը: Ավելի խորանուխ լինելով՝ հետազոտողները եզրակացրել են, որ վերահսկողության թելերը գտնվում են 147 սուպերկորպորացիաների ծեռքում, որոնց ազդեցության ոլորտում է գլոբալ կորպորատիվ հարստության շուրջ 40%-ը:


## Ի՞ՆՉ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

Վերջերս Եվրամիության պետությունների դեկավաների գագարնաժողովում պայմանավորվածություն ծեռք բերվեց ԵՄ տնտեսական կառավարության ստեղծման շուրջ: ԵՄ միասնական տնտեսական կառավարություն ստեղծելու գաղափարը դեռևս 2008 թ. առաջարկել է Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին: ԵՄ տնտեսական կառավարությունը նոր ինստիտուցիոնալ կառույց է Եվրոպություն, որի յուրահատկությունն այն է, որ

«կառավարության» դերը կկարատեն Եվրոպությունավոր գագարնաժողովները:

ԵՄ տնտեսական միասնական կառավարության ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Եվրոպությունը ֆինանսական նախարարների խումբը՝ Եվրախումբը, բավականաչափ լիազորություններ չուներ Եվրոպությունավոր երկրների առջև ծառացած ֆինանսական խնդիրները լուծելու համար:

**Գրող, հրապարակախոս Խաչատրուր**  
**Դադայանն իր «Ալեքսանդր Մանթաշյանց.**  
**հուշագրություններ, հրապարակումներ,**  
**փաստաթղթեր» վերտառությամբ ընդգրկուն**  
**աշխատությունում բացահայտել է հայկական**  
**կապիտալիզմի հիմնադիրներից ու կապիտալի**  
**կերտողներից մեկի՝ հայոց բազմադարյա**  
**առևտրատնտեսական պատմության դասական,**  
**ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի**  
**լուսավոր կերպարը: Մանթաշյանցն իր ապրած**  
**կյանքով է կերտել ազգային կապիտալիստի**  
**բարոյականության վարքականոնը, որը**  
**կատարյալ դաս է ներկայի և ապագայի**  
**հայ դրամատերերի ու առևտրականների**  
**համար: Ընթերցելով գործից դուրս բերված այս**  
**հատվածները՝ դուք դրամում կհամոզվեք:**



## ԱԼ. ՄԱՆԹԱՇՅԱՆՑԻ ԱՐԺԵՐԱՍԱԿԱՐԳՅ՝ ԸՆՏ ԽԱԶԱՏՈՒՐ ԴԱՐԱՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Մանթաշյանցը չէր սիրում, որ իր բարեգործությունները հրապարակ հանվեն...

Երբ նա որևէ տեղում, հատկապես՝ հեռավոր վայրերում ուզում էր բիզնես սկսել ու մասնաճյուղ բացել, ամենից առաջ աշխատում էր, ինչպես ինքն էր ասում, «մարդ գտնել», այսինքն՝ այնպիսի մեկին, որը լիներ the right man in the right place (ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում):

Նա եկեղեցասեր էր, և եթե անհետաձգելի գործ չէր ունենում, ամեն կիրակի գնում էր պատարագի:

Մանթաշյանցը հայ թատրոնի ջերմ սիրահարն ու հովանավորն էր: Թիֆլիսում նա մշտական օթյակ ուներ, հաճախ գալիս էր ներկայացումների և մշտական այս կամ այն կերպ օգնում դերասաններին:

Ալ. Մանթաշյանցի ազգօգուտ մեծագույն բարեգործություններից մեկը տասնյակ տարիներ չքավոր ուսանողներին օժանդակելն էր: «Ուսանողը մեր ազգի ապագան է», - ասում էր նա և այդ սկզբունքով անհողողող առաջնորդվում ամբողջ 50 տարի, այսինքն՝ իր առևտրային գործունեության ողջ ընթացքում: Նա կարիքավոր հայ պատանիներին լիառատորեն օգնել ու հնարավորություն է տվել մտնելու բարձրագույն դպրոց, համալսարան կամ որևէ մասնագիտական ուսումնարան, որպեսզի թե՛ իրենց ապագան ապահովեն և թե՛ օգտակար լինեն ազգին:

Սայաթ-Նովան՝ այդ մեծ ժողովրդական երգիչը նրա ամենասիրած հեղինակն էր: Մանթաշյանցն ազատ ժամանակ, իր առանձնասենյակում մենակ նստած կամ բարձին թիկնած, կլանված Սայաթ-Նովա էր կարդում: Նրա հյերեն ու վրացերեն տաղերից շատերն անգիր գիտեր և հարմար առիթի դեպքում արտասանում էր:

Նրա բարեսրտությունը հայտնի էր իր բոլոր ծանոթներին, որոնք դիմում էին այս ու այն անհատին կամ հաստատությանը օգնելու, և նա գրեթե միշտ կատարում էր նրանց խնդրանքը՝ ավելի կամ նվազ չափով. շատ էր տալիս այն անհատին կամ իմանարկին, որին ինքն էր ճանաչում:

Նա համեստ մարդ էր և շատ համեստ էր ապրում: Ուկեղեն կամ ակնեղեն չէր սիրում ու չէր գործածում, ոչ մատանի, ոչ փողկապի վրա և առհասարակ որևէ զարդ չէր կրում: Միակ զարդը, որ սիրում էր կրել, թարմ ծաղիկն էր: Երբեք չուզեց սեփական կառք ունենալ՝ կամ ոտքով էր շրջում, կամ տրամվայ նստում: Յազվաղեա էր կառք վարձում:

Շատ շփող մարդ էր ու մենությունից խիստ նեղվում էր: Զվարթ բնավորություն ուներ և ի բնե լավատես էր, ինչպես բոլոր սանգվինիկները: Նա զվարճասեր էր, ընկերասեր և, ինչպես թիֆլիսից էին ասում, սիրում էր «քեփ անել»: Բախտը գրեթե միշտ ժպտացել էր նրան՝ ինչպես աշխատանքում, այնպես էլ ընտանեկան կյանքում:

Թիֆլիսում գտնվող անշարժ գույքը, որ գնահատված էր 3 միլիոն ռուբլի, որդիհերն իրավունք չունեին ոչ վաճառելու, ոչ գրավ դնելու: Դա անփոփոխ կերպով պետք է անցներ թոռներին, բայց այն թոռներին, որոնք կծնվեին որդիհերի հայ-լուսավորչական կանանցից: Այս կերպ Մանթաշյանցն անուղղակիորեն պարտավորեցնում էր զավակներին, որ ամուսնանային հայ-լուսավորչական աղջիկների հետ:

Մանթաշյանցը կյանքի երկու նպատակ ուներ, որոնց իրագործման համար աշխատում էր բովանդակ էռթյամբ: Այդ նպատակներն էին, նրա սեփական ու շատ բնորոշ խոսքով՝ «փուլ աշխատելը» և «ազգօգուտ լինելը»: Այս երկու նպատակներն այնպես էին կապակցված, որ ներազրում էին մեկմեկու վրա. որքան նա ազգօգուտ էր և որքան առատաձեռն էր ազգի բազմադիմի կարիքներին օգնության հասնում, այնքան նրա գործերը հաջող էին ընթանում:

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՔԵՆԱՇՐՁԱՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

**Դ**ոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 16-ն անցկացվեցին միջամյալ քննություններ, որոնց ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան ստուգելու գիտելիքները, ինքնահաստատվելու և իրենց ամուր զգալու:

Ուսանողների մեծ մասը քննություններին պատրաստվել էր լրջորեն և պատասխանատվության զգացումով: Անուամենայնիվ, եղան նաև այնպիսիք, ովքեր ներկայացել էին մի կերպ «բավարար» կորդելու մտայնությամբ: Կարծում ենք՝ այս վերաբերունքը պետք է վերանայվի և ամրապնդվի այն գիտակցությունը, որ գիտելիքի մեծ պաշարով է միայն հնարավոր արժանի տեղ գտնել աշխատանքի շուկայում:

«Տնտեսագետը» շրջայց կատարեց քննասեմյակներում և ամրագրեց առավել հիշարժան պահերը:

**Մ**արքերին մասնագիտության երկրորդ կուրսի քննությունը «Տնտեսագիտության տեսություն» առարկայից է (դասախոս, դոցենտ Ռուզաննա Արմենակյան): «Քննության այս եղանակը գիտելիքների գնահատման լավագույն ձևը չէ, այն մի տեսակ խաղի է ննան, որտեղ իր դերն ունի նաև պատահականության գործոնը», -ասաց ուսանող Աննա Մնացականյանը՝ գերադասելով գրավոր եղանակով կազմակերպվող քննությունը, որի ընթացքում հնարավորություն է ընձեռվում ոչ միայն գիտելիքները շարադրելու, այլև ինքնուրույն դիտարկումներ կատարելու հարցադրման շուրջ:

**Տ**նտեսության պետական կարգավորում» դասընթացից (դասախոս, պրոֆեսոր Իշխան Տիգրանյան) քննություն էր հանձնում մակրոտնտեսականքաղաքականություն և կանոնադատության 4-րդ կուրսը: Գերազանցիկ ուսանող Հարություն Արզումանյանի ուսանողական տարիների քննական փորձը թույլ է տալիս հետևողուններ անել՝ հօգուտ գրավոր եղանակով կազմակերպվող քննությունների:

**Ա**յս 5 մասնաշենքի համակարգչային սրահը հյուրընկալել էր «զեյթունարնակ» ուսանողներին: Մաթեմատիկական մեթոդները և մոդելները տնտեսագիտության մեջ մասնագիտության 2-րդ կուրսեցիները եկել էին համակարգչային թեստային քննություն հանձնելու «Տնտեսագիտության տեսություն» առարկայից (դասախոս, դոցենտ Նելլի Սարգսյան) այն հաստատ համոզմամբ, որ հաջողությամբ կիարքահարեն փորձությունը:

**Հ**ինանսական պլանավորում» առարկայի դասախոս, դոցենտ Աշոտ Մաթևոսյանի հավաստմամբ՝ հաշվապահական հաշվառման մասնագիտության 4-րդ կուրսեցիները մասնագիտական գիտելիքների մեծ պաշար ունեն: Քննությունը հնարավորություն կընձեռի ուսանողներին հասկանալու՝ ինչը են ավելի լավ յուրացրել, ինչը՝ ոչ և կապահովի ամփոփիչ քննաշրջանին բարձր պատրաստվածություն:

**Պ**ետական և մունիցիպալ կառավարում մասնագիտացման 4-րդ կուրսեցիները ստուգում են իրենց գիտելիքները «Պետական կառավարման տեսություն և պատմություն» առարկայից: Դասախոս, դոցենտ Վալերի Միրզոյանը հույս հայտնեց, որ ուսանողները քննությանը եկել են պատրաստված, և պատասխանելով կգոհացնեն:

**Տ**ինանսներ մասնագիտության 3-րդ կուրսեցիները կարծում են, որ «Բյուջետային համակարգ» դասընթացը (դասախոս, պրոֆեսոր Յուրի Ալավերդյան) անշափ կարևոր է մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու գործում: Շատերի կարծիքով՝ լավ մարսված նյութը գրավոր եղանակով ի ցույց դնելը ավելի ճիշտ է:

Հավելենք, որ առաջին կիսամյակի միջամյալ քննություններին հարգելի պատճառով չներկայացած ուսանողների համար լրացուցիչ քննություններն անցկացվեցին դեկտեմբերի 5-8-ը:



Հոկտեմբերի 17-26-ը Հայաստանի շախմատի կենտրոնական տան կիսաեղրափակչում դասական շախմատի 9 խաղափոլերում տանելով 6 հաղթանակ, 2 ոչ-ոքի, կրելով մեկ պարտություն և արդյունքում վաստակելով 7 միավոր՝ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի ֆինանսներ և վարկ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Հովհաննես Արգումանյանը գրավեց 2-րդ պատվավոր հորիզոնականը և ընդգրկվեց այն տասը շախմատիստների ցանկում, ովքեր դեկտեմբերի 12-21-ը կմրցեն Եգրափակչում: Սա նոր վերջին հաջողություններն է: Ովքեր Հովհաննեսին շնորհանաջում, հայտնենք, որ նա 2010-2011 թվականներին նվաճել է բազմաթիվ տիտղոսներ: Երկու անգամ դարձել է «Բազե» համահայկական ուսանողական խաղերի հաղթող, Հայաստանի թիմային առաջնության 2-րդ, Անկախության 20-ամյակին նվիրված թիմային առաջնության 3-րդ մրցանակակիր: 2011 թվականին դարձել է Հայաստանի ուսանողական խաղերի հաղթող՝ 7 խաղում տանելով 6 նոյնքան հաղթանակ: Հովհաննեսի հաջողությունները շարունակում են ոգևորել մեզ և համակել նոր հաղթանակների սպասումով: Ներկայացնենք տնտեսագետ շախմատիստի հետ մեր հարցագրույցը:

**-Հովհաննես, այսօր շախմատի մեր հավաքականները աննախադեմ հաղթանակներ են արձանագրում, մանկապատանեկան շախմատը վերելք է ապրում, այս տարվանից էլ դպրոցական ժրագրերում է ընդգրկվել: Ինչպես սկիզբ առավ քո շախմատային կենսագրությունը, արդյո՞ք այն տարիներին այսքան մեծ էր հետաքրքրությունը:**

- Դեպի շախմատային կյանք ինձ ուղղորդել է հայրս: Նա ինձ միշտ ասում էր, որ շախմատը մարզում է միտքը, ընդարձակում նարդու մտահորիզոնը, սովորեցնում պայքարի ոգի և հեռատեսություն: Վեց տարեկան էի, երբ սկսեց զբաղվել ինձ հետ, յորում արդեն հաճախում էի թենրիկ Գասպարյանի անվան շախմատի մասնագիտացված մարզադպրոց, մարզիչ Հայաստանի կրկնակի չեմպիոն Ալբերտ Հարությունովն էր: Թեսու անցա նաև Ռուման Հակոբովի և Վրեժ Օրդյանի մարզչական դպրոցները: Թեև շախմատը ծննդերիս ընտրությունն էր, սակայն մեծ էր նաև իմ ձգտումը:

Տարիներ առաջ, գուցե, շախմատն այսքան տարածում չուներ, բայց մարզադպրոցներում սաների պակաս էլ չկար: Այսօր, իհարկե, մեծ թափ է ստացել, հեռանկարը խոստումնալից է: Կա պետական հովանավորություն և կան շատ տաղանդավոր երեխաներ:

**-Այլ հետաքրքրություններ ունեի՞ր:**

- Բացի շախմատից զբաղվում էի ընթացամարտով, ֆուտբոլով, մարտեր առանց կանոնների մարզաձևություն, դպրոցում էլ գերազանցությամբ էի սովորում: Ծնողներս, առհասարակ, շատ հետևողական են եղել իմ ու քրոջ ուսման, առաջադիմության հարցերում: Հայրս նաև մասնագիտությամբ ինժեներ է, մայրս՝ մաթեմատիկոս, քույրս՝ մեր ամբիոնի ասպիրանտ:



## ՀԱԽՄԱՏԻ ՆԿԱՏՄԱՐՔ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.

**ՀՊՏՀ-ական տնտեսագետ շախմատիստը հաջողություններ է արձանագրում**

**-Ակսնակ շախմատիստի հաջողություններն ու առաջընթացը կարգային ամեն մրցաշարով մի նոր քայլ են գրանցում: Չո վերելքն ինչպես էր ընթանում:**

- Ուր տարեկան հասակում արդեն լրացրել էի առաջին կարգ, մի շարք մրցաշարերում դարձել էի մրցանակակիր՝ Շախմատի տան, Երևանի, Հայաստանի առաջնություններում: Մոտենում էր մասնագիտական կողմնորոշման տարիքը, երկնը տանքի առաջ էի՝ ընտրել շախմատը, թե՝ տնտեսագիտությունը: Այս շրջանում էր՝ 2005 թվականին, երբ մասնակցեցի Հայաստանի մինչև 18 տարեկանների առաջնությանը: Վերջին մրցափոլում հակառակորդներիս նկատմամբ հսկայական առավելություն ունեի՝ առաջին կամ երկրորդ մրցանակակիր դառնալու հնարավորություն, սակայն վրիշեցի, ցայտնոտի մեջ ընկա, ու հաղթանակի համար պայքարն ավարտվեց: Սա, ինչ-որ իմաստով, կանխորոշեց հետագա քայլս: Մեկ տարի անց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանող դարձաւ:

Սակայն շախմատից երբեք չեն հեռացել, պարզապես այն մի փոքր հետ էր մղվել: Իմ ծնավորման մեջ այն կարևոր դեր է խաղացել. Կոփել է լավատեսություն, զգուշավորություն և հեռատեսություն, վայրէջքներն ու վերելքները արժանապատվորեն ապրելու կամք:

**-Գիտենք, որ կյանքի մի կարևոր դպրոց էլ ես անցել՝ կատարել ես պարտը հայրենիքի առջև:**

- Իրոք, զինվորական ծառայությունն ինձ համար կարևոր շրջան էր. ընդհատել եմ ուսումս ու մեկնել հայկական բանակ այն հաստատ գիտակցմամբ, որ կատարում եմ պարտը հայրենիքիս առջև, ու զինվորական պատրաստականությունն անհրաժեշտություն է:

**-Զորացրվելուց հետո դժվար չէ՞ր  
ուսումնառության ընթացքին վերադառնալը:**

-Գուցե, բայց հաղթահարելի դժվարություն է: Ի դեպ՝ վերադարձան նաև շախմատին և մրցաշարերում հաջողությամբ հանդես եկա: Ֆիզդաստիարակության ամրիոնի վարիչ Լևոն Սամվելյանի, դասախոս Լյուդմիլա Շովիաննիսյանի հետ շարունակում են համագործակցել, կազմակերպել ներբուհական մրցաշարեր:

**-Փաստորեն, տնտեսագիտությունն  
ու շախմատն այս պահին մեկտեղվել են,  
ամեն դեպքում, որի՞ն ես առավել լրջորեն  
վերաբերվում:**

-Զորրորդ կուրսում են, դասերն ավելի թերև են, ուստի, անկեղծ ասած, փորձում են երկու բնագավառում էլ աշխատանքային հմտություններս խորացնել. շախմատում՝ նաև մարզչական, տնտեսագիտության մեջ՝ հաշվապահական:

**-Ո՞ւմ խաղանքն է քեզ հոգեհարազատ և  
ո՞ւմ՝ տնտեսագիտական հայացքները:**

-Աշխարհի 9-րդ և 11-րդ չեմպիոնների՝ Ֆիգարան Պետրոսյանի և Բոբբի Ֆիշերի: Նախընտրում են կոմբինացիոն ու հարձակողական խաղանքները: Վիշվանաթան Անանդը նույնական է իր շախմատային մտածողությամբ հոգեհարազատ է ինձ: Տնտեսագիտության մեջ՝ Պոլ Սամուելսոն, Ալեան Սմիթը: Շատ են ընթերցում Ալբերտ Էյշտեյնը. նրա հայացքները, գաղափարները ինձ ուղեկցում են ու, կարծես, ճշմարիտ ուղի մատնանշում:

**-Օրինակ:**

-Օրինակ այն, որ հարկ չկա ապագայապաշտ լինելու, ապագան սկսվում է այստեղ, այս պահին: Պետք է ապրել ներկայով, լինել հետևողական ու իրագործել նպատակները:

**-Նոյեմբերի 17-ը ուսանողության միջազգա-  
յին օրն էր: Ուսանողը պետք է լինի հասարա-  
կության թարմ կենսաուժը, կառուցողական  
միտքը: Թու կարծի՞քք...**

-Օգտվելով առիթից՝ կցանկանայի շնորհավորել ուսանողներին: Որպեսզի երիտասարդը որոշիչ դեր ունենա հասարակության մեջ, նա նախնառաջ պետք է կրթված լինի, գիտելիք ունենա, պատրաստ լինի ստանձնելու այդ դերը:

**-Ի՞նչ անելիքներ ունես առաջիկայում:**

-Մրցաշարեր, մագիստրատուրա, հետագայում՝ գուցե նաև ասպիրանտուրա:

**-Մերը քո կյանքում ի՞նչ տեղ է գրավում:**

-Սիրուց է ծնվում ամեն լավ բան՝ հայրենիքի, աշխատանքի, ծնողի, զավակի, կնոջ հանդեպ սիրուց: Ես էլ փորձում են սովորել, աշխատել, մարդկանց հետ հարաբերվել սիրով:

**-Անձնական մեկ հարց, որին կարող ես  
չպատասխանել: Ունե՞ս սիրած էակ, մեկը, ով  
ոգեշնչում է քեզ ու թևավորում քո սիրառատ  
հոգին:**

-Չեն թաքցնի, նա մի համեստ, խելացի ու պայծառ աղջիկ է, սովորում է կոնսերվատորիայում:

**Զրուցեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՍԸ**



## **Ավարտվեցին հանրապետական ուսանողական մարզական խաղերը**

Նոյեմբերի 20-ին ավարտվեցին հանրապետական ուսանողական մարզական խաղերը, որոնք սկիզբ էին առել մարտի 22-ին և ընթանում էին երկու փուլով:

**Առաջին փուլում մեր համալսարանի հավաքականները, ըստ մարզաձևերի, գրանցեցին հետևյալ պատկերը.**

**Վոլեյբոլ՝**  
աղջիկներ և տղաներ՝ 4-րդ հորիզոնական,  
**սեղանի թենիս՝**  
աղջիկներ 1-ին,  
տղաներ՝ 2-րդ հորիզոնական,  
**շախմատ՝**  
աղջիկներ՝ 3-րդ,  
տղաներ՝ 2-րդ հորիզոնական:

**Երկրորդ փուլում՝**  
**բասկետբոլ՝**  
աղջիկներ՝ 8-րդ,  
տղաներ՝ 4-րդ հորիզոնական,  
**ֆուտբոլ՝**  
2-րդ հորիզոնական,  
**ձեռքի գնդակ՝**  
2-րդ հորիզոնական:


Նշենք, որ մրցումներ էին անցկացվում նաև լող և ատլետիկական կրոսավազք մարզաձևերից: Առաջինում անհատական մասնակցությունը մերոնց հաջողություն չբերեց, իսկ երկրորդ անցավ առանց ՀՊՏՀ մասնակցության:

Մեզ հետ գրուցում ֆիզդաստիարակության ամբիոնի վարիչ Լևոն Սամվելյանը հպարտությամբ նշեց, որ սեղանի թենիսիստուհիները չենայինի տիտղոսը չեն գիշում արդեն երրորդ տարին անընդմեջ, իսկ ձեռքի գնդակ մարզաձևում վերջապես կարողացանք մրցանակային տեղ նվաճել: Բուհի մասնակցությունը հիշյալ խաղերում նա գնահատեց բավարար:

**Աշխարհում և Հայաստանում տեղի ունեցող  
մշակութային իրադարձությունների  
ընտրանին «Տնտեսագետը»  
այսուհետ ամեն ամիս  
կներկայացնի «Մշակութային  
լրահոս» խորագրով:**

Քոմի Բրասկի թանգարանում բացվել է «Դվին. մայրաքաղաք Եվրոպայի և Ասիայի միջև» խորագիրը կողո ցուցահանդեսը: Հայաստանը ներկայանում է իր նշանավոր մայրաքաղաքներով՝ Դվինով ու Անիով, որոնք «Մետաքսի ճանապարհի» հանգըլվաններից էին և ունեին սերտ հարաբերություններ Արևոտքի և Արևելքի երկրների հետ թե՛ անտիկ շրջանում, թե՛ միջնադարում:

Ցուցահանդեսը կգործի 2011թ. նոյեմբերի 8-ից մինչև 2012 թ. հունվարի 29-ը:



Հայկական Երուսաղեմի Հայոց պատրիարքության գանձատուն են վերադարձել հանճարեղ Թոռոս Ռուլինի երկու գլուխգործոցները, որոնք շուրջ 100 տարի առաջ, դեռևս մեզ անհայտ հանգամանքներում, պոկվել-գողացվել են Կեռան թագուհու՝ իր անուսնու համար պատվիրված ավետարանից:

Գլուխգործոցները որպես նվեր են վերադարձվել ազգությամբ հույն Թանասիս Մարտինոս անուսնու բարերարից՝ Ներսես քահանա Ներսեսյանի միջնորդությամբ:

**Սփյուռքահայ դերասանուիի նորա Արմանին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված վեպ է գրում, որտեղ կպատճի թուրքական բռնապետության հետևանքով աշխարհով մեկ սփյուռքահայ դերդաստանի անդամների մասին:**

**Բերլինի ֆիլհարմոնիայի կամերային դահլիճում տեղի ունեցավ Տիգրան Մանսուրյան՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված «Ռեվիենի» համաշխարհային պրեմիերան՝ RIAS կամերային երգչախմբի, Մյունիսենի կամերային նվազախմբի, մենակատարներ Թրիստինա Քայզերի (սոպրանո), Էնդրյու Ռեդմոնդի (բարիտոն), դիրիժոր Ալեքսանդր Լիիբրայիսի կատարմամբ:**



Հայտարարվել է «Օսկարի» մրցանակաբաշխությանը ներկայացված լիամետրած 18 մուլտֆիլմերի ցուցակը: Մրցանակի հավակնողների հնայակում են «Գնոմեն և Չուլիկետա», «Կոշկավոր կատու», «Կունգ ֆու Պանդա-2», «Վիճի արջուկը և նրա ընկերները», «Ռիո» մուլտֆիլմերը:

Միշել Լեգրանը սուրբնողյան հատուկ ալբոն է ձայնագրել, որտեղ հանրահայտ կատարողների շարքում երգել է նաև Ֆրանսիայի առաջին տիկին Կարլա Բրունի-Սարկոզին: Վերջինիս հետ ալբոմի ձայնագրմանը մասնակցել են Միկան, Էմիլի Սիմֆոնինը, Իգդի Փոփը, Մատիե Շետիդը և ուրիշներ:



**Աշխարհահրչակ հոյսն երաժիշտ Յանին ընթացիկ տարում բազմաթիվ համերգներ անցկացրեց աշխարհով մեկ՝ Արևելյան Եվրոպայում, Միջին Արևելյում և Կենտրոնական Ասիայում, իսկ 2012 թվականին երաժիշտը մի շարք նոր անակնկալներ է պատրաստել. նա կվերադառնա ԱՍՍ և Կանադա, որտեղ էլ կներկայացնի Վերջին՝ «Եշմարտության հպումը» ալբոնը:**

2012 թվականի համերգները կմեկնարկենապուիլի 20-ին Մայամիում, այնուհետև նվազախումբը կմեջի Նեապոլ, Սարաստա, Իդիանապոլիս, Չիկագո, Կոլումբիա, Ատլանտա, Ջլելանդ, Բուֆֆալո, իսկ հունիսի 8-ին կլինի արդեն Վիեննայում:

Ըստ համացամցի

### *ԲԵՐՔՈԼԴ ԲՐԵԽԱՆ*

**Ի**՞նչ է բանկի կողոպուտը՝ բանկի հիմնադրման համեմատությամբ...

### *ՍԱԼՎԱԴՈՐ ԴԱԼԻ*

**Ա**յոր կրոնի ստեղծումը հաշված վայրկյանների գործ է, միայն թե լինի բանկիրների ցանկությունը:

### *ԶՈՐԸ ՕՐՈՒԵԼ*

**Ր**արկերի ֆոնին հայրենասիրության մասին խոսելն անմտություն է...

### *ԶՈՆ ՔԵՋԱՆ*

**Ր**արկերից խուսանավումը միակ՝ ինքնածախսածածկող ինտելեկտուալ զբաղմունքն է...

### *ՕՇԵՆԻՐԻ*

**Ա**մենադժվարը առաջին միլիոնը վաստակելն է:

**Ե**թե ձեզ հաջողվում է համրել ձեր փողերը, նշանակում է դուք միլիարդ չունեք:

### *ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈՆ*

**Ք**ո կողմից տնօրինվող փողը ազատության միջոց է, քո կողմից հետապնդվողը՝ ստրկության...

### *ՊԻԽԵՐ ՌԱՍՏԻՒՆՈՎ*

**Փ**իլիսոփաներին փողն ավելի շատ է հետաքրքրում, քան ֆինանստներին, այն պարզ պատճառով, որ վերջիններս այն չունեն:

**Ի**դեալիստն այն մարդն է, ով օգնում է հարուստ դառնալ մյուսներին:

### *ՊԻԽԵՐ ԴՐԱՋԵ*

**Ը**նկերությունների ավանդույթները նման են երկրների ավանդույթներին. Երբեք մի փորձեք ինչ-որ բան փոխել: Փոխարենը՝ օգտագործեք այն, ինչ ունեք:

**Ն**որարարությունը ձեռներեցության հիմնական գործիքն է, որը թույլ է տալիս կարողություն կուտակելու նոր հնարավորություններ ապահովել:

**Ր**աճախ այն, ինչ կոչում ենք «մենեջմենթ», խանգարում է մարդկանց աշխատել:

**Ա**յն մարդիկ, ովքեր ոխսի չեն դիմում, սխալվում են տարին առնվազն երկու անգամ, իսկ նրանք, ովքեր դիմում են, նույնպես սխալվում են տարին առնվազն երկու անգամ:

### *ԲԵՏՈՒԻ ՉԱՐԼԶ ՖՈՐՐԱ*

**Բ**իզնեսը նման է ավտոմեքենայի. արդյունքի հասնելու համար այն պետք է կարողանալ ճիշտ վարել:

**Ս**տվերային բիզնեսը երբեք արևային կյանք չի ունենում:

**Ն**ա, ով միլիոններ է աշխատել խորի գնով, դատապարտված է անհաջողության:

**Ա**շխատանքը կյանքի գլխավոր ուտեստն է, հաճույքները՝ աղանդերը:

**Ա**վելի լավ է առաջին կարգի վարորդ լինել, քան տասներորդ կարգի տնօրեն:

**Ն**ա, ով իր ողջ կարողությունները ներդրել է գործի մեջ այն գիտակցությամբ, որ առավելագույնն է արել, արդեն իսկ հաջողության է հասել, թեև ողջ աշխարհը կարող է նրան ծախողակ համարել:

### *ԶՈՆ ՄԵՋԱՐԴ ՔԵՋԱՆ*

**Ծ**արունակական սղածի պայմաններում կառավարությունը կարող է գաղտնի և աննկատորեն բռնագրավել քաղաքացիների ունեցվածքի մեջ մասը:

**Կ**ապիտալիզմի հիմքում ընկած է այն գաղափարը, որ ամենաբարոյական մարդիկ կարող են դիմել ամենաանբարոյական միջոցների՝ հանուն մարդկության:

**Ե**րկարաժամկետ հասլվածուն գաղափարները, և ոչ թե մարդիկ են դեկավարում աշխարհը:

**Ր**աջող ներդրումների էռթյունը ուրիշներից ակնկալիքներ ունենալու է:

### Կարլ Մարոս

**Ա**րժեք կարող է դառնալ միայն այն, ինչն օգուտ է բերում:

**Բ**ուրժուական հասարակության մեջ կապիտալն անկախ է և օժտված է անհատականությամբ, մինչդեռ մարդիկ զուրկ են այդ հատկանիշներից:

**Վ**աճառիր մարդուն ձուկ, և նա մեկ օրում կուտի այն, սովորեցրու նրան ձուկ որսալ և կփլուզես քո ամբողջ թիզնեսը:

**Օ**գտակար առարկաների արտադրության ավելացման դեպքում կարող են ավելանալ նաև անօգտակար մարդիկ:

**Բ**անականությունը միշտ էլ գոյություն է ունեցել, պարզապես միշտ չէ, որ ունեցել քանական ձև:

### Մայքլ Պորտեր

**Դ**ազմավարությունն այնպիսի քան է, որը պետք է շարունակական լինի. այն չի կարող անընդհատ փոփոխվել:

**Ե**թե փորձում եք անել այն, ինչ անում են ձեր մրցակիցները, ապա դուք ունեք հաջողության հասնելու բոլոր հնարավորությունները:

**Ս**որարարությունը տնտեսության ծաղկման հիմնայունն է:

**Ը**նկերությունները պետք է մի քիչ «խենքորեն» գործեն. մի կողմից առաջնորդվեն հստակ ռազմավարությամբ, մյուս կողմից՝ շարունակաբար կատարելագործվեն:

**Ե**թե շահութաբեր լինելուց բացի, ձեր հիմնական նպատակն է մեծ ընկերություն դառնալը և արագ հաջողության հասնելը, ապա դուք անպայման բազմաթիվ խնդիրների առաջ կկանգնեք:

**Յ**ուրաքանչյուր ռազմավարության իմաստն է հստակ հասկանալ, թե ինչ չպետք է անել:

**Ա**ռողջ ռազմավարությունը սկիզբ է առնում այն ժամանակ, եթե քո առջև ճիշտ նպատակներ ես դնում:

**Յ**ուրաքանչյուր ընկերության հիմնական ռազմավարը պետք է լինի այդ ընկերության գործադիր տնօրենը:



### ՍՈՒՐԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Կյանքից հեռացավ պատմական գիտությունների թեկնածու, ՀՊՏՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դրույտ Սուրեն Ստեփանի Ստեփանյանը:

Ծնվել է 1931 թ. Տավուշի մարզի Նոյեմբերյանի Ենթաշրջանի Կորի (Շավարշավան) գյուղում: Ուսանել է Երկու բուհում՝ 1954-1958 թթ. Երևանի օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում, ապա՝ 1958-1961 թթ. Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

Բեղուն և բազմաբովանդակ է Եղել Սուրեն Ստեփանյանի աշխատանքային գործունեությունը: 1961 թ. նա որպես անգլերենի ուսուցիչ աշխատել է Հրազդան քաղաքի միջնակարգ դպրոցում, ապա նշանակվել Լուսակերտի պրոֆեսիոնալիկական ուսումնարանի տնօրնի տեղակալ, այնուհետև «Գիտելիք» ընկերության Հրազդանի մասնաճյուղի պատասխանատու քարտուղար: 1966 թ. Ստեփանյանը շարունակել է աշխատանքային գործունեությունը հանրապետության ներքին գործերի համակարգում: 1969-ից նրա աշխատանքային կենսագործությունը մեկընդիշտ կապվել է մայր բուհի՝ ԵՊՀ-ի, իսկ 1975-ից՝ նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի հետ:

Բազմավաստակ գիտնական մանկավարժը պատմության և քաղաքագիտության ամբիոնի առաջատար և ակտիվական դասախոսներից էր: Չորս տասնամյակ և ավելի դրույտ Ս. Ստեփանյանը գիտական և ուսումնական աշխատանքներ է կատարել և մեծ կյանք ճանապարհել ուսանողների բազմաթիվ սերունդներ: Նա պահանջկու էր, միաժամանակ՝ ուշադիր, հոգատարու ներող: Վայելում էր ուսանողության և համալսարանի հանակազմի հարգանքն ու սերը:

Գիտահետազոտական աշխատանքների բնագավառում ուներ իր հետաքրքրությունների շրջանակը: Նրան հոգեհարազատ էին հայկական հարցի և միջազգային հարաբերությունների պատմության իմանական հիմնահարցերը: Պատահական չէր, որ «Հայոց պատմություն» առարկայից զատ, նա այդ թեմայով կարդում էր հատուկ դասընթաց:

Ս. Ստեփանյանը եռանդուն էր, լի երիտասարդական ավունով ու կենսատու էներգիայով, իր գործը կատարում էր սիրով, անտրտունջ, պատասխանատվության զգացումով: Նա ջերմ, համերաշխ ընտանիքի և չորս արժանավոր զավակի հայր էր:

Դոցենտ Ս. Ստեփանյանի բարի անունը և լուսավոր հիշատակը միշտ վառ կմնան նրան ճանաչողների պատերում:

ՀՊՏՀ ՌԵԿՏՈՐԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՒ

# ԳՈՐԾԱՐԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՍԻՇԱՅԻՆ ՑԱՆԿԸ՝ ԸՍՏ

<http://www.hbr-russia.ru/books/-ի>

1. **Գլեբ Արխանգելսկի «Թայմ-դրայվ»**
2. **Մթիվն Ռ. Կովի «Բարձր արդյունավետության մարդկանց յոթ հմտությունները: Անհատի զարգացման հղող գործիքները»**
3. **Զիմ Քոլինզ «Լավից դեպի հզոր: Ինչո՞ւ որոշ ընկերություններ թոշք են ապրում, իսկ մյուսները՝ ոչ»**
4. **Թեոդոր Դրայվեր «Ֆինանսիստը», «Տիտանը», «Հանճարը» եռապատումը**
5. **Էլիախու Ս. Գոլդրատ, Ջեֆ Քոքս «Խպատակը՝ անընդհատ կատարելագործման գործնթաց»**
6. **Պիչարդ Բրենսոն «Կորցնելով անմեղությունը»**
7. **Դայն Ռենդ «Ատլանտը շտկեց ուսերը»**
8. **Քելլ Ա. Նորդստրեմ, Յոհաննես Ոհդեստրալե «Բիզնես ֆանկ ոճով: Կապիտալը «պար է գալիս տաղանդի դուդուկի տակ»:**
9. **Գլեբ Արխանգելսկի «Ժամանակի կազմակերպումը. անհատական արդյունավետությունից մինչև կազմակերպում»**
10. **Լի Յակովկա «Մենեջերի կարիերան»**
11. **Ու. Չան Կիմ, Ռենե Մորորն «Կապույտ օվկիանոսի ռազմավարությունը»**
12. **Ջեք Թրաուտ, Էլ Ռայս «Մարքեթինգային պատերազմներ»**
13. **Ջեք Ուել, Ջոն Բիրն «Ճեք: Տարիներ GE-ում»**
14. **Մայքլ Պորտեր «Մրցակցային առավելություն: Ինչպես հասնել մեծ արդյունքի և ապահովել նրա կայունությունը»**
15. **Զիմ Քոլինս, Ջերի Փորաս «Հավերժ կառուցվածները: Ապագան կանխատեսող ընկերությունների հաջողությունը»**
16. **Նիկոլ Մաքիավելի «Տիրակալը»**
17. **Փիթեր Սենգ «Հինգերորդ դիսցիլին: Ինքնուսուցվող կազմակերպությունների փորձն ու մշակույթը»**
18. **Կարլ Սյուել, Պոլ Բրաուն «Հաճախորդներ ողջ կյանքի համար»**
19. **Թոմաս Ջ. Փիթերս «Պատկերացրեք՝ գործարարության առավելությունները փլուզումների դարաշրջանում»**
20. **Փիթեր Ֆ. Դրուեր «Մենեջմենթի հանրագիտարան»**
21. **Սեն Ուլվոն, Ջոն Ջոլի «Պատրաստված է Ամերիկայում: Ինչպես ստեղծեցի Wal-Mart-ը»**
22. **Ջեկ Թրաուտ «Պարզության ուժը»**
23. **Մանֆրեդ Քետս դը Վրիս «Առաջնորդման միստիկան: Զգացական ինտելեկտի զարգացումը»**
24. **Փիթեր Ֆ. Դրուեր «Մենեջմենթի խնդիրները XXI դարում»**
25. **Էրիխ Ֆրոն «Ունենա՞լ, թե՝ լինել»**
26. **Գլեյբոն Մ. Քրիստենսեն «Նորարարի երկնտրանքը: Ինչպես են ուժեղ ընկերությունները «Վախճանվում» նոր տեխնոլոգիաների պատճառով»**
27. **Մալքոլմ Գլադուել «Բեկումնային պահ: Թե ինչպես են աննշան փոփոխությունները հանգեցնում ծավալուն վերափոխումների»**

Ամեն տարի տպագրվում են գործարարությանը, կառավարման և առաջնորդման հարցերին վերաբերող հազարավոր գրքեր: Դրանց մեջ օգտակարը գտնելու ամենակարծ և դյուրին եղանակն է՝ իմանալ, թե ինչ են խորհուրդ տալիս մյուսները: <http://www.hbr-russia.ru/books/> հասցեով կայքեզր ներկայացնում և առաջարկում է գործարար գրականության իր կարկանձային ցուցակը, որն ստեղծվում է ընթերցողների քվեարկությամբ:



Richard Branson  
автобиография

# ԶԱՐՄԱՆԱԼԻ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՆԱՊՈԼԵՈՆ-ՀԻՏԼԵՐ

Նապոլեոնը ծնվել է 1760 թվականին, Շիտլերը՝ 1889-ին:

Տարբերություն՝ 129 տարի:

Նապոլեոնը Վիեննա է մտել 1809 թվականին, Շիտլերը՝ 1938-ին:

Տարբերություն՝ 129 տարի:

Նապոլեոնը իշխանության գլուխ է անցել 1804 թվականին, Շիտլերը 1933-ին:

Տարբերություն՝ 129 տարի:

Նապոլեոնը պատերազմ է սկսել Ռուսաստանի դեմ 1812 թվականին, Շիտլերը՝ 1941-ին:

Տարբերություն՝ 129 տարի:

Նապոլեոնը տանու է տվել պատերազմը 1816 թվականին, Շիտլերը՝ 1945-ին:

Տարբերություն՝ 129 տարի:

Երկուսն էլ իշխանության գլուխ են անցել 44 տարեկան հասակում:

Տարբերություն՝ 129 տարի:

## ԼԻՆԿՈԼՆ-ՔԵՆԵԴԻ

Լինկոլնը ԱՄՆ-ի նախագահ է դարձել 1860 թվականին, Քենեդին՝ 1960-ին:

Տարբերություն՝ 100 տարի:

Երկուսն էլ սպանվել են իրենց կանաց ներկայությամբ:

Լինկոլնի հետնորդը Զոնսոն էր, Քենեդու հետնորդը նույնպես Զոնսոն էր:

Առաջին Զոնսոնը ծնվել է 1808 թվականին, Երկրորդը՝ 1908-ին:

Տարբերություն՝ 100 տարի:

Լինկոլնի ենթադրյալ սպանողը՝ Ուիկը, ծնվել է 1829 թվականին, Քենեդու ենթադրյալ սպանողը՝ Օսվալդը, 1929-ին:

Տարբերություն՝ 100 տարի:

Լինկոլնի քարտուղարը Եղել է Քենեդի, որը խորհուրդ է տվել սպանության օրը քատրոն չգնալ, Քենեդիի քարտուղարը Եղել է Լինկոլն, որը խորհուրդ է տվել հետաձգել Դալլասյան ուղևորությունը:



Աշխարհում ամենից շատ՝ 27 անգամ, ամուսնացել է Կալիֆորնիացի նախկին քաղաքացի, հոգևորական Գլինն Սկոտտի Ուոլֆը (ծնվ. 1908 թ.): Առաջին անգամ նա ամուսնացել է 1927 թվականին: Վերջին կինը (ծնվ. 1970 թ.) ծագումով Փիլիպինցի Դեյզի Դելգադոն էր, իսկ ամենատարեց կինը 38 տարեկան էր: Այդ ամուսնություններից ծնվել է 41 երեխա: Ուոլֆն ունեցել է ընդամենը 25 զոքանչ, որովհետև իր կանանցից երկուսի հետ ամուսնացել էր Երկրորդ անգամ:

Երեք չամուսնացած հանրահայտ մարդկանց թվում են Ջեյն Օսթենը, Բեթհովենը, Շոպենը, Էմիլի Դիբենսոնը, Շենրի Ջեյմսը, Թուլուզ Լոտրեկը, Թորոն, Վոլտերը, Շոպենիանուերը:

Աշխարհի ամենալուր վայրը հեռախոսային «Բելլ» ընկերության ձայնամեկուսիչ սենյակն է, որտեղ կլանվում է ձայնային հաճախականության 99,98 տոկոսը:

Ամենապայծառ աստղագիտական օբյեկտը հայտնաբերել է գերմանացի աստղագետ Գ. Կյուլը: Օբյեկտը գտնվում է 10 միլիարդ լուսատարի հեռավորության վրա:

Ըստ համացամցի


# ԱՄԱՆՈՐՈՎ ԶԵՎՈՒՄ Է ՏԱՐՎԱ ԱԿԻՋԲՅՈՒԹԸ ՏՈՒՄ ՈՒ ՍՊԱՍՎԱԾ ՏՈՒՄ

## ԴԻՏԵՔ. ՈՐ...

Ամանորով Զշվում է տարվա սկիզբը: Տարին ժամանակի սահմանն է, որը վերցված է բնությունից: Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Երկր մոլորակը կատարում է մեկ լրիվ պտույտ Արեգակի շուրջը: Երկրի կատարած շրջապտույտը հավասար է 934 միլիոն կիլոմետրի, որն անցնում է մեծ արագությամբ. հիշենք, որ մեկ վայրկյանում անցնում է 30 կիլոմետր: Այդ ժամանակամիջոցը կոչվում է տարի: Դրանով մարդիկ չափում են օրերը, կյանքը, իրենց գործերի պատմությունը, որպեսզի իմանան, թե ինչի են հասել տվյալ ժամանակամիջոցում՝ մեկ տարում: Տարվա գաղափարը առաջին անգամ ծագել է Հին Արևելքի մշակութային կենտրոններից մեկում՝ Եգիպտոսում: Այն կապվել է Նեղոս գետի վարարման հետ: Դրանով էին պայմանավորված Եգիպտացիների կյանքը, երկրագործական աշխատանքները: Նեղոսի վարարման սկիզբը համընկնում էր Սիրիոս աստղի երևալու հետ: Եվ ահա այդ աստղի և Նեղոսի վարարման միջև ընկած ժամանակաշրջանն էլ կոչեցին «տարի»:

Զմեռ պապիկը կամ ինչպես արևանուտքում են անվանում, Սանտա Կլաուսը, իրականում հոգևորական է եղել: Նա Ս. Նիկողայոս Հայրապետուն էր, ով ժամանակին շրջում էր տնետուն և չքավոր ընտանիքների պատուհանների գումար կամ նվերներ էր դնում:

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնվել է Փոքր Ասիայի Լիկիա գավառի Բարձրա քաղաքում (Ներկայիս Անթալիայի մոտակայքում): Փոքր հասակից նա կորցնում է մեծահարուստ և բարեպաշտ ծնողներին և մեծանում իր քեռու՝ Նիկողայոս Երեց Եպիսկոպոսի խնամքի ներքո: Ավետարանական պատգամը՝ «Կաճառիր ունեցվածքը և բաժանիր աղքատներին» (հնմտ. Մտք. Ժթ 21), իր կյանքի նշանաբանն է դարձնում՝ իր խնամքը տարածելով աղքատների, հիվանդների, բանտարկյալների և որբերի վրա: Ժողովրդի կամքով դաշնում է Զմյուռնիայի Եպիսկոպոսը: Հալածանքների ընթացքում նա աքսորվում է, սակայն չի դադարում ամենուր Ավետարանը քարոզելուց: Խաղաղություն վերահաստատվելուն պես վերադառնում է իր աթոռը, մասնակցում 325 թ. Նիկիայի Տիեզերաժողովին: Սուլր Նիկողայոս Հայրապետը մահացել է 326թ.: Ընդհանրական Եկեղեցու ամենասիրված սրբերից է՝ առավելաբար հայտնի Սանտա Կլաուս անվամբ:



Ահա թե ինչո՞ւ Զմեռ պապիկի նվերները նանուկ-ներն իրենց անմեղությամբ ընդունում են որպես պարգև Աստծուց:

Այսօրվա մեր ընդհանուր պատկերացումներում Զմեռ պապը շատ ընդիանություններ ունի ամերիկյան Սանտա Կլաուսի հետ: Իսկ հին հայերն ունեցել են իրենց Զմեռ պապը՝ հանձին Մեծ Պապուկի: Այս ավանդույթը սկիզբ է առել IV դարում և առնչվում է Սահակ Պարքի անվան հետ: Նա, որպես կանոն, ներկայանում է գավազանով, քուրքով, ոչխարի մորթով: Միգուցե Մեծ Պապուկից է ծագել նաև մեր ժամանակների «հերոս» Մեշոկ պապին:

Տարբեր ժողովուրդներ տարբեր ամիսներ են համարել տարվա առաջին ամիսը, և տարբեր է եղել նրանց նոր տարին: Այսպես, օրինակ, իին պարսիկների նոր տարին սկսվում էր գարնան օրահավասարից և կոչվում էր «Վարդի և գինու» օր: Հետագայում այն ընդունվեց մահմեդական աշխարհի կողմից և ստացավ «Նովուլգ» ամունք, որն այսօր էլ նշում են մեծ շուրջով: Ուսւները նոր տարին նշում էին սեպտեմբերի 1-ին, անգլիացիները՝ մարտի 26-ին, իսկ Ֆրանսիայում այն գուգադիպում էր Զատկի տոնին:

Հայերը նոր տարին կամ Ամանորը նշում էին տարվա առաջին ամսին՝ օգոստոսին. այն կոչվում էր «Նավասարդ»: Ամանորը հայկական դիցարանում նոր տարին անձնավորող, «նոր պտուղների ամենաբեր» համարվող աստվածն էր:

Նման բազմազանությունը ժողովուրդների տնտեսական և մշակութային փոխհարաբերություններում դժվարություններ էր առաջացնում, ուստի XVI դարի վերջերից սկսած՝ որոշվեց նոր տարվա սկիզբը համարել հունվարի 1-ը: Նոր տոնարը նաև կոչվել է Հռոմի պապ Գրիգոր 13-րդի կողմից, Հին Հույսան օրացույցի փոխարեն և կոչվել «Նոր» կամ «Գրիգորյան»: Երկու տոնարների միջև տարբերությունը կազմում է տասներեք օր:

Թեև միջազգայնորեն հունվարի 1-ը պաշտոնապես ընդունված նոր տարին է, այնուհանդերձ Միջին և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում՝ Իրանում, Աֆղանստանում, արաբական որոշ երկրներում շարունակում են պահպանել իրենց ավանդական նոր տարին:



## ԾԵՍԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Նոր տարին հայերի ամենասիրելի տոնն է: Այսօր է Հայաստանի տարբեր շրջաններում այն դիմավորում են դրսում՝ խարույկների շուրջ, որը հիշեցնում է բնապաշտական ժամանակաշրջանի հայոց Նոր տարին, երբ ժողովուրդը, ի թիվս այլ աստվածների, տուրք էր տալիս արևի Միհր աստծուն:

Հայերը մաքրում էին տունը, բակը, գոմը: Այս արարողություններին մասնակից էին ընտանիքի բոլոր անդամները: Չունվարի 1-ին բերած ջրով լվացվում էր ամբողջ ընտանիքը, որն այդ նպատակով հավաքվում էր թոնրի շուրջը: Այսօր էլ տարեմուտից առաջ ամբողջ տունը մաքրվում և թարմացվում է:

Գիշերը շատերի տներում ճրագ էր վառվուն, որպեսզի տան հաջողությունը չփախչեր: Այդ օրը խուսափում էին որևէ մեկին պարտք տալ, հատկապես՝ թթվամոր, դրամ, առհասարակ ծախս չեն անում: Առավոտյան տան դուռը առաջինը տան մեջն էր բացում, որպեսզի շատ տարիներ իր տնից անպակաս լիներ: Առավոտյան վաղ նոր բերած ջուրը հեղում էին տան անկյուններում՝ տան առատությունն ապահովելու համար: Միմյանց նվերներ էին տալիս, հատկապես մեծերը՝ փոքրերին: Տան դուռը երեք չէր փակվում:

Տարեմուտի կեսգիշերին գնում էին ջուր բերելու: Աղբյուրի մոտ լվացվում էին ջրով, կորկոտ ու լորի էին լցնում ջուրը, ջրում թրջում էին տարեհացը, անպայման ջուր էին տանում տուն: Ընդ որում, տուն էին գնում առանց հետ շրջվելու:

Երեխաների խմբերը պարելով շրջում էին փողոցներով և որևէ մեկի տանը ճոտենալիս սկսում էին երգել: Երգերի տեքստերը պարունակում էին բարեմաղթություններ, ընտանիքի անդամների գովք և տոնական ճաշատեսակների խնդրանք: Նրանք գոտիներով երդիկից փոքր պարկեր էին հիշեցնում, որոնց մեջ տան մամիկը կախված տոպարակի մեջ դնում էր մրգեր, հատուկ այդ նպատակով թխված խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն: Երեխաները, ստանալով անուշեղենները, դրանց փոխարեն հայցում էին երկնքի բարի ուժերի հաճությունը: Իսկ Անանորին աղջիկները ժապավենով իրար ամրացված կարմիր խնձորների փունջ էին ուղարկում իրենց փեսացուների տուն: Դա նշանակում էր, որ աղջիկը պատրաստ է այդ տղամարդու կինը դառնալ և նրա համար զավակներ ունենալ: Իսկ ի պատասխան աղջիկների փոխադարձ սիրո՝ տղաներն այդ խնձորի


մեջ ուկյա դրամներ էին մտցնում և ուղարկում հասցեատիրոջը:

Տոնը շնորհավորելու ավանդույթի համաձայն՝ տնեցիներն ու այցելուները տուն մտնում էին աջ ոտքը առաջինը ներս դնելով, այլապես ձախորդություններն անպակաս կլինեն: Տարվա առաջին օրը՝ լուսաբացին, տանտիկինը դրւու էր գալիս և յուղ քսում տան պատի այն հատվածին, որտեղ պիտի դիմքեր արևի առաջին շողը: Կամ կարմիր շոր էր փոռում տան շեմի դիմաց, քանի որ տան շեմը համարվել է այն ջրաժամը, որտեղ հանդիպում են բարի ու չար ուժերը: Մեղրով խաչ էին նկարում նաև գոմի պատին՝ ի նշան առատության: Ծերունիները տան դրսի պատին իրենց բնորդշող առարկաներ էին նկարում, հաճախ՝ այսուրով:

Անանորի սեղանը տարբերվում էր մերօյա տոնական սեղանից: Ավանդական Նոր տարին ուտիս օր չէ, այն պաս օր է: Եվ որքան էլ առատ լիներ սեղանը, մսեղեն կերակրատեսակները բացառվում էին: Գերապատվությունը տրվում էր հատիկենինի՝ լորի, ոսակ և այլն, չրերին, ընկուզենինին, քաղցրավենիքին: Հատիկը առհասարակ բռնոր մշակություններում խորհրդանշում է կյանքն ու պտղաբերությունը, մահն ու վերածնունդը: Անանորի սեղանի զարդն էր լորին՝ իր տարատեսակներով, հատկապես՝ Լոռիում: Լոռին իր պատյանով նման է ընտանիքի, իսկ հատիկը՝ սաղմն է, եմբրիոնը՝ կրկին նորացվող կյանքի և հավերժության գաղափարը:

Նոր տարվա կարևորագույն ուտեստն էր տարեհացը, որի մեջ դրվում էր «դովլաթը»՝ գուշակության դրամը: Տարեհացը զարդարում էին ամենատարբեր խորհրդանշներով՝ հիմնականում՝ տիեզերական, բաժանում էին 12 մասի: Ընտանիքի անդամներից ում բաժին ընկներ «դովլաթը», նրա համար էլ տարին համարվում էր հաջողակ: Հավատում էին, որ եթե տարեհացը կտրելիս դանակը դեմ առնի կոպեկին, շատ վատ բան է սպասվում եկող տարում:

Առատ էին մրգերը՝ կրկին որպես պտղաբերության և արգասավորության խորհրդանշ: Անանորի տոնածիսական համալիրի մեջ կարևորագույն տեղ են քրաղեցրել ասիլիկ-վասիլիկները կամ ուղարկի վասիլները, երբեմն՝ բասիլները: Սրանք մարդակերպ փոքրիկ գաթաներ էին, կարող էին ունենալ նաև առարկաների ու կենդանիների տեսք՝ եզների, քամիկի, կովի պտուկների: Վասիլիկները թխվում



Էհն թոնիրներում և ըստ նրանց ուռչելու, փքելու աստիճանի՝ որոշում էին, թե ինչ է լինելու հաջորդ տարում:

Դայ իրականության մեջ տոնածառ, որպես այդպիսին, չի եղել, բայց իհն հայերը ունեցել են ծառերի պաշտամունք: Քիմա էլ ծիսավայրերում զարդարվող «ցանկությունների ծառերը» հայոց իհն «տոնածառերի» մնացուկներն են:

Ցնուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ծիրապտղի կամ խնկի ծառը, ընդ որում՝ զարդերը եղել են բնության պարգևներ և բացառապես՝ բնական:

Նոր տարվա երեկոյան ծիրենու համեմատաբար հաստ ճյուղը խրել են նախապես թխված մեծ հացի կամ բաղարջի մեջ: Այդ ճյուղը «Կաղանդի ծառ» է կոչվում: Տան անդամները նախ ընկույզեղենով զարդարում էին ճյուղը, այնուհետև տանտեղը ճյուղը տանում էր եկեղեցի, քահանային օրինել տալիս, հետ բերում տուն և ամրացնում գերանին: Տոնածարի խաղալիքները հասկերից, ընկույզներից (թվով յոթ) պատրաստված զարդարանքներ էին, որոնց վրա կախվում էին չարխափաններ, ինչպես նաև՝ մարդակերպ և կենդանակերպ թխվածքներ: Նոր տարվա ծառը զարդարում էին խնձորով, որը խորհրդանշում է պտղաբերություն, ցորենի հասկերով՝ ի նշան առատության, ինչպես նաև լորու պատիճներով, որոնք ավանդաբար խորհրդանշում են ընտանիքի ամրությունը, նաև՝ մրգերով, կոպեկներով, փեղողով՝ ուղղված չարի դեմ, փոքրիկ քսակներով՝ որպես առատության ու լիության խորհրդանշ:

Կենաց ծարի կողքին կար ևս մեկ, սակայն ավելի փոքր ծառ, որի վրա մոմեր էին դրվում: Այդ ծառը կոչվում էր «Չաքալ ծառ»: Այն պարտադիր ամեն տարի կենաց ծարի կողքին պետք է դրված լիներ: Չաքալ ծարի վրա ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է իր համար մոմ վառեր:

## ՀՅՇՄԱԾ և ՀՅՇ ածՄԱԾՈԾԱ ՀԲԵՇԾԾԱԾՈԾ

**Մ**եքսիկացիները, ըստ սովորության, այն սենյակում, որտեղ հավաքվում են հյուրերը, կախում են քաղցրավենիքով լի մեծ աման, որն անվանում են Պինատ՝ զարդարված զազաների ու հրեշների նկարներով: Յուլուրի աքերը կապում են, մահակը տալիս ծեռքը: Նա, ում հաջողվում է զարդել ամանը, նոր տարվա ընթացքում առանձնապես երջանիկ կլինի:

**Ա**նգլիայում և Ուելսում նոր տարին տոնելը դարձել է երկրորդական, քանի որ Ծննդյան տոները նշում են ավելի ոգևորված ու խանդավառված:

**Գ**երմանացիների և ավստրիացիների համար հացողության խորհրդանիշ են համարվում ծիսնելույզ մաքրողն ու խոզը: Նոր տարվա օրը, եթե փողոցում ծիսնելույզ մաքրող էր երևում, բոլորը վազում էին նրա հետևից՝ աշխատելով քսվել նրան ու մրոտվել: Նոր տարվա սեղանի համար խոզ տապակելու սովորությունը մինչև հիմա էլ պահպանվել է:

**Ի**տալացիները նոր տարվա գիշերն իրենց բնակարաններից բակ կամ փողոց են նետում ճարած ամաներենը, հնացած իրեն ու կահույքը: Փոքրիկներին հեքիար են պատմում կախարդ Բեֆանի մասին, ով վառարանի ծիսնելույզով մտնում է տուն և երեխաններին նվերներ բերում:

**Ի**րանում նոր տարվա տոնը գարնան գալուստի տոնն է: Այն սկսվում է մարտի 22-ի կեսիշերին: Քաղաքներում ու գյուղերում որոտում են թնդանորների ու հրացանների կուակոնցները: Այդ պահին բոլորն իրենց ձեռքում պահում են արծարք մետաղադրամներ: Նոր տարվա արիով փոխվում է նաև տան կավե անանեղենը: Քինը ջարդում են և նորն են գնում: Տոնակատարությունը տևում է մի ամբողջ շաբաթ:

**Հ**ինավորց սովորության համաձայն՝ բիրմացիները նոր տարուն իրար վրա ջուր են լցնում դույլերով, թրջում են թե՛ ծանորներին, թե՛ անծանորներին. դրանցից ոչ չի նեղանում:

**Ր**ունաստանի որոշ գյուղերում հունվարի 8-ին իշխանությունն անցնում է կանանց ծեռքը: Այդ օրը կանայք գրաղվում են տղամարդկանց գործերով: հավ, ճագար ու գառ են մորթում, սրճարանում նատում են մի բաժակ գինու շուրջ: Տղամարդիկ հանձն են առնում խոհանոցային գործերը և երեխանների խնամքը: Դա տևում է ընդամենը մեկ օր:

**Ճ**ապոնիայում նոր տարվա կեսիշերին քաղաքների ու գյուղերի եկեղեցիների զանգերը 108 հարված են տալիս: Այդ ծայնը հայորդվում է ռադիոյով: Զանգի վերջին հարվածից հետո բոլորը քնում են, որպեսզի լուսարացն դուրս գան փողոց և նոր տարին դիմավորեն ծագող արկի առաջին ճառագայթների հետ:

**Չ**ինացիների նոր տարվա սեղանին կարծ կտրած նարգիզներ են լինում:

**Վ**կետնամցիները նոր տարվա գիշերը բարեկամներին կիսածաղկած դեղձենու ճյուղեր են նվիրում: Ընտանիքներն իրենց բարեկամներով երկար նստում են խարույկի մոտ, հեքիարներ, հետաքրքիր դեպքեր կամ պատմություններ պատմում: Ընդունված է, որ նոր տարվա օրը նրանք մեկ տարու մեծանում են:

**Ֆ**ինլանդիայում աղջիկները նոր տարվա գիշերը ուսի վրայով կոչիկ են գցում, և եթե այն ընկնում է քիթը դեպի դուռը, ուրեմն այդ տարում ամուսնանալու են: Նոր տարվա նվերները դրում են սեղանի վրա՝ շրջված ափսեների տակ:

**Պատրաստեց ՈՒՒՉԱՆ ՍԱՐԱԿԱՆԸ**

## ԱՍՏՂԱԳԻՏԱԿ

**ՄՈՂԻՐԱԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՆԱՆՉՈՒՄ** է, որ 2012 թվականի հիմնական միտումը լինելու է ունեցվածքի հետ կապված հարցերի և վեճերի հանգուցալուժում՝ սեփականության իրավունքի վերանայում՝ ձեռքբերում, կորուստ: Ցավոք, այսօրինակ իրավիճակում կարող են ծագել բախումներ, որոնք դատական ավարտ կունենան: Յետևաբար, եղեք համբերատար, ձեզանից կպահանջվի վճռականություն, կամք, ոչ ստանդարտ իրավիճակներում գործելու և որոշումներ ընդունելու կարողություն: Մի՛ մոռացեք ձեր մտերիմներին ու ընկերներին. հնարարավոր է, որ նրանք կարիք ունենան բարոյական աջակցության և օգնության:

2012 թվականի աստղագուշակում երկնային մարմինների դիրքը կայում է այն մասին, որ տարին հագեցած է լինելու անսովոր, անսպասելի դեպքերով: Նպատակների իրագործումը դյուրին չի լինելու. պատրաստվե՞ք հաղթահարելու խոչընդոտները: Նրանք, ովքեր այս ծանապարհը մինչև վերջ կանցնեն, տարեվերջին կրաղեն դրա պտուղները:

Այս աստղագուշակում դուք կգտնեք ձեզ հուզող հարցերի պատասխանները, որոնք կվերաբերն ձեր ֆինանսական կարողությանը, աշխատանքին, առողջությանը, սիրուն և ընտանեկան հարաբերություններին:

## 2012-Շ ՄԵՎ ՎԻՃԱՊԻ ՏԱՐԻ



Ըստ աստղագիտական կարևորագույն ցուցանիշ-մերի՝ ռուս աստղագուշակ և հոգեբան Պավել Գլորամ առաջարկում է 2012 թվականի ընդհամուր և անհատական աստղագուշակը՝ կենդանակերպի մշանների համար:

## ԽՈՅ



Տարվա ընթացքում ձեր առողջությունն ամուր կլիմի, մրսածությունը հիվանդության չի վերածվի:

Սպասվում է աշխատանքային առաջխաղացում, որը, սակայն, ձեզանից կպահանջի վճռական քայլեր. պետք չէ ձեռքբեր ծալած նստել: Դրական ազդեցություն կունենան նոր գործնական ծանոթությունները, որոնց հավանականությունը մեծ է տարվա առաջին կեսին:

Ֆինանսական խնդիրներում ցանկալի է խուսափել կասկածելի գործարքներից: Եկամտի հնարավոր ած կնկատվի ապրիլին ու մայիսին: Բարձր ռիսկայնության ամիսներ են նոյեմբերն ու դեկտեմբերը:

Սիրո ոլորտը կլիմի հաջողակ: Ընտանեկան գույգերը կվայելեն երկրորդ մեղրամիսը, իսկ միայնակները հնարավորություն կունենան հանդիպելու իրենց երկրորդ կեսին:

## ՑՈՒԼ



Խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել մարսողական խնդիրներին, հատկապես տոն օրերին՝ առատ սեղանների շուրջ: Օրգանիզմի դիմադրողականությունն ամրապնդելու լավագույն միջոցը առողջ կենսակերպն է:

Աշխատանքային ասպարեզում մեծ հաջողություններ ակնկալել չեք կարող. դիրքի բարձրացում հնարավոր է միայն փետրվար ամսին: Գործազուրկներն այս ժամանակամիջոցով հնարավորություն ունեն աշխատանք գտնելու: Մի՛ վիհատվեք, փոփոխությունները բարեփոխումներ են բերում:

Հնարավոր է՝ այս տարի խոշոր դրամագլուխ ստանաք. կարող է լինել ժառանգություն կամ շահում: Հունիսից դեկտեմբերին գցուշացեք ֆինանսական խնդիրներում:

Ընտանիքին ու բարեկամներին աշխատեք ժամանակ և ուշադրություն նվիրել: Անառը գերազանց ժամանակաշրջան է հարսանիքի համար:

## ԵՐԿՈՉՅԱԿ




Առողջական խնդիրներ չեն ծագի, սակայն աշխատեք ձեզ չժանրաբեռնել, այլապես վտանգ կա, որ մինչև տարեվերջ առողջության պաշարը չի բավականացնի: Պարբերաբար զբաղվեք լիցքային վարժություններով:

Աշխատանքում արճատական փոփոխությունների մի սպասեք, հավանականությունը մեծ է, որ կարող եք հարաբերությունները փշացնել գործընկերների հետ: Վերահսկե՛ք ձեր զգացմունքները:

Եկանուտները կլիմեն կայուն, ֆինանսական կորուստներ չեն գրանցվի:

Միրո հարցում առանձնակի փոփոխություններ չեն սպասվում: Անեն ինչ կընթանա հանգիստ, առանց պոռթկումների: Չանուսնացածները տարվա երկրորդ կեսին շրջապատված կլիմեն երկրպագուներով, ամուսնացածները պետք է շատ ժամանակ հատկացնեն ընտանեկան գործերին:

## ԽԵՑԳԵՏԻՆ



Մեծ թվով տոնակատարությունների ու խրախնաճների, առատ սեղանների արդյունքնում ձեր օրգանիզմը վնասներ չի կրի: Ընկճախտ և վատ տրամադրություն կառաջանան գարնանային, ամառային ամիսներին: Սակայն առողջ կենսակերպ հարցի լուծում է:

Գրավիչ իրադարձություններ և առաջխաղացման փայլուն հեռանկարներ են բացվում ձեր առջև, պահանջվում է լավ աշխատել: Տարվա երկրորդ կեսին ձեր աշխատանքը կգնահատվի: Դրամի պակաս չեք զգա, ձեռք կրերեք այն, ինչի մասին վաղուց եք երազել: Այնուհանդերձ, հաշվարկեք և պլանավորեք բոլոր ծախսերը:

Միրային ճակատում իրադարձությունների մի՝ սպասեք, սակայն հոկտեմբերին հնարավոր է ռոմանտիկ ծանրություն: Աշխատե՛ք պահը չկորցնել:

## ԱՌՅՈՒԾ



Ձեզ կրվա, թե առողջության պաշարն անսպառ է, սակայն վտանգ կա անքնության, նյարդային հյուծման, սրբեսի: Չատ ժամանակ տրամադրեք հանգստին, մի՛ լարվեք: Ամառային կազդուրումը օգտակար կլիմի:

Տարվա առաջին կեսին զգուշացեք աշխատանքային կասկածելի նախագծերի մեջ ներքաշվելուց: Երկրորդ կեսին ձեզ սպասվում է իսկական թռիչք, ի դեպ առանց առանձնահատուկ ջանքերի:

Աշխատեք պարտը չտալ, հնարավոր է հետ չստանաք: Ուշադի՛ր եղեք հարկերի վճարման, ինչպես նաև ապահովագրության և կտակի հարցերում:

Կարժանանաք հակառակ սերի ներկայացուցիչների շռայլ ուշադրությանը: Հնարավոր է՝ կիանդիպեք ձեր երկրորդ կեսին և կունենաք գլխապտույտ սիրավեպ:

## ԿՈՒՅ



Առողջական լուրջ խնդիրներ չեք ունենա: Յունվար-փետրվար ամիսներին հարկ է խմել վիտամիններ և խոտաբույսեր:

Փերովարից ապրիլ ընկած ժամանակահատվածում լուրջ հաջողություններ են սպասվում աշխատանքում և բիզնեսում: Գործընկերների հետ հարաբերություններում զգուշավոր եղեք, ձեր հաջողությունը կարող է նախանձ և անբարեհած վերաբերմունք առաջացնել:

Մագնիսի պես ձեզ եք ձգելու մեջ գումարներ: Գլխավորն այն է, որ չշռայլեք: Ավելի լավ է կուտակեք և ձեռք բերեք բնակարան, մեքենա: Գումարը պահեք անվտանգ տեղում:

Որոշ բարդություններ կլիմեն հարազատների, մտերիմների հետ հարաբերություններում, այն պատճառով, որ ավելի շատ ժամանակ եք տրամադրում աշխատանքին: Չանուսնացածների համար մեծ է իրենց կեսին գտնելու հավանականությունը:

## ԿՃԵՐՈՔ



Յիւվանդրությունները կշոշանցեն ձեզ, սակայն ցանկալի է, որ աշնանը ձեռք առնենք կամիսարգելիչ միջոցառումներ, քանի որ զգացնել կտան հոգնածությունն ու թուլությունը:

Կրաղեք նախորդ տարվա ջանասեր աշխատանքի պտուղները: Յաջողակ տարի է ստեղծագործական ու հասարակական ճանաչման համար:

Ֆինանսական հարցերում ունկնդիր եղեք ներքին ձայնին: Թեև այս իմաստով դժվարություն չեք ունենա, բայց կա խարված լինելու վտանգ: Եկանտի աճ կգրանցվի մարտապրիլին և օգոստոսին: Նոյեմբերին եղե՛ք առավել զգուշավոր:

Միրային ճակատում ամեն ինչ սահունուխաղաղ է լինելու: Ունանատիկ հարաբերություններ կձևավորվեն փետրվար-մարտ, հունիս-նոյեմբեր ժամանակահատվածում:

## ԿԱՐԻԾ



Խարուսիկ է այն վստահությունը, թե ձեր կենսական ուժերը և առողջությունն անսպառ են: Դա կարող է հանգեցնել տիած հետևանքների: Մեծ է վնասվածքների հավանականությունը: Ոխսկային խմբում են վարորդները և էքստրեմալ սպորտի սիրահարները:

Աշխատանքում առաջխաղացման հավանականությունը քիչ է: Յանենատարար բարենպաստ են մայիսը և հունիսը: Ստեղծագործական մասնագիտությունների տեր անձանց սպասվում է հաջողություն և տաղանդի համընդիանուր ճանաչում:

Ունեք բոլոր հնարավորությունները կայուն և բարձր եկամտի: Գումար կհայթայթեք տարբեր աղբյուրներից:

Ամուսնացած կարիճները կվայելեն թերեւ ու ներդաշնակ ընտանեկան կյանք, չամուսնացածները՝ հրաշալի ռոնամտիկ հարաբերություններ:

## ԱՌԵՂԱՎՈՐ



Զգույշ վերաբերվեք ձեր առողջությանը, այլապես օգսուսո-նոյեմբեր ամիսներին կսրվեն խրոնիկական հիվանդությունները: Մնվեք մրգով ու բանջարեղենով, մերսումներ ստացեք, հաճախեք լողավազան: Քիշեք՝ առողջ մարմնում՝ առողջ հոգի:

Չեզ սպասվում է ոչ թե ծառայողական ած, այլ իսկական թոփչը: Ապահովված են ձեր կայուն եկամուտը և բարգավաճումը: Ֆինանսական հարցերում առանձնապես շրջահայաց եղեք հոկտեմբերին, հնարավոր է խոշոր դրամագլուխ կորցնեք:

Տարվա երկրորդ կեսին հավանական են լուրջ բախումներ և տարածայնություններ ձեր երկրորդ կեսի հետ, որոնք հետո կհարթվեն:

## ԱՅԾԵՂՁՅՈՒԹ



Առողջական խնդիրները բարվոք կլինեն, սակայն շատ մի տարվեք աշխատանքով, որպեսզի չառաջացնեք ինքնազգացողության հետ կապված խնդիրներ՝ գլխացավ, անքնություն: Սովորե՞ք լիցքաբափվել: Յատկապես ամուսնը գերարումը ցանկալի չէ:

Աշխատանքային միօրինակությունը ծեզ այն աստիճանի կիոզնեցնի, որ տարվա երկրորդ կեսին ավելի աշխատունակ կրածնաք, ինչը կապահովի վերընթաց: Նոր պարտականությունները և պաշտոնի բարձրացումը ծեզ հնարավորություն կտան ինքնադրսւորվելու: Գործուղումներից խուսափեք գարնանը և ամուսնը:

Ֆինանսական հարցերում դժվարություններ կլինեն: Չեր նկրտումները կհանգեցնեն եկամտի նոր աղբյուրների փնտրությունը: Կենտրոնացե՞ք դրանցից ամենահեռանկարայինի վրա: Վերահսկե՞ք ծախսերը:

Սպասվում են փոփոխություններ սիրային ոլորտում: Յնարավոր է բաժանում նախկին զուգընկերոջից, սակայն հնարավոր է, որ նախկին հարաբերությունները նոր հարթություն մղվեն և ավարտվեն ամուսնությամբ: Սատարե՞ք ձեր զուգընկերոջը բարդ իրավիճակներում:

## ԶՈՅՑՈՒ



Մի՛ ծուլացեք, հետազոտվե՞ք և հետևե՞ք առողջությանը: Բուժե՞ք նյարդերը, հրաժարվե՞ք վնասակար սովորություններից և առողջ կենսակերպ վարե՞ք:

Նրանք, ովքեր ջանափարար աշխատել են նախորդ տարին և ինչ-որ բանի ծգուել, 2012թին հավանաբար կիասնեն իրենց նպատակին: Մի՛ վախեցեք փոփոխություններից, առաջ ընթացեք, աշխատեք, ուշադրություն մի դարձրեք գործընկերների նախանձին:

Յատկապես ու կայուն եկամուտները տարվա երկրորդ կեսին կատեն: Յնարավորություն կունենաք խոշոր գնում կամ ներդրում կատարելու:

Չամուսնացած ջրհոսների հաջողությունն ու ձախողումը սիրո հարցում միմյանց կհերթագայեն: Իսկ ընտանեկան կյանքը խոստանում է լինել հանգստ ու խաղաղ:

## ԶՈՒԿ



Աղեստամոքսային հիվանդությունները գլուխ կբարձրացնեն: Անհրաժեշտ է բուժվել, խուսափել հուզումներից: Յնարավոր են ալերգիկ երևույթներ: Կարգավորե՞ք սնունդը:

Վայելե՞ք ձեր սիրելի աշխատանքը: Չարժե ակնկալել լուրջ փոփոխություններ: Առաջնաբաց հավանական է տարվա երկրորդ կեսին:

Գործերում կլինեք հաջողակ, ինչը կապահովի կայուն եկամուտ: Բոլոր ձեռնարկումները լավ ավարտ կունենան: Այնպես որ, ձեռքերը ծալած մի՛ նստեք, կարող եք զբաղվել գործարարությամբ:

Յաջող ամուսնությունը ծեզ դեպքում շատ հավանական է: Ընտանեկան կյանքը խաղաղ կը նախանացած ծկները մի քանի գլխապտույտ սիրավեպ կունենան, որոնցից մեկը կարող է վերածվել ուժեղ զգացմունքի և լուրջ հարաբերությունների:

**Պատրաստեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**